

# ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



2009-2010 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԿԱ

## ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ



**ԳԱՎԱՌԻ  
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

*2009-2010 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ*

**ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

ԳԱՎԱՌ – 2010

Գավառի պետական համալսարան.  
2009-2010 ուսումնական տարվա գործունեության  
հաշվետվություն:- Երևան: Օրենք և իրականություն, 2010, 162 էջ:

Հաշվետվությունը բովանդակում է ընդհանուր տեղեկություններ համալսարանի և նրա կառուցվածքային ստորաբաժանումների մասին, ինչպես նաև ներկայացնում 2009-2010 ուսումնական տարվա գործունեությունը՝ կրթական, գիտահետազոտական, դաստիարակչական ուղղություններով:

## ԾՐԱԳՐԵՐ, ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐ, ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Երրորդ հազարամյակում ձևավորված առաջատար սոցիալական համակարգերը բնորոշվում են որպես տեղեկատվական, կրեատիվ հասարակություն՝ հիմնված գիտատար տնտեսության, նորարարության, բարձր տեխնոլոգիաների վրա: Այսօր առաջնային արժեք ու շարժիչ ուժ են գիտելիքը, գիտական, ստեղծարար միտքն ու մտավոր կարողությունները: Ուստի, հասարակության ու պետության կյանքի բոլոր ոլորտներում զարգացում ապահովելու համար պահանջվում են խորը գիտելիքներով զինված, որակյալ մասնագետներ: Իսկ դա նշանակում է, որ կրթական հաստատությունները ավանդական հատկանիշներից բացի, պետք է ձեռք բերեն արդիական որակներ, բարեփոխվեն, կիրառեն արդյունավետ գործիքներ՝ համապատասխանելով ժամանակի պահանջներին:

Չենց այս գիտակցումով է աշխատում Գավառի պետական համալսարանի վարչական, պրոֆեսորադասախոսական անձնակազմը՝ ձեռնարկելով համալիր և շարունակական միջոցներ կրթության որակի ապահովման, Բոլոնյան հռչակագրի սկզբունքների իրականացման ուղղությամբ:

Համալսարանում դասավանդվող բոլոր մասնագիտությունների գծով վերանայվել ու բարելավվել են կրթական ծրագրերը, բազային և աշխատանքային ուսումնական պլանները: Նոր ձևաչափով և կրթական էլքային արդյունքների մատնանշումով վերակազմվել, քննարկվել ու հաստատվել են բոլոր առարկայական ծրագրերը: Ծրագրերում ըստ կիսամյակների և մոդուլների նախանշվել է գիտելիքների, հմտությունների ու կարողությունների այն ծավալը, որին ուսանողը պետք է տիրապետի դասընթացի ավարտին: Ստեղծվել են մասնագիտությունների տեղեկագրքեր, կազմվել ու հրապարակվել են դասախոսի և ուսանողի, ինչպես նաև դիմորդի ուղեցույցերը: Ամբողջովին թարմացվել են կրթական գործընթացի նորմատիվ-փաստաթղթային, մեթոդաբանական հիմքերը: Մշակվել և ընդունվել, ինչպես նաև լրամշակվել ու նոր խմբագրությամբ համալսարանի գիտական խորհրդի կողմից հաստատվել են ավելի քան հիսուն կանոնակարգեր ու ընթացակարգեր, որոնք կրեդիտային համակարգի սկզբունքներին համապատասխան կարգավորում են ուսումնական գործընթացի բոլոր փուլերը, ինչպես նաև սահմանում համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների գործառույթները, իրավունքներն ու պարտականությունները: Բուհի կառավարման մարմիններում ընդգրկված են պրոֆեսորադասախոսական, վարչական անձնակազմի ներկայացուցիչներ, ուսանողներ: Գործում են արդյունավետ հետադարձ կապեր գիտական խորհրդի, ռեկտորատի, դեկանատների, ամբիոնների, ուսանողների, ինչպես նաև ծնողական համայնքի միջև: Բուհի ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման նպատակով ստեղծվել են որակի ապահովման և հանրության հետ կապերի ու լրատվության

բաժիններ, կատարվել է իրավասությունների և պատասխանատվության հստակ տարանջատում, միջոցներ են ձեռնարկվել համալսարանի ստորաբաժանումները կադրային, նյութատեխնիկական, տեղեկատվական և այլ անհրաժեշտ ռեսուրսներով ապահովելու, նրանց անխափան և փոխհամաձայնեցված աշխատանքը համակարգելու և բուհի ռազմավարական խնդիրների լուծմանն ուղղորդելու համար:

2009-2010 ուսումնական տարին նշանավորվեց նրանով, որ բուհն ավարտեցին մագիստրատուրայի շրջանավարտների առաջին և ավանդական համակարգում ուսանած բակալավրիատի վերջին սերունդները: ԳՊՀ-ն անցում կատարեց ամբողջովին կրեդիտային սկզբունքներով կազմակերպված երկաստիճան կրթական համակարգին: Համապատասխանաբար, ներդրվել են կրթության կազմակերպման նոր կառուցակարգեր, ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներ, աշխատանքներ են կատարվում սովորողների գիտելիքների ստուգման և գնահատման արդի ձևեր ու մեթոդներ կիրառելու ուղղությամբ: Անխախտ պարբերաշրջաններով կազմակերպվում է ուսումնական գործընթացը առկա և հեռակա ուսուցման համակարգերում: Հետևողական աշխատանք է տարվում ուսանողների հետ՝ ուղղված կրթության նկատմամբ գիտակից ու պատասխանատու վերաբերմունքի ձևավորմանը, աշխատասիրության, ընթերցասիրության, ջանադիր ուսումնառության, բարձր ակադեմիական առաջադիմության խրախուսմանը:

Կրթության որակի ապահովման նպատակով համալրվել է դասախոսական կազմը, ներգրավվել են ինչպես հմուտ, փորձառու, այնպես էլ երիտասարդ մասնագետներ, միջոցներ են ձեռնարկվում պրոֆեսորադասախոսական, վարչական անձնակազմի վերապատրաստման ու որակավորման բարձրացման ուղղությամբ: Կարևորվում է դասախոսների ոչ միայն մասնագիտական, մանկավարժական, այլև գիտահետազոտական գործունեությունը, նրանց մասնակցությունը հանրապետական և միջազգային գիտաժողովներին: ԳՊՀ-ում նախորդ տարում անցկացվել է տասներկուերորդ հոբելյանական գիտաժողովը՝ նվիրված մեր մեծ հայրենակից, Ռուսաստանի դաշնային միջուկային կենտրոնի գլխավոր կոնստրուկտոր, Սոցիալիստական աշխատանքի կրկնակի հերոս, ԽՍՀՄ-ում ատոմային և ջրածնային զենքի ստեղծման ու փորձարկման գործում անուրանալի ավանդ ունեցած նորբայազետցի Սամվել Քոչարյանցի ծննդյան 100-ամյակին: Գիտաժողովի նյութերը հրատարակվել են: Այժմ նախապատրաստական աշխատանքներ են կատարվում՝ տասներեքերորդ գիտաժողովի կազմակերպման նպատակով: Հաջողությամբ թեկնածուական ատենախոսություններ են պաշտպանել ԳՊՀ բանասիրական և բնագիտական ֆակուլտետների երեք գերազանցիկ շրջանավարտներ, որոնք համալսարանի նույն ֆակուլտետների դասախոսներ են:

2009-2010 ուսումնական տարում Գավառի պետական համալսարանը ակտիվորեն համագործակցել է Որակի ապահովման ազգային կենտրոնի հետ, կատարել բազմաթիվ

փաստաթղթերի նախագծերի փորձաքննություն, փորձարկել բուհերի հավատարմագրման գործընթացի համար անհրաժեշտ ինքնավերլուծության, որակի ներքին ու արտաքին ստուգման և գնահատման կառուցակարգերը: Համալսարանի իրականացրած «Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթության)» մասնագիտության կրթական ծրագիրն անցել է կամավոր հավատարմագրման գործընթաց Որակի ապահովման ազգային կենտրոնի կողմից: Հաշվետու ժամանակահատվածում կատարել ենք բուհի գործունեության ուժեղ և թույլ կողմերի, հավանական վտանգների և հնարավորությունների համալիր (SWOT) վերլուծություն, գնահատել առկա ռեսուրսները և սպասվող մարտահրավերներին դիմակայելու նպատակով որդեգրել առավել ճկուն քաղաքականություն, դիմել գործունեության նոր ձևերի ու մեթոդների, թարմացրել ու համալրել բուհի մատուցած կրթական ծառայությունների ցանկը: Ավելացել են «Հաշվապահական հաշվառում» և «Իրավագիտություն» մասնագիտությունները՝ հեռակա ուսուցման ֆակուլտետում: ԳՊՀ-ն իրականացնում է երկրորդ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր, շարունակական կրթության համակարգում առաջարկում լրացուցիչ կրթական ծառայություններ, մասնավորապես, կազմակերպում օտար լեզուների, համակարգչային, նկարչական, տպագիր և էլեկտրոնային լրագրության հիմունքներին նվիրված դասընթացներ: Մի շարք նոր մասնագիտությունների գծով կրթական ծրագրեր իրականացնելու թույլտվություն ստանալու նպատակով պատրաստվում են լիցենզիոն փաստաթղթերի փաթեթներ: Համալսարանը մասնակցել է հանրակրթական ուսումնական հաստատությունների ղեկավարման իրավունք (հավաստագիր) ստանալու համար վերապատրաստող կազմակերպությունների մրցույթին և ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից երաշխավորվել է՝ կազմակերպելու վերապատրաստման դասընթացներ:

Բուհում կարևորվում է ուսանողների և դասախոսների ակադեմիական շարժունակությունը, ինչին նպաստում է Եվրամիության կողմից ֆինանսավորվող «ERASMUS MUNDUS. Արտաքին համագործակցության պատուհան» ծրագիրը: ԳՊՀ-ն ստորագրել է նշված ծրագիրը մինչև 2013 թվականը երկարաձգելու մասին համաձայնագիր: Բուհը Հայաստանի Հանրապետությունում մանկավարժական, ինչպես նաև լեզվաբանական կրթություն իրականացնող բարձրագույն ուսումնական հաստատությունների, միջբուհական կոնսորցիումների հիմնադիր անդամներից է: ԳՊՀ զարգացման ռազմավարական հայեցակարգի բաղկացուցիչ մասն է կազմում բուհի հակակոռուպցիոն ռազմավարական ծրագիրը: Ի կատարումն նշված ծրագրի՝ ԳՊՀ-ում նշակվել և գիտական խորհրդի կողմից ընդունվել է «Ակադեմիական ազնվության հայեցակարգ»: Հայեցակարգը պարտադիր է բուհի վարչական, պրոֆեսորադասախոսական անձնակազմի և բոլոր ուսանողների համար: Հայեցակարգը հստակ սահմանել է, որ ԳՊՀ-ում անընդունելի են ակադեմիական

անագնվության բոլոր դրսևորումները, կոռուպցիոն երևույթները, իսկ բարոյական և իրավական նորմերով արգելված արարքներ կատարած անձանց համար նախատեսված են պատասխանատվության ու պատժի միջոցներ: Խախտումները քննարկելու և պատասխանատվության միջոցներ կիրառելու համար ընտրվել է ԳՊՀ դասախոսների և ուսանողների ներկայացուցիչներից բաղկացած հանձնաժողով: ԳՊՀ-ի՝ որպես հակակոռուպցիոն շարժման ջատագով բուհի փորձը ներկայացրել ենք Մակեդոնիայի Հանրապետության Սկոպիե քաղաքում կայացած «Թափանցիկ կրթական ցանց. Հակակոռուպցիոն միջոցառումներ կրթական համակարգում» թեմայով միջազգային գիտաժողովին: ԳՊՀ-ում գործում է «Թեժ գիծ», կա «վստահության արկղիկ», ստեղծվել է օբյեկտիվության ու անկաշառության, փոխադարձ հարգանքի ու վստահության վրա խարսխված աշխատանքային մթնոլորտ: Իր գործառույթներն իրականացնելիս՝ ԳՊՀ-ն համագործակցում է պետական և հասարակական ինստիտուտների, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, գիտակրթական, երիտասարդական, մշակութային կառույցների, միջազգային կազմակերպությունների հայաստանյան գրասենյակների հետ, տարեց տարի ընդլայնում իր արտաքին կապերն ու համագործակցության շրջանակները այն խորին հանգամանք, որ զարգացում ու առաջընթաց են ապահովում միայն բաց, թափանցիկ համակարգերը: Իսկ այդ համակարգի կարևոր դերակատարներն են ուսանողները, որոնց հայրենասիրական, քաղաքացիական, գեղագիտական, մշակութային, բարոյական դաստիարակության նպատակով բուհում պարբերաբար կազմակերպվում են բազմաբնույթ միջոցառումներ, ցերեկույթներ, քննարկումներ ու բանավեճեր, խրախուսվում են ակտիվ ուսանողները, կիրառվում են ուսման վարձավճարի զեղչեր, իրականացվում սոցիալական օժանդակության տարբեր ծրագրեր: Հատկանշական է, որ 2010 թվականի առկա ուսուցման ընդունելության ժամանակ ՀՀ կառավարության կողմից ԳՊՀ-ին հատկացվեցին 30 անվճար և զինծառայությունից տարկետման իրավունքով տեղեր: 2011 թվականից ինչպես բակալավրիատում, այնպես էլ մագիստրատուրայում կկազմակերպվեն անվճար և վճարովի ուսուցմամբ տեղերի փոխատեղումներ (ռոտացիա): Համալսարանում կայացել են ուսանողական ինքնակառավարման մարմինների՝ ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական ընկերության ընտրություններ, ակտիվացել է նրանց գործունեությունը: Ընդ որում, ուսանողական խորհրդի նախագահն ընտրվել է բոլոր ուսանողների կողմից՝ անմիջական ժողովրդավարության ճանապարհով: Ընտրությանը մասնակցել են ուսխորհրդի նախագահի վեց թեկնածուներ: Նախընտրական քարոզչությունը և ընտրական ողջ գործընթացը եղել է բաց, թափանցիկ՝ իրավահավասարության ու արդարության սկզբունքների պահպանմամբ: Ուսանողներն աստիճանաբար ստանձնում են իրենց ուսման և ազատ ժամանցի

կազմակերպման պատասխանատվությունը, մասնակցում ԳՊՀ ակադեմիական ազնվության հայեցակարգի պահանջների և բուհում գործող կարգապահական նորմերի կենսագործմանը: Համալսարանում ձևավորվել է աշխատանքների կազմակերպման որոշակի մշակույթ, որը միավորում է կրթական գործընթացի բոլոր դերակատարներին, ֆակուլտետներն ու ամբիոնները, ինչպես նաև ներառում գործատուների, գործընկեր կազմակերպությունների, այլ շահառուների հետ հարաբերությունները: Ծագած բոլոր խնդիրները լուծվում են բաց քննարկումների, տարբեր կարծիքների ու դիրքորոշումների հաշվառման և լավագույն տարբերակի ընտրության ճանապարհով: Յուրաքանչյուր շաբաթվա հինգշաբթի օրը գումարվում են ռեկտորատի նիստեր: Իսկ յուրաքանչյուր ամսվա վերջին շաբաթվա ընթացքում կայանում են գիտական խորհրդի նիստեր, որոնց ընթացքում ծավալվում են շահագրգիռ քննարկումներ, ընդունվում կոլեկտիվ որոշումներ համալսարանի ընթացիկ և հեռանկարային զարգացման ծրագրերի վերաբերյալ: Ըստ անհրաժեշտության՝ խորհրդակցություններն ու նիստերը հրավիրվում են ավելի հաճախ: ԳՊՀ ռեկտորատը և մյուս կառուցվածքային ստորաբաժանումներն աշխատում են «բաց դռների» քաղաքականության սկզբունքներով: Բոլոր աշխատանքային օրերին կատարվում են ուսանողների, նրանց ծնողների, դասախոսների, համալսարանի գործընկեր կազմակերպությունների ներկայացուցիչների, այլ անձանց ընդունելություններ, սահմանված կարգով ընթացք են տրվում բոլոր դիմումներին ու նամակներին: Ժամանակին ՀՀ կրթության և գիտության նախարարություն են ներկայացվում պահանջվող հաշվետվություններն ու զեկուցագրերը: Համալսարանում որոշակիորեն բարելավվել է կրթական միջավայրը, հարստացել նյութատեխնիկական բազան, համալրվել են գրադարանն ու ընթերցասրահը: ԳՊՀ-ում գործում է ներբուհական տնտեսության կազմակերպման, ֆինանսական, նյութատեխնիկական միջոցների տնօրինման հստակ ու թափանցիկ համակարգ: Աշխատանքներ են կատարվում համալսարանում էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության և գործավարության կազմակերպման, էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման ուղղությամբ: Բուհի առջև ծառայած են բազմաթիվ խնդիրներ, սակայն համալսարանում աշխատում է համախոհների նվիրյալ կոլեկտիվ, որն ունի մեծ ներուժ և անգամ սահմանափակ հնարավորությունների պայմաններում կարող է ստեղծագործ ու նպատակասլաց աշխատանքով ապահովել ցանկալի արդյունք:

Քսանմեկերորդ դարում համալսարանները ոչ միայն պետք է ստանձնեն որակյալ մասնագետների պատրաստման, գիտելիքների փոխանցման ու վերարտադրության առաքելությունը, այլև պետք է դառնան գիտահեն հասարակության առանցքն ու առաջնիչ ուժը:

**Ռ. Խ. ՀԱԿՈՒՅԱՆ**

**Գավառի պետական համալսարանի ռեկտոր**



**ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԶԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ  
ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ  
ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ**

**1.1. ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ**

<i>Դասիչ</i>	<i>Մասնագիտության անվանումը</i>	<i>Աստիճան</i>
<b><u>Բանասիրական ֆակուլտետ</u></b>		
031000	<i>Հայոց լեզու և գրականություն</i>	բակալավր, մագիստրոս
032400	<i>Ռուսաց լեզու և գրականություն</i>	բակալավր, մագիստրոս
031300	<i>Անգլերեն լեզու</i>	բակալավր, մագիստրոս
<b><u>Բնագիտական ֆակուլտետ</u></b>		
020200	<i>Կենսաբանություն</i>	բակալավր, մագիստրոս
020400	<i>Աշխարհագրություն</i>	բակալավր, մագիստրոս
020800	<i>Բնապահպանություն և բնօգտագործում (էկոլոգիա)</i>	բակալավր, մագիստրոս
230100	<i>Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա</i>	բակալավր, մագիստրոս
<b><u>Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետ</u></b>		
030400	<i>Պատմություն (իրավունքի հիմունքներ)</i>	բակալավր, մագիստրոս
051100	<i>Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթության)</i>	բակալավր, մագիստրոս
030500	<i>Իրավագիտություն</i>	բակալավր, մագիստրոս

**Տնտեսագիտական ֆակուլտետ**

080300	<i>Ֆինանսներ</i>	բակալավր, մագիստրոս
081500	<i>Հաշվապահական հաշվառում</i>	բակալավր, մագիստրոս
080600	<i>Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում</i>	բակալավր, մագիստրոս

**Հեռակա ուսուցման ֆակուլտետ**

031000	<i>Հայոց լեզու և գրականություն</i>	բակալավր, դիպլոմավորված մասնագետ
032400	<i>Ռուսաց լեզու և գրականություն</i>	բակալավր, դիպլոմավորված մասնագետ
030400	<i>Պատմություն (իրավունքի հիմունքներ)</i>	բակալավր, դիպլոմավորված մասնագետ
020400	<i>Աշխարհագրություն</i>	բակալավր, դիպլոմավորված մասնագետ
051100	<i>Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթության)</i>	բակալավր, դիպլոմավորված մասնագետ

**1.2. 2010/2011 ՈՒՍԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԱՆՑՈՂԻԿ ՄԻԱՎՈՐՆԵՐՆ՝ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏ)**

ՖԱԿՈՒԼՏԵՏ, ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	Ընդունելության քննություններ				Անցողիկ միավորներ		վերջնական միտցոմ վերաբերյալ
	մրցութային քննություններ			ոչ մրցու- թային քնն.	ստաջիտ	վիսուալ (տո)	
1	2	3	4	5	6	7	8
<b>1. Բանասիրական ֆակուլտետ</b>							
Հայոց լեզու և գրականություն	ՀԼգ (բ)	ՀԼ (գ)	ՀԺՊ(գ) կամ ՕտԼ(գ)		-	24	23
Ռուսաց լեզու և գրականություն	ՌԼգ(բ)	Լռ(գ)	ՀԼ (գ)		-	25.25	11
Անգլերեն լեզու և գրականություն	ԱնգԼ(բ)	ԱնգԼ(գ)	ՀԼ(գ)		-	25	29
<b>2. Բնագիտական ֆակուլտետ</b>							
Կենսաբանություն	Կ(գ)	Ք(գ) կամ Ֆ(գ)		ՀԼ(գ)	17.25	-	2
Աշխարհագրություն	Ա(գ)	Մ(գ)		ՀԼ(գ)	17.75	16.75	4
Էկոլոգիական քիմիա (բնապահպանություն և բնօգտագործում)	Ք(գ)	Կ(գ) կամ Ֆ(գ)		ՀԼ(գ)	-	-	-
Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա	Մ(գ)	Ֆ(գ)**		ՀԼ(գ)	18.25	17	13
<b>3. Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետ</b>							
Պատմություն (իրավունքի հիմունքներ)	ՀԺՊ(գ)	ԸՊ(գ) կամ ՕտԼ(գ)	ՀԼ(գ)		39	25.25	27
Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթության)	ՀԼ(գ)	Մ(գ)			-	16	8
Իրավագիտություն	ՀԼ(գ)	ՀԺՊ(գ)	ՕտԼ(գ)		-	25.25	40
<b>4. Տնտեսագիտական ֆակուլտետ</b>							
Ֆինանսներ	Մ(գ)	ՀԼ(գ)	ՕտԼ(գ)		38.50	26	28
Հաշվապահական հաշվառում	Մ(գ)	ՀԼ(գ)	Ա(գ)		30.25	25	9
Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում	Մ(գ)	ՀԼ(գ)	ՕտԼ(գ)		34	26.50	9

<b>5. Հեռակա ուսուցման ֆակուլտետ</b>							
Հայոց լեզու և գրականություն	ՀԼգ(բ)	ՀԼ(գ)	ՀԺՊ(գ) կամ ՕտԼ(գ)		-	24.8	31
Ռուսաց լեզու և գրականություն	ՌԼգ(բ)	ՌԼ(գ)	ՀԼ(գ)		-	24	19
Աշխարհագրություն	Ա(գ)	Մ(գ)		ՀԼ(գ)	-	16	26
Պատմություն /իրավունքի հիմունքներ/	ՀԺՊ(գ)	ԸՊ(գ) կամ ՕտԼ(գ)	ՀԼ(գ)		-	24	61
Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթության)	ՀԼ(գ)	Մ(գ)			-	16	39
Իրավագիտություն	ՀԼ(գ)	ՀԺՊ(գ)	ՕտԼ(գ)		-	24	75
Հաշվապահական հաշվառում	Մ(գ)	ՀԼ(գ)	Ա(գ)		-	25.5	38

**1.2. 2010/2011 ՈՒՍՏԱՐՎԱ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆ՝  
ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

<b>ՖԱԿՈՒԼՏԵՏ, ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ</b>	<b>Անվճար տեղեր</b>		<b>Վճարովի տեղեր ԱՏ</b>	<b>Ընդունվածների թվակազմը</b>
	<b>տարկետման իրավունքով</b>	<b>ԱՏ</b>		
<b>1. Բանասիրական ֆակուլտետ</b>				
Հայոց լեզու և գրականություն	0	1	15	8
Ռուսաց լեզու և գրականություն	0	1	15	14
Անգլերեն լեզու և գրականություն	0	1	15	5
<b>2. Բնագիտական ֆակուլտետ</b>				
Կենսաբանություն	0	1	12	6
Աշխարհագրություն	0	0	5	0
Էկոլոգիական քիմիա /Բնապահպանություն և բնօգտագործում/	0	0	12	2
Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա	0	1	15	11
<b>3. Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետ</b>				
Իրավագիտություն	1	0	20	19
Պատմություն /իրավունքի հիմունքներ/	0	1	15	6
Մանկավարժություն և մեթոդիկա /տարրական կրթության	0	0	10	1
<b>4. Տնտեսագիտական ֆակուլտետ</b>				
Ֆինանսներ	1	1	15	13
Հաշվապահական հաշվառում	1	2	15	9
Չեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում	1	1	15	7
<b>Ընդամենը</b>	<b>4</b>	<b>10</b>	<b>179</b>	<b>101</b>

## 2.«ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ

1	Հակոբյան Հրանտ Խաչատուրի	<i>փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, խորհրդի նախագահ</i>
2	Հակոբյան Հրանուշ Հրանտի	<i>ՀՀ սփյուռքի նախարար, իրավաբանական գիտությունների դոկտոր</i>
3	Մելիքյան Արմեն Ռաֆիկի	<i>ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր</i>
4	Մուկուչյան Տիգրան Տուխիկի	<i>ՀՀ վարչական դատարանի նախագահ</i>
5	Ղազարյան Էդուարդ Մուշեղի	<i>ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս, Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի ռեկտորի տեղակալ</i>
6	Շուքուրյան Յուրա Հայկի	<i>ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի փոխնախագահ, ակադեմիկոս</i>
7	Պողոսյան Նվեր Ղազարի	<i>ՀՀ Գեղարքունիքի մարզպետ</i>
8	Ղուկասյան Արտյուշա Կառլենի	<i>ՀՀ Գեղարքունիքի մարզպետի տեղակալ</i>
9	Գևորգյան Էմիլ Սոսի	<i>ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս, Երևանի պետական համալսարանի կենսաբանության ֆակուլտետի դեկան</i>
10	Խաչատրյան Աշոտ Հայկի	<i>ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի օրենսդրության զարգացման և վերլուծության վարչության պետ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր</i>
11	Խաչատրյան Վաղարշակ Վահանի	<i>Կրթության ազգային ինստիտուտի դեպարտամենտի դեկավար</i>
12	Հակոբյան Արսեն Սամվելի	<i>ՀՀ Կրթության և գիտության նախարարության ԲՀՄԿ վարչության պետի տեղակալ</i>
13	Բլբուլյան Լևոն Ռաֆիկի	<i>բանաստեղծ, լրագրող</i>
14	Կատվալյան Վիկտոր Լիպարիտի	<i>բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, Գավառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի դեկան, խորհրդի քարտուղար</i>
15	Խլղաթյան Իշխան Երեմի	<i>տնտեսական գիտությունների թեկնածու, Գավառի պետական համալսարանի «Հաշվապահական հաշվառում» ամբիոնի պրոֆեսոր</i>

- |    |                           |  |
|----|---------------------------|--|
| 16 | Մելիքյան Յենրիկ Աշոտի     | <i>տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ, Գավառի պետական համալսարանի «Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա» ամբիոնի վարիչ</i> |
| 17 | Կուտուզյան Նելլի Ալբերտի  | <i>ֆիզմաթ. գիտությունների թեկնածու, դոցենտ, Գավառի պետական համալսարանի հեռակա ուսուցման ֆակուլտետի դեկան</i>                   |
| 18 | Կարապետյան Վարազդատ Ազատի | <i>տնտեսական գիտությունների թեկնածու, Գավառի պետական համալսարանի «Ֆինանսներ և վարկ» ամբիոնի վարիչ</i>                          |
| 19 | Ոսկանյան Անուշ Ավետիքի    | <i>Գավառի պետական համալսարանի Աշխարհագրության ամբիոնի հայցորդ</i>  |
| 20 | Վարդանյան Արսեն Վրույրի   | <i>Գավառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի ուսանող</i>   |
| 21 | Սուչյան Սիրարփի Սիմոնի    | <i>Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի ուսանող</i>   |
| 22 | Դանոյան Լուսինե Գուրգենի  | <i>Գավառի պետական համալսարանի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի ուսանող</i>  |
| 23 | Նավոյան Ռուստամ Լևիկի     | <i>Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի ուսանող</i>  |
| 24 | Քիչոյան Հայարփի Լևիկի     | <i>Գավառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի ուսանող</i>   |

## ԳՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ

1	ԳՊՀ գիտական խորհրդի նախագահ՝ <b>Հակոբյան Ռուզաննա Խաչիկի</b>	ԳՊՀ ռեկտոր, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
2	ԳՊՀ գիտական խորհրդի քարտուղար՝ <b>Ասոյան Թաթուլ Արտիկի</b>	բանասիրական գիտությունների թեկնածու
3	ԳՊՀ գիտական խորհրդի անդամներ՝ <b>Ապրոյան Արսեն Հրաչիկի</b>	ԳՊՀ տնտեսական գծով պրոռեկտոր, ասիստենտ
4	<b>Ղարիբյան Ալինա Ամբիկի</b>	Ակադեմիական քաղաքականության վարչության պետ, ասիստենտ
5	<b>Կատվալյան Վիկտոր Լիպարիտի</b>	Բանասիրական ֆակուլտետի դեկան, բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ
6	<b>Ավագյան Մարտին Պատվականի</b>	Բնագիտական ֆակուլտետի դեկան, գյուղ. գիտ. դոկտոր, ԳՊՀ պրոֆեսոր
7	<b>Ղաջոյան Համլետ Գրիշայի</b>	Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկան, փիլ. գիտ. թեկնածու, ԳՊՀ դոցենտ
8	<b>Ամիրխանյան Սամվել Գրիգորի</b>	Տնտեսագիտական ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
9	<b>Կուտուզյան Նելլի Ալբերտի</b>	Հեռակա ուսուցման ֆակուլտետի դեկան, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
10	<b>Համբարձումյան Վազգեն Գուրգենի</b>	Հայոց լեզվի ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
11	<b>Գրիգորյան Վաչագան Ռաֆիկի</b>	Ընդհանուր գրականության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, ԳՊՀ պրոֆեսոր
12	<b>Բղեյան Գայանե Ֆրեդիկի</b>	Օտար լեզուների ամբիոնի վարիչ
13	<b>Մուխսիխաչոյան Արուսյակ Մուշեղի</b>	Ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ, մանկավարժական գիտությունների թեկնածու
14	<b>Սիմոնյան Արմեն Արշալույսի</b>	Կենսաբանության, բնապահպանության և առողջ ապրելակերպի ամբիոնի վարիչ, Ռուսաստանի Բնական և Էկոլոգիական գիտությունների ակադեմիաների ակադեմիկոս, կենսաբանական գիտ.դոկտոր, պրոֆեսոր
15	<b>Ավետիսյան Ֆրունզե Վազգենի</b>	Քիմիայի ամբիոնի վարիչ, քիմական գիտ. թեկ., ԳՊՀ պրոֆեսոր
16	<b>Մնացականյան Բորիս Պուտիկի</b>	Աշխարհագրության ամբիոնի վարիչ, աշխ. գիտ.դոկտոր, պրոֆեսոր
17	<b>Մելիքյան Հենրիկ Աշոտի</b>	Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկայի ամբիոնի վարիչ, տեխ. գիտ. թեկնածու, ԳՊՀ պրոֆեսոր
18	<b>Քուրբջյան Լուսիկ Ներսեսի,</b>	Հասարակական գիտությունների ամբիոնի վարիչ, մանկ. գիտ. թեկնածու, ԳՊՀ պրոֆեսոր
19	<b>Հարությունյան Համլետ Մալխասի</b>	Պատմության ամբիոնի վարիչ, պատմական գիտ. դոկտոր, պրոֆեսոր



20	Կարապետյան Վարազդատ Ազատի	Ֆինանսներ ամբիոնի վարիչ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
21	Ղուլոյան Հակոբ Մելսիկի	Հաշվապահական հաշվառում և աուդիտ ամբիոնի վարիչ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
22	Զաքոյան Հրաչյա Սամվելի	Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում ամբիոնի վարիչ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
23	Հերզոյան Մարիամ Նորիկի	տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
24	Խաչատրյան Աշոտ Հայկի	Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
25	Ավագյան Արամայիս Ռոստոմի	Աշխարհագրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր
26	Տերտերյան Վահե Ժորայի	ԳՊՀ ուսանողական խորհրդի նախագահ
27	Կարապետյան Անուշ Արևշատի	Բանասիրական ֆակուլտետի ուս. խորհրդի նախագահ
28	Խալաթյան Դիանա Հրաչիկի	Բնագիտական ֆակուլտետի ուս. խորհրդի նախագահ
29	Սկրտչյան Աննա Հայկի	Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի ուս. խորհրդի նախագահ
30	Խաչատրյան Շուշան Սպարտակի	Տնտեսագիտական ֆակուլտետի ուս. խորհրդի նախագահ
31	Դովլաթյան Նունե Գագիկի	Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի Իրավագիտություն բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհի
32	Գասպարյան Դավիթ Անդրանիկի	Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի Իրավագիտություն բաժնի 4-րդ կուրսի ուսանող
33	Բուռնուչյան Աննա Կարապետի	Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի մագիստրատուրայի Մանկավարժություն և մեթոդիկա /տարրական կրթության/ բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհի
34	Ղաջոյան Արմինե Սամվելի	Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհի

**4. ԳՊՀ «ԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՁԵՌՔ ԲԵՐԱԾ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ» ՄԵԴԱԼԱԿԻՐՆԵՐ ԵՎ ՊԱՐԳԵՎԱՏՐՎԱԾՆԵՐ**

<i>Անուն, Ազգանուն</i>	<i>Մեդալի անվանումը և հանձնաճակատը</i>	
<b>Հրանտ Խաչատուրի Հակոբյան</b>	Ֆ. Նանսենի անվան ոսկե մեդալ Երևանի պետական համալսարանի ոսկե մեդալ ՀՀ ԿԳ նախարարության ոսկե մեդալ Գիտության վաստակավոր գործչի կոչում	2006 2007 2008 2010
<b>Հրանուշ Հրանտի Հակոբյան</b>	Ժողովուրդների բարեկամության ոսկե մեդալ Ֆ. Նանսենի անվ. ոսկե մեդալ ՀՀ ԿԳ նախարարության ոսկե մեդալ Վազգեն առաջինի ոսկե մեդալ Ակսել Բակունցի անվան ոսկե մեդալ ՄԱՆՑ-ի ոսկե մեդալ Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպանի աստիճան Ֆրանսիայի Հանրապետության Արժանիքի համար շքանշան Խ. Աբովյանի անվան ոսկե մեդալ	2006      2008 2009 2009
<b>Ռուզաննա Խաչիկի Հակոբյան</b>	ՀՀ կրթության և գիտության նախարարության պատվոգիր Հայաստանի պետական ագրարային համալսարանի 80-ամյակին նվիրված հրեյանական ոսկե հուշամեդալ	2008  2010

**5. ԳՊՀ ՊԱՏՎԱԿՈՐ ԴՈԿՏՈՐՆԵՐ**

	<i>Անուն, ազգանուն</i>	<i>Երկիր</i>	<i>Դիպլոմի բնութագիրը</i>	<i>Հանձնաժամկետը</i>	<i>Դիպլոմի համարը</i>
1.	<b>Իվան Իվանչև</b>	Բուլղարիա	Հասարակական ակտիվ գործունեության համար	19.05.2000	001
2.	<b>Ռիթա Պալյան</b>	ԱՄՆ	Հայրենասիրական-մարդասիրական արդյունավետ գործունեության համար	25.05.2004	002
3.	<b>Ռոբերտ Ենգիբարյան</b>	Ռուսաստան	Գիտության ասպարեզում ձեռք բերած նվաճումների և բարեսիրական գործունեության համար	29.04.2006	003
4.	<b>Արշակ Պողոսյան</b>	Գերմանիա	Կիրառական ֆիզիկայի բնագավառում ունեցած ներդրումների, ինչպես նաև հայ-գերմանական գիտական համագործակցության ծրագրերի իրականացման համար	18.06.2008	004

## 6. ԳՊՅ ՊԱՏՎԱԿՈՐ ԲԱՐԵՐԱՐՆԵՐ

	<i>Անուն, ազգանուն</i>	<i>Երկիր</i>	<i>Դիպլոմի բնութագիրը</i>	<i>Հանձնման ժամկետը</i>	<i>Դիպլոմի համարը</i>
1.	<b>Ժիրայր Նիշանյան</b>	ԱՄՆ	Հասարակական-հայրենասիրական, բարեգործական արդյունավետ գործունեության համար	08.09.2007	01
2.	<b>Վահան Ափրոյան</b>	ՌԴ	Հայրենասիրական-մարդասիրական գործունեության համար	30.06.2008	02

## 7. ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇՆԱԿ ՍՏԱՑՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐ


	<i>Ազգանուն, անուն, հայրանուն</i>	<i>Ֆակուլտետ, մասնագիտություն</i>	<i>Կուրս</i>	<i>Կրթաթոշակի անվանումը</i>
1. 2. 3. 4. 5. 6. 7. 8. 9. 10. 11.	Գալստյան Մարիամ Գևորգի Եսայան Հեղինե Աշոտի Զաքարյան Անահիտ Սամվելի Թադևոսյան Գայանե Նորիկի Ստեփանյան Էմմա Ռուբենի Հակոբյան Տաթևիկ Խաչատուրի Վարդանյան Արսեն Վրույրի Կարապետյան Անուշ Արևշատի Հարությունյան Հասմիկ Սուրիկի Վարդանյան Ռուզան Արտակի Վարդանյան Նազելի Կամոյի	Բանասիրական, Հայոց լեզու և գրականություն	1-ին 1-ին 1-ին 1-ին 2-րդ 2-րդ 3-րդ 4-րդ 4-րդ 4-րդ 4-րդ	Ժիրայր Նիշանյան
12. 13. 14. 15. 16. 17. 18. 19.	Նազարյան Գայանե Նահապետի Սարգսյան Լիլիթ Յուրիկի Առաքելյան Մարիամ Միշայի Բաղդասարյան Վիկտորյա Մնացականի Ավետիսյան Լիլիթ Արայի Իսրայելյան Ռուզան Մարատի Մուրադյան Մարիամ Հայրապետի Գևորգյան Նունե Սամվելի	Բանասիրական, Անգլերեն լեզու  մագիստրատուրա	1-ին 1-ին 3-րդ 3-րդ 3-րդ 3-րդ 3-րդ 2-րդ	Ժիրայր Նիշանյան
20. 21.	Ղազարյան Սոնյա Սամվելի Արդյան Վարվառա Մնացականի	Բանասիրական, Ռուսաց լեզու և գրականություն	2-րդ 3-րդ	Ժիրայր Նիշանյան
22.	Դեղոյան Լիլիթ Ռաֆիկի	Բանասիրական, Ռուսաց լեզու և գրականություն	4-րդ	Թուրքմենստանի հիմնադրամ
23.	Աֆրիկյան Սեդա Խաչիկի	Բանասիրական, Անգլերեն լեզու	4-րդ	Թուրքմենստանի հիմնադրամ
24.	Ղարաբաղյան Միեր Արայիկի	Բնագիտական, Ինֆ. և հաշվ. տեխ.	1-ին	Ժիրայր Նիշանյան

25.	Բաղոյան Սևակ Սաշայի	Բնագիտական, ԻնՖ. և հաշվ. տեխ.	1-ին	Ժիրայր Նիշանյան
26.	Գասպարյան Մերի Գեղամի	Բնագիտական, Կենսաբանություն	2-րդ	Ժիրայր Նիշանյան
27.	Մարգարյան Մարիամ Սպարտակի	Բնագիտական, Աշխարհագրություն	2-րդ	Ժիրայր Նիշանյան
28.	Ստեփանյան Մարինե Վաչիկի	Բնագիտական, Աշխարհագրություն	2-րդ	Ժիրայր Նիշանյան
29.	Ավետիսյան Վարազդատ Կորյունի	Բնագիտական, ԻնՖ. և հաշվ. տեխ.	3-րդ	Ժիրայր Նիշանյան
30.	Բալազոզյան Շուշանիկ Յուրիկի	Բնագիտական, Կենսաբանություն	4-րդ	Ժիրայր Նիշանյան
31.	Արամյան Սիրանուշ Վարդանի	Բնագիտական, Կենսաբանություն	4-րդ	Ժիրայր Նիշանյան
32.	Ավետիսյան Նարեկ Ապրեսի	Բնագիտական, ՀՄ, համ. և ցանցեր	4-րդ	Ժիրայր Նիշանյան
33.	Արևշատյան Սիփան Սուրիկի	Բնագիտական, ԻնՖ. և հաշվ. տեխ.	Մագ. 1-ին	Ժիրայր Նիշանյան
34.	Դարբինյան Նաիրի Յենիկի	Բնագիտական, ՀՄ 7.ՆՎ ցանցեր	4-րդ	Ռոբերտ Ենգիբարյան
35.	Արամյան Սիրանուշ Վարդանի	Բնագիտական, Կենսաբանություն	4-րդ	Ռոբերտ Ենգիբարյան
36.	Վանեցյան Սոս Արամայիսի	Բնագիտական, ՀՄ, համ. և ցանցեր	2-րդ	Վահան Ափրոյան
37.	Մուսոյան Գոհար Հարությունի	Բնագիտական, ՀՄ, համ. և ցանցեր	3-րդ	Վահան Ափրոյան
38.	Հովհաննիսյան Նաիրի Մերուժանի	Բնագիտական, Բնապահպանության	3-րդ	Վահան Ափրոյան
39.	Մուրադյան Մայրանուշ Կառլենի		4-րդ	Թուրքիայի հիմնադրամ, Ռ. Ենգիբարյան Ռ. Ենգիբարյան Վահան Ափրոյան Վահան Ափրոյան Վահան Ափրոյան
40.	Մ Մանուկյան Լուսինե Աշոտի	Հունանիտար մասնագ.	4-րդ	
41. 42.	Յազեղյան Սոնա Սամվելի Աթոյան Սերգո Սամվելի	Իրավագիտություն	2-րդ 2-րդ	
43.	Հարությունյան Հարություն Սուրիկի	Հունանիտար մասնագ. Պատմություն /իրավ. հիմ./	մագ. 2-րդ	Ժիրայր Նիշանյան
44.	Վարդանյան Շուշան Վարդանի		3-րդ	Վահան Ափրոյան
45.	Ղաջոյան Արմինե Սամվելի	Հունանիտար մասնագ., Տարր. կրթ. մանկ. և մեթոդիկա	4-րդ	Ժիրայր Նիշանյան

46.	Նիկողոսյան Լևոն Արսենի	Տնտեսագիտական, Ֆինանսներ	1-ին	Ժիրայր Նիշանյան
47.	Աֆրիկյան Տաթևիկ Ռազմիկի		2-րդ	
48.	Կնյազյան Նարեկ Ալբերտի		2-րդ	
49.	Գևորգյան Աշխեն Աշոտի		3-րդ	
50.	Խաչատրյան Շուշան Սպարտակի		3-րդ	
51.	Կևեյան Արմեն Վահրամի		3-րդ	
52.	Ղազանջյան Քրիստինե Նորիկի		3-րդ	
53.	Վանեցյան Արթուր Արամայիսի	3-րդ		
54.	Չարվաղարյան Զեդինե Սամվելի	Տնտեսագիտական, Հաշվապահական հաշվառում	2-րդ	Ժիրայր Նիշանյան
55.	Խաչատրյան Սուսան Սպարտակի		2-րդ	
56.	Խանդանյան Նահրա Մելիքի	Տնտեսագիտական, Մագիստրատուրա Հաշվապահական հաշվառում	2-րդ	Ժիրայր Նիշանյան
57.	Բադալյան Արմինե Զրանտի	Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում	1-ին	Ժիրայր Նիշանյան
58.	Ղազարյան Էդվարդ Սարգսի		2-րդ	
59.	Հունանյան Օֆելյա Արթուրի		2-րդ	
60.	Շահբազյան Աննա Կարապետի	Տնտեսագիտական, Հաշվ. հաշվ. և աուդիտ	4-րդ	Վահան Ավրոյան
61.	Սուչյան Սիրարփի Սիմոնի	Տնտեսագիտական, Ֆինանսներ	2-րդ	Վահան Ավրոյան
62.	Մազմանյան Անի Սեդրակի	Տնտեսագիտական, Ֆինանսներ և վարկ	4-րդ	«Բարեպաշտ սերունդ» հիմնադրամ
63.	Դադոյան Մարինե Ատոմի		3-րդ	
64.	Ասատրյան Ռուզաննա Կարապետի	Տնտեսագիտական, Բիզնեսի կազմակերպում	3-րդ	«Բարեպաշտ սերունդ» հիմնադրամ
65.	Հովհաննիսյան Լուսինե Սևակի		3-րդ	

**8. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ  
(ՆԵՐԱՌՅԱԼ ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐԸ)՝ ԸՍՏ ԱՄԲԻՈՆՆԵՐԻ**

Ֆակուլտետ, ամբիոններ	Պրոֆեսորներ	Դոցենտներ	Ասիստենտներ	Դասախոսներ	Ընդամենը
<b>Բանասիրական</b>					
Հայոց լեզվի	2	3	-	5	10
Ընդհանուր գրականության	3	1	1	2	7
Ռուսաց լեզվի և գրականության	-	2	4	4	10
Օտար լեզուների	-	3	-	15	18
<b>Բնագիտական</b>					
Կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի	7	9	-	4	20
Աշխարհագրության	2	2	-	-	4
Ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի	3	6	-	2	11
Ֆիզիկամաթեմատիկական և քիմիական գիտությունների	4	4	-	1	9
<b>Հումանիտար մասնագիտությունների</b>					
Իրավագիտության	4	1	2	6	13
Պատմության	1	7	-	1	9
Հասարակական գիտությունների	3	4	1	8	16
<b>Տնտեսագիտական</b>					
Ֆինանսներ և վարկ	1	4	-	6	11
Հաշվապ. հաշվ. և աուդիտ	3	4	-	9	16
Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում	2	1	1	4	8
<b>Ընդամենը</b>	<b>35</b>	<b>51</b>	<b>9</b>	<b>67</b>	<b>162</b>



## 9. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿԱԶՄԸ

### 9.1. Բակալավրիատ

Ֆակուլտետ, մասնագիտություն	<i>Ուսանողների թիվը</i>				<i>Ընդամենը</i>
	I կուրս	II կուրս	III կուրս	IV կուրս	
<b>Բանասիրական</b>					
Հայոց լեզու և գրականություն	39	33	25	24	121
Ռուսաց լեզու և գրականություն	16	20	20	20	76
Անգլերեն լեզու	26	29	46	31	132
<i>Ընդամենը ֆակուլտետում</i>	<i>81</i>	<i>82</i>	<i>91</i>	<i>75</i>	<i>329</i>
<b>Բնագիտական</b>					
Կենսաբանություն	-	15	13	18	46
Բնապահպանություն և բնօգտագործում	-	18	14	16	48
Աշխարհագրություն	3	8	13	-	24
Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա	16	29	31	35	111
<i>Ընդամենը ֆակուլտետում</i>	<i>19</i>	<i>70</i>	<i>71</i>	<i>69</i>	<i>229</i>
<b>Հումանիտար մասնագիտությունների</b>					
Իրավագիտություն	26	36	48	53	163
Պատմություն (իրավունքի հիմունքներ)	15	20	23	15	73
Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթության)	8	17	18	5	48
<i>Ընդամենը ֆակուլտետում</i>	<i>49</i>	<i>73</i>	<i>89</i>	<i>73</i>	<i>284</i>
<b>Տնտեսագիտական</b>					
Ֆինանսներ	36	41	43	28	148
Հաշվապահական հաշվառում	16	44	28	19	107
Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում	5	19	30	15	69
<i>Ընդամենը ֆակուլտետում</i>	<i>57</i>	<i>104</i>	<i>101</i>	<i>62</i>	<i>324</i>
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>206</b>	<b>329</b>	<b>352</b>	<b>279</b>	<b>1170</b>

9.2. Մագիստրատուրա

Ֆակուլտետ, մասնագիտություն	Ուսանողների թիվը		Ընդամենը
	I կուրս	II կուրս	
<b>Բանասիրական</b>			
Հայոց լեզու և գրականություն	12	4	16
Ռուսաց լեզու և գրականություն	10	7	17
Անգլերեն լեզու	7	11	18
<i>Ընդամենը ֆակուլտետում</i>	<i>29</i>	<i>22</i>	<i>51</i>
<b>Բնագիտական</b>			
Կենսաբանություն	8	4	12
Բնապահպանություն և բնօգտագործում	2	3	5
Աշխարհագրություն	7	3	10
Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա	7	8	15
<i>Ընդամենը ֆակուլտետում</i>	<i>24</i>	<i>18</i>	<i>42</i>
<b>Հումանիտար մասնագիտությունների</b>			
Իրավագիտություն	10	16	26
Պատմություն (իրավունքի հիմունքներ)	6	4	10
Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթության)	1	3	4
<i>Ընդամենը ֆակուլտետում</i>	<i>17</i>	<i>23</i>	<i>40</i>
<b>Տնտեսագիտական</b>			
Ֆինանսներ	12	10	22
Հաշվապահական հաշվառում	7	7	14
Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում	8	3	11
<i>Ընդամենը ֆակուլտետում</i>	<i>27</i>	<i>20</i>	<i>47</i>
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>97</b>	<b>83</b>	<b>180</b>



9.3.Յեռակա ուսուցման ֆակուլտետ

Ֆակուլտետ, մասնագիտություն	<i>Ուսանողների թիվը</i>						Ընդամենը
	<i>բակալավր</i>	<i>դիպլոմավորված մասնագետ</i>					
		I կուրս	II կուրս	III կուրս	IV կուրս	V կուրս	
Հայոց լեզու և գրականություն	35	27	39	26	38	33	198
Ռուսաց լեզու և գրականություն	26	26	19	20	30	22	143
Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթության)	59	25	35	16	32	31	198
Պատմություն (իրավունքի հիմունքներ)	71	50	49	32	47	35	284
Աշխարհագրություն	38	25	32	19	34	25	173
<b>Ընդամենը</b>	<b>229</b>	<b>153</b>	<b>174</b>	<b>113</b>	<b>181</b>	<b>146</b>	<b>996</b>

## 10. ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐ

### 10.1. ԱՌԿԱ ՈՒՍՈՒՅՈՒՄ

Ֆակուլտետ, մասնագիտություն	2009թ.			2010թ.		
	բակալավր (գերազան- ցության դիպլոմով)	այդ թվում՝ նախորդ տարի- ների	Ընդա- մենը	բակալավր (գերազան- ցության դիպլոմով)	այդ թվում՝ նախորդ տարի- ների	Ընդա- մենը
<b>Բանասիրական</b>						
Հայոց լեզու և գրականություն	26(7)	-	26(7)	24(7)	-	24(7)
Ռուսաց լեզու և գրականություն	27(1)	1	27(1)	20(2)	-	20(2)
Անգլերեն լեզու	19 (2)	-	19 (2)	29 (2)	-	29 (2)
<b>Բնագիտական</b>						
Կենսաբանություն	17(2)	3	17(2)	19(2)	1	19(2)
Բնապահպանություն	21(1)	4	21(1)	13	2	13
Աշխարհագրություն	15(2)	3	15(2)	1	1	1
Հաշվ. մեթոդներ, համալիր. և ցանցեր	31(1)	1	31(1)	29(1)	2	29(1)
<b>Հումանիտար մասն.</b>						
Իրավագիտություն	42(9)	2	42(9)	53(14)	2	53(14)
Պատմություն /իրավունքի հիմունքներ/ Տարր. կրթ. մանկ. և մեթոդիկա	17(1)	-	17(1)	13(1)	2	13(1)
Տարր. կրթ. մանկ. և մեթոդիկա	11	-	11	4(2)	-	4(2)
<b>Տնտեսագիտական</b>						
Ֆինանսներ և վարկ	31(6)	4	31(6)	31(7)	1	31(7)
Հաշվ. հաշվառում և աուդիտ	25(2)	5	25(2)	22(3)	3	22(3)
Բիզնեսի կազմակերպում	25(3)	-	25(3)	14(4)	-	14(4)
<b>Ընդամենը</b>	<b>307 (37)</b>	<b>23</b>	<b>307(37)</b>	<b>272(45)</b>	<b>14</b>	<b>272(45)</b>

### 10.2. ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ

Ֆակուլտետ, մասնագիտություն	2010թ.		
	մագիստրա տուրա	այդ թվում՝ գերազանցու- թյան դիպլոմով	Ընդա- մենը
<b>Բանասիրական</b>			
Հայոց լեզու և գրականություն	4	-	4
Ռուսաց լեզու և գրականություն	7	-	7
Անգլերեն լեզու	9	3	9
<b>Բնագիտական</b>			
Կենսաբանություն	4	-	4
Բնապահպանություն	3	-	3
Աշխարհագրություն	2	-	2
Հաշվ. մեթոդներ, համալիր. և ցանցեր	8	2	8
<b>Հումանիտար մասն.</b>			
Իրավագիտություն	16	-	16
Պատմություն	4	-	4
Տարր. կրթ. մանկ. և մեթոդիկա	3	-	3
<b>Տնտեսագիտական</b>			
Ֆինանսներ և վարկ	9	1	9
Հաշվ. հաշվառում և աուդիտ	7	-	7
Բիզնեսի կազմակերպում	3	-	3
<b>Ընդամենը</b>	<b>79</b>	<b>6</b>	<b>79</b>

10.3. ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՅՈՒՄ

Ֆակուլտետ, մասնագիտություն	2009թ.			2010թ.		
	դիպլոմավորված մասնագետ (գերազան- ցության դիպլոմով)	այդ թվում՝ նախորդ տարիների	Ընդա- մենը	դիպլոմավորված մասնագետ (գերազան- ցության դիպլոմով)	այդ թվում՝ նախորդ տարիների	Ընդա- մենը
Հայոց լեզու և գրականություն	29 (2)	2	29 (2)	22	-	22
Ռուսաց լեզու և գրականություն	31 (2)	3	31 (2)	20 (3)	2	20(3)
Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա	28	-	28	28	5	28
Պատմություն	26	6	26	27	3	27
Աշխարհագրություն	14	1	14	21(1)	3	21(1)
<b>Ընդամենը</b>	<b>128 (4)</b>	<b>12</b>	<b>128(4)</b>	<b>118(4)</b>	<b>13</b>	<b>118(4)</b>

## 1.1. ՊՐԱԿՏԻԿԱ

N	Ֆակուլտետ, Ամբիոններ	Կուրս	Պրակտիկայի բնույթը	Խանութում շրջանված	Անցկացման վայրը
1	<b>Բանասիրական</b>				
	Հայոց լեզու և գրականություն	III	մանկավարժական	5	Գեղարքունիքի մարզի դպրոցներ
	Ռուսաց լեզու և գրականություն	IV	մանկավարժական	6	Գեղարքունիքի մարզի դպրոցներ
	Անգլերեն լեզու	IV	մանկավարժական	4	Գեղարքունիքի մարզի դպրոցներ
	մագիստրատուրա				
	Հայոց լեզու և գրականություն	II	գիտամանկավարժական	4	Գավառի պետական համալսարան
			գիտահետազոտական	4	Գավառի պետական համալսարան
	Ռուսաց լեզու և գրականություն	II	գիտամանկավարժական	4	Գավառի պետական համալսարան
			գիտահետազոտական	4	Գավառի պետական համալսարան
	Անգլերեն լեզու	II	գիտամանկավարժական	4	Գավառի պետական համալսարան
			գիտահետազոտական	4	Գավառի պետական համալսարան
2	<b>Բնագիտական</b>				
	Կենսաբանություն	II	ուսումնական	3	Գավառի մերձակա տարածք, «Սևան» ազգային պարկ, Երևանի բուսաբանական և կենդանաբանական այգի, Գավառի մերձակա տարածք, «Սևան» ազգային պարկ, Երևանի բուսաբանական և կենդանաբանական այգի, ՀՀ հանրակրթական դպրոցներ
		III	արտադրական	3	
		IV	նախադիպլոմային (մանկավարժական)	4	
	Բնապահպանություն և բնօգտագործում	II	ուսումնական	3	Գավառագետի ափամերձ տարածք, Գավառի մերձակա տարածք, Երևանի բնապահպանական թանգարան, Երևանի կեղտաջրերի մաքրման կայան, Երևանի «Նաիրիտ» գործարան ՓԲԸ, ՀՀ բնապահպանության նախարարության շրջակա

		III	արտադրական	3	միջավայրի մոնիտորինգի կենտրոն, Լուսակերտի թռչնաբուժական ֆաբրիկա, «Սևան» ազգային պարկ, Գավառի մերձակա տարածք,
		IV	նախադիպլոմային (մանկավարժական, արտադրական)	4	Գավառագետի ափամերձ տարածք, ՀՀ հանրակրթական դպրոցներ, ՀՀ մարզպետարաններ, «Սևան» ազգային պարկ
Աշխարհագրություն		I	ուսումնական	5	Գավառի մերձակա տարածք, Սարիկայա հրվանդանի տարածք,
		II	ուսումնական	5	Գավառ-Սևան-Շորժա-Վարդենիս-Մարտունի-Գավառ, Գավառի մերձակա տարածք,
		III	արտադրական	2	Գավառագետի դելտա, Խարամային կոներ, Գավառ-Դիլիջան-Հաղարծին-Գոշավանք-Գավառ, Գավառի մերձակա տարածք, Եռաբլուրների տափաստան, Գավառ-Աշտարակ-Բյուրական-Ամբերդ-Գավառ, Գավառ-Հանքավան-Գավառ
Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա	III	արտադրական	4	Գավառի պետական համալսարան, "Ռադիո" ՊՓԲԸ, Գավառի պետական համալսարան	
	IV	նախաավարտական	2		
<b>3</b>	<b>Հունանիտար մասն.</b>				
	Իրավագիտություն	IV	նախադիպլոմային	8	Ընդհանուր իրավասության դատարաններ, մարզային դատախազություն, ՀՀ դատական դեպարտամենտ, ՀՀ ոստիկանության Երևանի քաղաքային վարչություն,
Պատմություն /իրավ. հիմ./		IV	մանկավարժական, ուսումնական	10	ՀՀ հանրակրթական դպրոցներ, ՀՀ հանրակրթական դպրոցներ
		III	ուսումնական մանկավարժական, ուսումնական	5 2	
	Տարր. կրթ. մանկ. և մեթոդիկա	IV	մանկավարժական	10	Գեղարքունիքի մարզի դպրոցներ,

		III	մանկավարժական	6	Գեղարքունիքի մարզի դպրոցներ,
		III	ուսումնական	2	Գավառի ուսուցողական կենտրոն
4	<b>Տնտեսագիտական</b>				
	Ֆինանսներ և վարկ	III	ուսումնական	4	ՀՀ ԿԱ տարածքային հարկային տեսչություն, բանկային համակարգ, առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններ ՏԻՄ և Տարածքային կառավարման մարմիններ, Վիճակագրական վարչություն, Առևտրաարդյունաբերական պալատ, Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն
		IV	արտադրական	12	
	Հաշվապահական հաշվառում և աուդիտ	III	ուսումնական	4	Վիճակագրական վարչություն, ՏԻՄ և Տարածքային կառավարման մարմիններ, Առևտրաարդյունաբերական պալատ, ՀՀ ԿԱ տարածքային հարկային տեսչություն, առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններ, «Քյավառ» աուդիտ, բանկային համակարգ, Զբաղվածության մարզային կենտրոն
		IV	արտադրական	12	
	Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում	III	ուսումնական	4	Առևտրաարդյունաբերական պալատ, ՀՀ ԿԱ տարածքային հարկային տեսչություն, առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններ, VIVA CELL MTS, BEELINE
		IV	արտադրական	12	
5	<b>Հեռակա ուսուցման</b>				
	Հայոց լեզու և գրականություն	VI	մանկավարժական	8	ՀՀ հանրակրթական դպրոցներ
	Ռուսաց լեզու և գրականություն	VI	մանկավարժական	8	ՀՀ հանրակրթական դպրոցներ
	Մանկավարժություն և մեթոդիկա /տարրական կրթության/	VI	մանկավարժական	8	ՀՀ հանրակրթական դպրոցներ
	Պատմություն /իրավունքի հիմունքներ/	VI	մանկավարժական	8	ՀՀ ուսումնական հաստատություններ
	Աշխարհագրություն	VI	մանկավարժական	8	ՀՀ հանրակրթական դպրոցներ

## 12. ՀԱՏՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ֆակուլտետ, ամբիոններ	Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ծեռնարկ	Ուսումնամեթո- դական ծեռնարկ	Հոդված	Ձեկուց- թեզիսներ
<b>Բանասիրական</b>						
Հայոց լեզվի		1			13	1
Ընդհանուր գրականության		2			10	
Օտար լեզուների	6				6	
Ռուսաց լեզվի և գրականության				1	5	
<b>Բնագիտական</b>						
Կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի	1		2	1	56	30
Աշխարհագրության	1		2	1	12	
Ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի			1	2	9	
Ֆիզիկամաթեմատիկական և քիմիական գիտությունների			2	1	14	2
<b>Հումանիտար մասնագիտությունների</b>						
Իրավագիտության		1			22	2
Պատմության /իրավունքի հիմունքներ/		1			12	
Հասարակական գիտությունների	1				16	
<b>Տնտեսագիտության</b>						
Ֆինանսներ և վարկ					2	
Հաշվապահական հաշվառման և աուդիտ		1			10	
Չեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում					1	
<b>Ընդամենը</b>	<b>9</b>	<b>6</b>	<b>7</b>	<b>6</b>	<b>188</b>	<b>35</b>

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

### *Գավառի պետական համալսարանի միջազգային կապերը և փոխանակման ծրագրերը*

2009-2010 ուսումնական տարում Գավառի պետական համալսարանը ERASMUS MUNDUS. EXTERNAL COOPERATION WINDOW ծրագրի շրջանակներում շարունակել է համագործակցությունը ծրագրի մասնակից եվրոպական բուհերի հետ՝ բակալավրի կրթական ծրագրով սովորող երկու ուսանողների ուսումը շարունակելով Սալոնիկի Ալեքսանդրի անվան տեխնիկական համալսարանում (ATEI of Thessaloniki) և Պորտուգալիայի Վիանա դո Կաստելոյի պոլիտեխնիկական ինստիտուտում (Polytechnic Institute of Viana do Castelo):

2009-2010 ուսումնական տարում մագիստրոսի կրթական ծրագրով սովորող 1 ուսանող 20 ամսով մեկնել է Հունաստանի ATEI of Thessaloniki համալսարան՝ ուսումը շարունակելու նպատակով: Կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի 1 դասախոս նշված ուսումնական տարում իր հետազոտական աշխատանքը կատարել է Պորտուգալիայի Վիանա դո Կաստելոյի պոլիտեխնիկական ինստիտուտում: Օտար լեզուների ամբիոնի մեկ լաբորանտ 10 ամսով մեկնել է Բուլղարիայի Ռուսեի համալսարան (University of Ruse)՝ հետազոտողի կրթական ծրագրով սովորելու համար:

2009-2010 ուսումնական տարում Գավառի պետական համալսարանը շարունակել է համագործակցությունը Վրաստանի Թելավիի, Թբիլիսիի և Բաթումիի պետական համալսարանների հետ:

2010թ. մայիսի 5-ին Գավառի պետական համալսարանը կնքել է համաձայնագիր և ներքոհիշյալ բուհերի հետ միասին հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունում լեզվաբանական կրթության իրականացման և լեզվաքաղաքականության մշակման բարձրագույն ուսումնական հաստատությունների ցանցային համագործակցության կոնսորցիումի հիմնադիր անդամ՝

Երևանի Վ. Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարան,  
Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ,  
Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ:



**Գավառի պետական համալսարանի կողմից իրականացվող միջազգային և ներպետական համագործակցություն, ուսանողների և դասախոսների փոխանակում**

Հաստատության ավանդումը	Համագործակցության ոլորտը	2008-2009 ուստարի	2009-2010 ուստարի
<b>“ERAZMUS-MUNDUS. ԱՐՏԱՔԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՏՈՒՅԱՆ” ծրագրի շրջանակում համագործակցող բուհեր</b>			
1 Ալեքսանդրի անվան Սալոնիկի տեխնոլոգիական համալսարան (Հունաստան)	Միջբուհական համագործակցություն, ուսանողների և դասախոսների փոխանակման ծրագրեր, գիտական հոդվածների համատեղ տպագրություն	2 ուսանող	2 ուսանող
2 Ռեգելնեի համալսարան (Լատվիա)		1 ուսանող	
3 Ռուսսեի համալսարան (Բուլղարիա)			1 հետազոտող
4 Վիանա դո Կաստելոյի պոլիտեխնիկական ինստիտուտ (Պորտուգալիա)			1 ուսանող 1 դասախոս
5 Տուլոնի համալսարան (Իտալիա)		1 դասախոս	
6 Պարմայի համալսարան /Իտալիա/			
7 Ի. Գոգեբաշվիլու անվան թելավի պետական համալսարան			
<b>ՀՈՒՇԱԳԻՐ ՄԻՋՐՈՒՅԱԿԱՆ ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄ ԱՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ</b>			
1 Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարան	Միջբուհական կոնսորցիում՝ Բուլոնիայի համաձայնագրի դրույթների համակարգված ներդրման նպատակով փոխհամաձայնեցված գործունեության ծրագրերի իրականացում	Վ	Վ
2 Գյումրիի Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ		Վ	Վ
3 Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ		Վ	Վ
4 Ֆիզիկական կուլտուրայի Հայկական պետական ինստիտուտ		Վ	Վ
5 Գորիսի պետական համալսարան		Վ	Վ
6 Արցախի պետական համալսարան		-	Վ
7 ՀՀ ԿԳ նախարարության կրթության ազգային ինստիտուտ		Վ	Վ
<b>ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԼԵԶՎԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ԲԱՐՉՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄԻ ԱՏԵՂԾՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ</b>			
1 Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարան	Լեզվաբանական կրթության իրականացմանը և լեզվաքաղաքականության մշակմանը միտված համագործակցություն	-	Վ
2 Գյումրիի Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ		-	Վ
3 Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ		-	Վ
Սևանի պետական քոլեջ	Շարունակական	Վ	Վ
Մարտունու պետական քոլեջ	մասնագիտական կրթության	Վ	Վ
Վարդենիսի պետական քոլեջ	ապահովում	-	Վ

Երևանի պետական գյուղատնտեսական քոլեջ		V	V	
ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակ	Կողմերի միջև ինստիտուցիոնալ համագործակցություն		V	V
Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն	Բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի որակի համապատասխանության ապահովում՝ պետական կրթական և եվրոպական չափորոշիչներին, կրթության որակի բարելավում և միջազգային ասպարեզում ՀՀ մասնագիտական կրթության որակի ճանաչում: “Մասնագիտության ինքնավերլուծության ձևաչափ” փաստաթղթի դրույթների կիրառելիության փորձարկում	-	V	
„Ղ-Տելեկոմ” ՓԲԸ, “ԱրմենՏել” ՓԲԸ, “ՀԱՅԲԻՋՆԵՍԲԱՆԿ” ՓԲԸ, “Սևան ազգային պարկ” ՊՈԱԿ, Գավառի երկրագիտական թանգարան, Գավառի ուսուցողական կենտրոն	Ուսանողների ուսումնական, արտադրական և նախադիպլոմային պրակտիկաների անցկացում, մասնագիտական առարկաների գծով ակնարկային դասախոսությունների և սեմինար - քննարկումների կազմակերպում, համատեղ հետազոտական աշխատանքների և այլ ծրագրերի իրականացում	-	V	
Ջինիշյան հիշատակի հիմնադրամ	Համագործակցություն “Քաղաքացիական Երկխոսություն և Գործնական Քայլեր” 2010-212 թթ. ծրագրի շրջանակներում՝ ուսանողների քաղաքացիական ակտիվության և իրազեկության բարձրացման նպատակով	V	V	

**2009-2010 ուսումնական տարում ԳՊՀ պրոֆեսորադասախոսական կազմը և ուսանողները գործուղվել են հետևյալ արտասահմանյան գիտահետազոտական և ուսումնական հաստատություններ ու մասնակցել գիտաժողովների.**

• **Հակոբյան Հրանուշ Հրանտի**

2009թ. սեպտեմբեր - Երևան, «Հայ իրավական միտքը և XXI դարի մարտահրավերները» խորագրով գիտաժողով,

2009թ. հոկտեմբեր - Երևան, Հայ սրտաբանների եվրասիական համաժողով,

2010թ. ապրիլ - Երևան, «Հայ ինքնության որակների պահպանումը խառնամուսնություններում» թեմայով գիտաժողով,

2010թ. հուլիս – Երևան, «Արևմտահայերենի ուսուցման վիճակը սփյուռքում» թեմայով գիտաժողով,

2010թ. սեպտեմբեր – Երևան, «Բիզնեսը և արվեստը: Արվեստը և ինտերնետը» խորագրով գիտաժողով,

2010թ. սեպտեմբեր – Երևան, Հայաստանի բուհերի սփյուռքահայ շրջանավարտների համաժողով,

2010թ. հոկտեմբեր – Ստեփանակերտ, «XXI դարում տեղեկատվական անվտանգության ապահովման հիմնախնդիրները և հայ լրագրությունը» խորագրով գիտաժողով,

1. 2010թ. հոկտեմբեր – Երևան, Հայ բանկիրների և ֆինանսիստների գիտագործնական սեմինար:

• **Հակոբյան Ռուզաննա Խաչիկի**

24.09.2009թ.-26.09.2009թ. – Մակեդոնիայի Հանրապետություն, Սկոպիե, «Թափանցիկ կրթական ցանց. Հակակոռուպցիոն միջոցառումներ կրթական համակարգում» թեմայով միջազգային գիտաժողով:

13.11.2009թ.-16.11.2009թ. – ԼՂՀ, Ստեփանակերտ, Արցախի պետական համալսարանի 40-ամյա հորեյանին նվիրված միջազգային գիտաժողով,

26.04.2010թ.-28.04.2010թ. – ՀՀ, Աղավնաձոր, «Հետբուհական և շարունակական կրթության հիմնախնդիրները» թեմայով միջազգային գիտաժողով,

16.08.2010թ.-21.08.2010թ. – Պորտուգալիա, Պորտո, Վիանա դո Կաստելո, Վիանա դո Կաստելոյի պոլիտեխնիկական ինստիտուտում՝ «Erasmus Mundus. Action 2» ծրագրի շրջանակում միջազգային գիտաժողով:

• **Ապրոյան Արսեն Հրաչիկի**

1. 07.09.2009թ.-11.09.2009թ. – Վրաստանի Հանրապետություն, Թելավի, Թելավիի պետական համալսարան, կոնֆերանս «Erasmus Mundus ECW (Lot 6)» միջբուհական համագործակցության ծրագրում ընդգրկված բուհերի ներկայացուցիչների մասնակցությամբ,

2. 20.11.2009թ.-30.11.2009թ. – Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետ, Փախստականների հիմնախնդիրներին նվիրված 5-րդ գիտաժողով՝ կազմակերպված ՄԱԿ-ի փախստականների գծով հանձնակատարի գրասենյակի (UNHCR) կողմից:

• **Եղիազարյան Ազատ Կոմունարի**

2010թ. ապրիլ – Անգլիա, դասախոսությունների շարք Օքսֆորդի համալսարանում «Չարենցի ստեղծագործությունների մասին» թեմայով:

• **Դարբինյան Անելյա Անդրանիկի**

12.10.2009թ.-15.10.2009թ. – Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանին կից Կրթական որակի հավատարմագրման ինստիտուտ, վերապատրաստման դասընթացներ (անցկացվել է Վ. Բրյուսովի անվան Երևանի պետական լեզվաբանական համալսարանում):

• **Մուխախաչյան Արուսյակ Մուշեղի**

12.10.2009թ.-15.10.2009թ. – Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանին կից Կրթական որակի հավատարմագրման ինստիտուտ, վերապատրաստման դասընթացներ (անցկացվել է Վ. Բրյուսովի անվան Երևանի պետական լեզվաբանական համալսարանում):

• **Միքայելյան Ռուզաննա Խրիստաֆորի**

12.10.2009թ.-15.10.2009թ. – Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանին կից Կրթական որակի հավատարմագրման ինստիտուտ, վերապատրաստման

դասընթացներ (անցկացվել է Վ. Բոյունովի անվան Երևանի պետական լեզվաբանական համալսարանում):

- **Միրիբյան Գայանե Աշոտի**

12.10.2009թ.-15.10.2009թ. – Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանին կից Կրթական որակի հավատարմագրման ինստիտուտ, վերապատրաստման դասընթացներ (անցկացվել է Վ. Բոյունովի անվան Երևանի պետական լեզվաբանական համալսարանում):

- **Գրիգորյան Արմեն Ազատի**

12.10.2009թ.-15.10.2009թ. – Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանին կից Կրթական որակի հավատարմագրման ինստիտուտ, վերապատրաստման դասընթացներ (անցկացվել է Վ. Բոյունովի անվան Երևանի պետական լեզվաբանական համալսարանում):

- **Ջակոբյան Արսեն Աշոտի**

1. 07.09.2009թ.-11.09.2009թ. – Վրաստան, Վալեի սահմանային ուսումնասիրությունների միջազգային հետազոտության դպրոց (գիտական հետազոտություններ և վերապատրաստում),

2. 27.03.2010թ.-29.03.2010թ. – Մեծ Բրիտանիա, Քենթրիջի համալսարան, Սլավոնական և արևելաեվրոպական ուսումնասիրությունների բրիտանական ասոցիացիայի տարեկան գիտաժողով, զեկույց «Թուրքիայի հայերը Յուլիսային Կովկասում. ինքնության սահմանները» թեմայով,

3. 11.04.2010թ.-14.04.2010թ. – Ռումինիա, Բուխարեստ, միջազգային գիտաժողով «Կովկաս և Բալկաններ» թեմայով, «Չայ քաղքեղոնիկները Կովկասից Բալկաններ. պատմության և ինքնության ուրվագիծ» (զեկուցում):

- **Փանոսյան Յովիկ Յարությունի**

1. 12.05.2010թ.-19.05.2010թ. – Ավստրիա, Վիեննա, Book of Abstracts. EuroFedLipid and FEBS Workshop: Microbial Lipids, From Genomics to Lipidomics. (զեկուցում),

2. 2010թ. հունվար – Сборник тезисов “Биология-наука XXI века”, XIV международная Пушкинская школа, конференция молодых ученых, Пушино (զեկուցում),

3. 2010թ. փետրվար – Բուլղարիա, Պլովդիվ, Biotechnol & Biotechnol. Eq., Special edition (Second Balkan Conference on Biology: 50 Years university of Plovdiv. (զեկուցում),

4. 12.09.2010թ.-19.09.2010թ. – Պորտուգալիա, Պոնտա Դելգադա, Azores Book of Abstracts. 8<sup>th</sup> International Congress on Extremophiles. (զեկուցում),

5. 27.06.2009թ.-03.07.2009թ. – Շվեդիա, Գոթենբուրգ, Abstracts of 3<sup>rd</sup> Congress of European Microbiologists FEMS2009: Microbes and Man-interdependence and future challenges. (զեկուցում):

- **Մուրադյան Մարիամ Չայրապետի** (Անգլերեն լեզու բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի)

24.09.2009թ.-26.09.2009թ. – Մակեդոնիայի Չանրապետություն, Սկոպիե, «Թափանցիկ կրթական ցանց. Չակակոռուպցիոն միջոցառումներ կրթական համակարգում» թեմայով միջազգային գիտաժողով:

- **Ղարազյոզյան Արամ Արմենի** (Բիզնեսի կազմակերպում բաժնի 3-րդ կուրսի ուսանող)

01.07.2010թ.-08.07.2010թ. – ՌԴ, Սանկտ Պետերբուրգ, SELIGER-2010 համառուսաստանյան կրթական ֆորում:

**2009-2010 ուստարում համալսարանի դասախոսական կազմի վերապատրաստումներ**

h/h	Ազգանուն, անուն	Վայրը	Մեկնարկի ամսաթիվ և տարեթիվ	Ավարտի ամսաթիվ և տարեթիվ
1	<b>Մուխսիխաչոյան Արուսյակ</b>	Վ. Բրյուսովի անվան ԵՊԼՀ-ում, Լոնոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանին կից Կրթական որակի հավատարմագրման ինստիտուտ	12.10. 2009	15.10. 2009
2	<b>Միրիբյան Գայանե</b>	Վ. Բրյուսովի անվան ԵՊԼՀ-ում, Լոնոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանին կից Կրթական որակի հավատարմագրման ինստիտուտ	12. 10. 2009	15. 10. 2009
3	<b>Դարբինյան Անեյա</b>	Վ. Բրյուսովի անվան ԵՊԼՀ-ում, Լոնոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանին կից Կրթական որակի հավատարմագրման ինստիտուտ	12. 10. 2009	15. 10. 2009
4	<b>Միքայելյան Ռուզաննա</b>	Վ. Բրյուսովի անվան ԵՊԼՀ-ում, Լոնոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանին կից Կրթական որակի հավատարմագրման ինստիտուտ	12. 10. 2009	15. 10. 2009
5	<b>Գրիգորյան Արմեն</b>	Վ. Բրյուսովի անվան ԵՊԼՀ-ում, Լոնոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանին կից Կրթական որակի հավատարմագրման ինստիտուտ	12. 10. 2009	15. 10. 2009
6	<b>Ավագյան Մարտին</b>	Պորտուգալիա, Վիանա դո Կաստելոյի պոլիտեխնիկական ինստիտուտ	01.03.2010	31.03.2010
7	<b>Տիգրանյան Սաթենիկ</b>	Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարան	17. 06. 2010	19. 06. 2010
8	<b>Հայթյան Սաթենիկ</b>	Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարան	17. 06. 2010	19. 06. 2010
		Հայաստանում ֆրանսիական համալսարան	28. 06. 2010	02. 07. 2010

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 2009-2010 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ  
ՏԱՐՎԱ ՈՒՍՈՒՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2010-2011 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ  
ՉԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ**

**Ուսումնագիտական գծով պրոռեկտոր՝ Ն.Ա. Կուտուզյան**

Գավառի պետական համալսարանի զարգացման ռազմավարական նպատակներն իրականացնելու համար հաշվետու ուսումնական տարում համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումները կատարել են ծավալուն աշխատանք՝ հետևյալ ուղղություններով.

1. ուսումնական գործընթացի կազմակերպում, բուհում իրականացվող կրթական ծրագրերի գնահատում, վերանայում և կատարելագործում,
2. գիտահետազոտական, գիտամեթոդական աշխատանքների խրախուսում և համակարգում,
3. կրթադաստիարակչական աշխատանքների, ուսանողական ակտիվ կյանքի կազմակերպում, ուսանողների հետազոտական, ստեղծագործական ունակությունների զարգացում,
4. համալսարանի միջազգային համագործակցության շրջանակների ընդլայնում, հանրության հետ կապերի ամրապնդում:

2009-2010 ուստարում համալսարանի ուսանողական կազմի համալրման ցուցանիշներն են.

ա/ 2009 թվականի առկա ուսուցման ընդունելության 322 դիմորդներից միասնական և կենտրոնացված քննությունների արդյունքներով համալսարան է ընդունվել 206 դիմորդ,

բ/ հեռակա ուսուցման ընդունելության 234 դիմորդից՝ քննությունների արդյունքով համալսարան է ընդունվել 229 դիմորդ,

գ/ 2009 թվականի մագիստրատուրայի ընդունելության առաջին փուլով համալսարան դիմած 123 շրջանավարտներից 121-ը ստացել է ատեստավորող հանձնաժողովի դրական կարծիքը, երկրորդ փուլում դիմած 7 շրջանավարտներից ընդունելության քննությունների արդյունքներով համալսարան է ընդունվել 6-ը,

դ/ երկրորդ մասնագիտություն ստացող ուսանողների քանակը կազմում է 10 ուսանող,

ե/ հանրապետության և արտերկրի պետական բուհերից Գավառի պետական համալսարան է տեղափոխվել 6 ուսանող,

զ/ ուսանողական իրավունքները վերականգնել է 135 ուսանող:

Ուսումնական տարվա սկզբին ուսանողների թիվն առկա բակալավրիատում կազմում էր 1170, մագիստրատուրայում՝ 180, հեռակա ուսուցման համակարգում՝ 996, ընդամենը՝ 2346 ուսանող: 2010-2011թթ. նույն ժամանակահատվածում՝ առկա բակալավրիատում՝ 1077, մագիստրատուրայում՝ 159, հեռակա ուսուցման համակարգում՝ 1099, ընդամենը՝ 2335 ուսանող:

Հաշվետու ուսումնական տարում ուսանողների ակադեմիական առաջադիմության ցուցանիշներն են.

ա/ առաջին կիսամյակում առկա բակալավրիատում և մագիստրատուրայում ուսանողների առաջադիմությունը կազմել է 68.8 %, հեռակա ուսուցման համակարգում՝ 80,2 %,

բ/ երկրորդ կիսամյակում՝ համապատասխանաբար 69,3 % և 56,3 %:

Վերջին տարիներին հրամայական անհրաժեշտություն է դարձել որակյալ, մրցունակ և շարժունակ մասնագետների պատրաստումը, ուստի կարևորվում են ուսանողների մասնագիտական պատրաստության որակի գնահատման նոր մեխանիզմների, կրթական ժամանակակից տեխնոլոգիաների մշակումն ու ներդրումը: Կրթական միջավայրի զարգացման համար պահանջվում է առկա իրավիճակի ուսումնասիրություն, վերլուծություն, արտաքին և ներքին հնարավորությունների ճիշտ գնահատում: Հաշվետու ուստարին բնորոշվում է որպես բուհի ինստիտուցիոնալ և ծրագրային ներքին աուդիտի ժամանակաշրջան, որը զուգորդվեց «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից՝ հավատարմագրման գործընթացին նախապատրաստվելու նպատակով առաջարկված, «Հարցաշար 1», «Հարցաշար 2», «Հարցաշար 3» փաստաթղթերի լրացման հետ: Կատարվեցին ինստիտուցիոնալ և ծրագրային վերլուծություններ՝ ըստ հետևյալ ուղղությունների.

բուհի առաքելությունը,

ղեկավարումը,

կառավարումը,

ակադեմիական ծրագրերը,

դասավանդող անձնակազմը, ուսանողները,

ուսումնառության ռեսուրսները, համապատասխան ծառայությունները,

ֆիզիկական հարմարությունները,

ֆինանսական ռեսուրսները:

Բուհում ուսման որակի գնահատման, մշտադիտարկման և բարելավման նպատակով համալսարանի խորհրդի որոշմամբ Ակադեմիական քաղաքականության վարչության կազմում ստեղծվեց Որակի ապահովման բաժինը: Միասնական կանոնակարգային հենք ունենալու,

ինչպես նաև կրթական նոր տեխնոլոգիաների ներդրման և կիրարկման նպատակով փոփոխվեցին և լրամշակվեցին համալսարանում ընդունված մի շարք կանոնակարգեր, միաժամանակ, մշակվեցին և հաստատվեցին հետևյալ նոր կանոնակարգերը.

Գավառի պետական համալսարանում ուսուցանվող մասնագիտության կրթական ծրագրի մշակման, հաստատման, իրականացման ընթացքի մշտադիտարկման և բարելավման ընթացակարգ,

Գավառի պետական համալսարանում կրթության որակի ապահովման քաղաքականության մշակման և իրականացման, կրթական ծրագրերի որակի ներքին ապահովման ընթացակարգ,

Գավառի պետական համալսարանում կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների ապահովման և ուսումնամեթոդական բազայի բարելավման ընթացակարգ,

Գավառի պետական համալսարանում սովորողների ուսումնառության արդյունքների բարելավման քաղաքականության մշակման և իրականացման ընթացակարգ,

Գավառի պետական համալսարանում ուսուցման մեթոդների գնահատման և բարելավման ընթացակարգ,

Գավառի պետական համալսարանի դասախոսի աշխատանքի նկարագիր,

Գավառի պետական համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի մասնագիտական որակների գնահատման և դրանց բարձրացման ընթացակարգ,

Գավառի պետական համալսարանում ակադեմիական ինտեգրման ընթացակարգ,

Գավառի պետական համալսարանի շրջանավարտների զբաղվածության ապահովմանը նպաստելու քաղաքականության հիմնական ուղղությունները,

Գավառի պետական համալսարանի ակադեմիական ազնվության հայեցակարգ:

Այս և մյուս կանոնակարգերն ու ընթացակարգերը թղթային և էլեկտրոնային տարբերակներով տրամադրվել են համալսարանի բոլոր կառուցվածքային ստորաբաժանումներին, տեղադրվել են համալսարանի կայքէջում, հնարավորություն է ստեղծվել հանրության լայն զանգվածներին, շահառուներին, դիմորդներին համացանցի միջոցով ծանոթանալու ներհամալսարանական իրավական ակտերին:

Փոփոխվեց և լրամշակվեց ԳՊՀ գիտխորհրդի կողմից 2007 թվականին ընդունված «Գավառի պետական համալսարանի բակալավրի և մագիստրոսի կրթական աստիճաններում կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման և ուսանողների գիտելիքների գնահատման կարգը»: Ըստ այդմ, վերանայվեցին 2010 թվականին և հետագա տարիներին համալսարան ընդունված բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների ավարտական որակավորման պահանջները: Մինչև ծրագրի ամփոփիչ ատեստավորումն



ընկած ժամանակահատվածը միջին որակական գնահատականի համար նվազագույն ներքին շեմ սահմանվեց բակալավրիատում՝ 2,0, իսկ մագիստրատուրայում՝ 2,3 ցուցանիշները: Նշված փոփոխությունը միտված է ուսանողների ակադեմիական առաջադիմության բարձրացմանը:

ՀՀ կառավարության որոշմամբ 2010 թվականին ԳՊՀ բակալավրիատում առաջին անգամ պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ 30 տեղ հատկացվեց: Համապատասխանաբար, ուժը կորցրած ճանաչվեց ԳՊՀ գիտական խորհրդի 2006 թ. սեպտեմբերի 30-ի որոշմամբ հաստատված «Գավառի պետական համալսարանի ուսանողների ուսման վճարը ուսանողական նպաստի ձևով մասնակի փոխհատուցելու կարգը» և հաստատվեց նոր կարգ՝ ուսման վճարի լրիվ փոխհատուցման, ինչպես նաև անվճար և վճարովի տեղերի փոխատեղման կանոնների ներառմամբ: Լրամշակվեցին Գավառի պետական համալսարանի ուսանողներին ակադեմիական արձակուրդի տրամադրման, ինչպես նաև վերականգնման, պետական ավարտական քննություններից անբավարար գնահատականներ ստացած ուսանողներին վերահանձնման թույլտվության կարգերը: Նախատեսվեց, որ պետական ավարտական քննություններից կամ ավարտական աշխատանքի պաշտպանությունից անբավարար գնահատական ստացած կամ չներկայացած ուսանողը հաջորդ ուսումնական տարիներին ստանում է վերահանձնման թույլտվություն՝ միայն համալսարանի ատեստավորող հանձնաժողովի դրական եզրակացության հիման վրա:

2009-2010 ուստարում համալսարանի առկա բակալավրիատի ավարտական կուրսերի 284 ուսանողներից բուհն ավարտեց 272-ը /այսինքն՝ 95,7%-ը՝ նախորդ տարվա 93%-ի դիմաց/, 12 ուսանող պետական ավարտական քննություններից անբավարար գնահատական ստանալու պատճառով հեռացվեց համալսարանից: Շրջանավարտների 17%-ը բուհն ավարտեց գերազանցությամբ /2008-2009 ուստարում՝ 12%-ը/, մագիստրատուրայի ավարտական կուրսերի 82 ուսանողներից՝ մագիստրոսական թեզերի հաջող պաշտպանությամբ, 79-ը ստացավ մագիստրոսի որակավորում, և համալսարանի բոլոր մասնագիտությունների գծով մագիստրատուրան ավարտեց ավարտական կուրսի ուսանողների 96,3%-ը, հեռակա ուսուցման համակարգում ավարտական կուրսերի 159 ուսանողներից 41-ը ստացավ անբավարար գնահատական և բուհն ավարտեց ուսանողների 74,2%-ը /2008-2009 ուստարում՝ 80,5%-ը/:

Մասնագիտական կրթության որակի վրա ազդող գործոնների վերլուծության, քանակական և որակական բնութագրիչների տևական ժամանակահատվածում կատարված ուսումնասիրությունների արդյունքները կարող են հիմք հանդիսանալ ուսումնական

գործընթացի ճիշտ պլանավորման, արդյունավետ կազմակերպման և ցանկալի արդյունքների ապահովման համար:

Հաշվետու ուստարում մասնագիտական կրթական ծրագրերում երկաստիճան համակարգում նախատեսված պարտադիր, լրացական, ուսանողի կողմից ընտրովի կրթամասերի բոլոր դասընթացները և մոդուլները՝ բովանդակության նկարագրությունից բացի ներկայացվեցին կրթական ելքային արդյունքների միջոցով: Կրթական ծրագրերի ելքային արդյունքները ներկայացվեցին կոմպետենցիաների ձևով, նախատեսվեցին սպասվող գիտելիքները, կարողությունները և հմտությունները: Առաջին անգամ 2010 թվականին Գավառի պետական համալսարանում 13 մասնագիտությունների գծով մագիստրատուրայի շրջանավարտներին շնորհվեց ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված համաեվրոպական նմուշի դիպլոմի հավելված՝ հայերեն և անգլերեն լեզուներով:

Անդամակցելով ՀՀ-ում մանկավարժական կրթություն իրականացնող բուհերի կոնսորցիումին՝ ԳՊՀ դասախոսների ակտիվ մասնակցությամբ մշակվեցին և հաստատվեցին մագիստրոսի գիտահետազոտական և գիտամանկավարժական, բակալավրի մանկավարժական պրակտիկաների ծրագրերը, սահմանվեցին գնահատման ձևերը, մշակվեց պրակտիկաների վարման փաստաթղթային փաթեթը: Մասնագիտական աշխատանքային խմբերում կազմակերպվեցին մասնագիտությունների կրթական չափորոշիչների մշակման աշխատանքները: Արդյունքում, պատրաստվեցին «Մանկավարժություն և մեթոդիկա /տարրական կրթության/» մասնագիտության բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի նոր սերնդի կրթական չափորոշիչները, որոնք հաստատվեցին և դրվեցին կիրառության մեջ: Միասնական փաստաթղթաշրջանառության ապահովման նպատակով վերանայվել և ընդհանուր տեսքի են բերվել համալսարանի ձևաթղթերը, ներքին օգտագործման փաստաթղթերը, դասամատյանները, ակադեմիական տեղեկագրերը, անհատական ծրագրերը, դասիչավորվել են բոլոր դասընթացներն ու կրթական այլ մոդուլները՝ ըստ կրթական աստիճանների, ինչպես նաև ըստ ուսումնական պլանում դասընթացի զբաղեցրած կրթամասի՝ պարտադիր, ուսանողի կողմից ընտրովի, լրացական: Բոլոր մասնագիտությունների գծով ստեղծվել է մասնագիտության տեղեկագիրք, որը բովանդակում է կրեդիտային համակարգի դրույթները, ուսումնական պլանները, առարկայական նկարագրերը: Ուսանողների, դիմորդների, գործատուների շրջանում մասնագիտությունների լուսաբանման նպատակով հրապարակվել են «Դիմորդի ուղեցույց»-ը, «Բակալավր ուսանողի ուղեցույց»-ը, «Մագիստրոս ուսանողի ուղեցույց»-ը: ԼՂՀ կրթական համակարգի զարգացմանը միտված ծրագրերի շրջանակում ԳՊՀ-ում մշակված ուղեցույցերը, ինչպես նաև «Գավառի պետական համալսարանի բակալավրի և մագիստրոսի կրթական աստիճաններում կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման և ուսանողների գիտելիքների

գնահատման կարգը» տրամադրել ենք Արցախի պետական համալսարանին: Արցախ են ուղարկվում նաև համալսարանի ամենամյա գիտական ժողովածուները: Հետևողական աշխատանքներ են կատարվել պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության գնահատման մեխանիզմներ մշակելու, դասախոսական կազմի մասնագիտական աճին նպաստելու, դասավանդման բարձր որակ ապահովելու և հետազոտական աշխատանքների ակտիվությունը խրախուսելու, դասախոսների տվյալների էլեկտրոնային երկլեզու բազա ստեղծելու և այլ ուղղություններով: 2009-2010 ուստարում Գավառի պետական համալսարանում հիմնական և ժամավճարային կարգով աշխատել է 157 դասախոս, նրանցից 10-ը՝ դոկտորներ են, 70-ը՝ գիտությունների թեկնածուներ: Գիտական աստիճաններ ունեցող դասախոսների թիվն ընդհանուրի մեջ կազմում է 50,9% /պետական բուհերում հանրապետական միջինը կազմում է 46%, 2006թ. ԳՊՀ ցուցանիշը եղել է 42%/: Ուսանող-դասախոս հարաբերակցությունը կազմում է 14,9-ը /հանրապետական միջինը՝ 10,95/: Պրոֆեսորադասախոսական կազմը պարբերաբար մասնակցում է վերապատրաստումների և որակավորման բարձրացման ծրագրերի:

Հաշվետու ուստարում գիտական աստիճաններ և կոչումներ են ստացել ԳՊՀ շրջանավարտ, համալսարանի հայոց լեզվի ամբիոնի դասախոս Վարսիկ Ներսիսյանը /բանասիրական գիտությունների թեկնածու/, իսկ ԳՊՀ գիտական խորհրդի երաշխավորությամբ՝ ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից պատմության ամբիոնի դասախոս Արմեն Ղարաբյոզյանին շնորհվել է դոցենտի, ընդհանուր գրականության ամբիոնի վարիչ Վաչագան Գրիգորյանին՝ պրոֆեսորի գիտական կոչումներ:

Կրթական ծրագրերի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ պահանջների բացահայտման և առկա վիճակի գնահատման, ուսումնական ռեսուրսների պլանավորման կանոնակարգված գործընթաց ծավալելու նպատակով՝ հաշվառվեց համալսարանի գրադարանային-տեղեկատվական հագեցվածությունը: Համալսարանի գրադարանի գրքերի ընդհանուր թիվը կազմում է՝ 36900 կտոր, որից դասագրքերի քանակը՝ շուրջ 260 /ընդհանուր հաշվով 4 ուսանողին 1 դասագիրք համամասնությամբ, 2006 թ. 7 ուսանողին՝ 1 դասագիրք ցուցանիշի դիմաց/: Գրադարանը մշտապես վերազինվում է նաև մեր դասախոսների հեղինակած աշխատանքներով, որոնք տարեցտարի ավելի բազմաքանակ են դառնում: Հաշվետու ուստարում ԳՊՀ գիտական խորհրդի որոշմամբ երաշխավորվել են տպագրության մեր դասախոսների հետևյալ աշխատանքները.

Վ. Առաքելյան, Հ. Ղուլոյան, Ս. Մարտիրոսյան՝ «Անվանացանկային ռազմավարության մշակման հիմնախնդիրները շուկայի պայմաններում» /գիտական աշխատանք/,

Վ. Կատվալյան՝ «Քավառա խանաք-չանաք» /գիտահանրամատչելի աշխատանք/,

Օ. Հովհաննիսյան՝ «Աշխատանքային իրավունքի խնդիրների ժողովածու»,

Ա. Թաղևոսյան՝ «Մեթոդական ցուցումներ բնապահպանության բաժնի ուսանողների պրակտիկական կազմակերպելու համար» /մեթոդական ձեռնարկ/,

Թ. Ասոյան՝ «Ժամանակակից հայոց լեզու. շարահյուսություն» /մեթոդական ուղեցույց/,

Թ. Ասոյան, Վ. Կատվալյան՝ «Գիտելիքների նվազագույն պաշար» /մեթոդական ուղեցույց/,

Ա. Սինոնյան, Ի. Բատիկյան՝ «Անգլերեն-ռուսերեն-հայերեն կենսաբանական բառարան»:

2009-2010 ուստարում Երևանի պետական համալսարանից, այլ գիտակրթական հաստատություններից ԳՊՀ գրադարանին շուրջ 1000 կտոր մասնագիտական գրականության նվիրատվություն է կատարվել: Ուսումնական ռեսուրսների հասանելիությունը ապահովելու և օգտագործման հնարավորությունները ընդլայնելու նպատակով բուհը կիրառում է հեռահաղորդակցման ժամանակակից միջոցներ: Ուսանողները օգտվում են նաև էլեկտրոնային գրադարանային պաշարներից: Ուսանողների և դասախոսների համար կան 96 համակարգիչներ՝ համացանցի օգտագործման հնարավորությամբ, սակայն առայժմ համակարգչային բազան բավարար չէ և համալրման խիստ կարիք կա:

Նախորդ ուստարում ԳՊՀ գիտխորհրդի որոշմամբ անվանակոչվել են լսարաններ մեր անվանի հայրենակիցների՝ Ս. Քոչարյանցի, Ա. Ազնավուրյանի, ինչպես նաև Շ. Շահամիրյանի պատվին:

Հատկանշական է, որ 2009թ. հոկտեմբերին մասնակցել ենք ՀՀ կրթության և գիտության նախարարության «Կրթության որակ և համապատասխանություն. վարկային առաջին ծրագրի ամփոփում և երկրորդ ծրագրի մեկնարկ» համաժողովին: Մանկավարժական կրթության բարեփոխումների ծրագրի շրջանակներում «Կրթական ծրագրերի կենտրոն» պետական հիմնարկին ներկայացրել ենք Գավառի պետական համալսարանին սարքավորումների և գույքի տրամադրման վերաբերյալ առաջարկ: Ձեռք է բերվել նախնական պայմանավորվածություն համալսարանին տրամադրելու 21 համակարգիչ, MF բազմագործոնային սարք, 1 լուսացրիչ, 21 հոսանքի անխափան ապահովման սարք, 1 տեղական ցանց, 21 սեղան, 41 աթոռ, 21 համակարգչային սեղան: Նույն ծրագրի շրջանակում մասնակցել ենք «Որակի ապահովման ներբուհական համակարգի ներդրման կամ դրանց հետագա բարելավման նպատակով բուհերին դրամաշնորհների տրամադրման» ղեկավարման ձեռնարկի նախագծի մշակման աշխատանքներին, ծրագրել ենք իրականացնել մանկավարժական կադրերի վերապատրաստման գործընթաց:

«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան՝ մշակվեց և ՀՀ ԿԳ նախարարություն ներկայացվեց փաստաթղթային փաթեթ՝ առկա ուսուցման համակարգում մագիստրոսի որակավորման աստիճանով բոլոր մասնագիտությունների գծով, ինչպես նաև հեռակա ուսուցման համակարգում բակալավրի որակավորման աստիճանով «Իրավագիտություն» և «Հաշվապահական հաշվառում» մասնագիտությունների գծով գործունեության թույլտվություն ստանալու նպատակով:

ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով տրվեց գործունեության թույլտվություն առկա և հեռակա ուսուցման ձևերով, բոլոր մասնագիտությունների գծով:

Հեռակա ուսուցման համակարգում «Իրավագիտություն» և «Հաշվապահական հաշվառում» մասնագիտությունների՝ դիմորդների շրջանում եղած պահանջն ակնհայտ էր 2010թ. հեռակա ուսուցման ընդունելության ընթացքում /դիմորդների թիվն էր՝ «Իրավագիտություն»՝ 77, «Հաշվապահական հաշվառում»՝ 41/:

Հաշվետու ուստարում համալսարանը պատրաստականություն հայտնեց «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն»-ի առաջարկով, բուհում անցկացնել մեկ մասնագիտության գծով փորձնական հավատարմագրման առաջին՝ ինքնավերլուծության փուլը՝ համատեղ մշակելով գործողությունների ծրագիրը և ժամանակացույցը, ինքնավերլուծության ձևաչափը, ուսման որակի ստուգման գործիքակազմը և այլ փաստաթղթեր: Հաշվի առնելով այն փաստը, որ կրթական ծրագրերի իրականացման գործընթացում արդյունավետության ապահովման ուղենիշ է հանդիսանում ինքնավերլուծությունը՝ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի «Մանկավարժություն և մեթոդիկա /տարրական կրթության/» բաժնի համար կատարվեց ինքնավերլուծություն, ստեղծվեց կրթական ծրագրի որակի ապահովման բնութագրիչ տվյալների բազա՝ կրթական ծրագրի որակի վերաբերյալ հաշվետվություններ, վերլուծական զեկույցներ, հարցումների և այլ միջոցառումների ձևաթղթեր ու արձանագրություններ, ուսումնասիրությունների տվյալներ, ատեստավորող հանձնաժողովների հաշվետվություններ, ուսանողների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի հետ քննարկումների արդյունքներ, կրթական ծրագրի վերաբերյալ գործատուների, արտաքին և ներքին շահառուների կարծիքներ: Ինքնավերլուծությունը՝ որպես որակի ներքին ապահովման մեկնակետ, օգնեց նաև համեմատվելու նմանատիպ այլ հաստատությունների հետ, ինչը հնարավորություն կտա գտնել և տեղայնացնել ուսումնագիտական գործունեությունը բարելավելու նոր եղանակներ: Ինքնավերլուծության ձևաչափը լրացնելուց հետո ԳՊՀ աշխատանքային խումբը ներկայացրեց կրթական ծրագրի իրականացման գործընթացի SWOT վերլուծություն՝ մատնանշելով բուհի ուժեղ, թույլ կողմերը, արտաքին սպառնալիքները և հնարավորությունները: Ձեկույցի ներկայացումից հետո Որակի ապահովման ազգային

կենտրոնի մասնագետները կատարեցին փորձագիտական այցեր, որոնց ընթացքում համադրվեցին ներկայացված և առկա բոլոր ցուցանիշները, կատարեցին դասալսումներ, ինչպես նաև ուսանողների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի հետ քննարկումներ: Նշենք, որ ամփոփ զեկույցում կենտրոնի մասնագետների կողմից ԳՊՀ-ին տրվեց բարձր գնահատական:

Հաշվետու ուտարում շարունակվեց համալսարանի համագործակցությունը գիտակրթական, հասարակական կազմակերպությունների հետ, կնքվեցին նոր երկկողմ պայմանագրեր, ստորագրվեցին փոխըմբռնման և գործընկերության հուշագրեր, գործընկերների կողմից եղան առաջարկներ կրթական ծրագրերի փոփոխությունների, բարելավումների վերաբերյալ:

2010թ. մայիսի 5-ին Գավառի պետական համալսարանը կնքեց համաձայնագիր՝ դառնալով Հայաստանի Հանրապետությունում լեզվաբանական կրթության իրականացման և լեզվաքաղաքականության մշակման բարձրագույն ուսումնական հաստատությունների ցանցային համագործակցության կոնսորցիումի անդամ՝ Երևանի Վ. Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանի, Գյումրու Մ. Նալբանդյանի և Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտների հետ միասին: Շարունակական մասնագիտական կրթության ապահովման ոլորտում շարունակվել է համագործակցությունը Սևանի, Մարտունու պետական քոլեջների, Երևանի պետական գյուղատնտեսական քոլեջի հետ և կնքվել է պայմանագիր նաև ԳՊՀ-ի ու Վարդենիսի պետական քոլեջի միջև: Ուսանողների ուսումնական, մանկավարժական, արտադրական պրակտիկաների անցկացման, երիտասարդ մասնագետների համար նորագույն տեխնոլոգիաների միջոցով տեսական և գործնական գիտելիքների ամրապնդման և խորացման նպատակով՝ հաշվետու ուտարում կնքվել են պայմանագրեր «Ղ-Տելեկոմ», «ՀԱՅԲԻՉՆԵՍԲԱՆԿ», «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերությունների, «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի, Գավառ քաղաքի Երկրագիտական թանգարանի, Գավառի Ուսուցողական կենտրոնի, Երևանի, Գեղարքունիքի և հանրապետության մյուս մարզերի 98 հանրակրթական դպրոցների հետ:

2009-2010 ուսումնական տարում Գավառի պետական համալսարանը «ERASMUS MUNDUS. ԱՐՏԱՔԻՆ ՀԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՏՈՒՀԱՆ» ծրագրի շրջանակներում շարունակել է համագործակցությունը ծրագրի մասնակից եվրոպական բուհերի հետ:

2009-2010 ուսումնական տարում ԳՊՀ պրոֆեսորադասախոսական կազմը և ուսանողները գործուղվել են ինչպես հանրապետական, այնպես էլ արտասահմանյան գիտահետազոտական և ուսումնական հաստատություններ և մասնակցել գիտաժողովների:

Հաշվետու ուտարում համալսարանում կազմակերպվեց ամենամյա 12-րդ գիտաժողով՝ նվիրված մեր անվանի հայրենակից, մեծանուն ճարտարագետ-գիտնական,

սոցիալիստական աշխատանքի կրկնակի հերոս Սամվել Քոչարյանցի 100-ամյակին: Գիտաժողովի ընթացքում զեկույցներով հանդես եկան և՛ համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի, և՛ համագործակից բուհերի ներկայացուցիչներ: Երկօրյա գիտաժողովի նյութերը՝ 82 գիտական աշխատանքներ, տպագրվեցին:

2009-2010 ուստարում բազմաթվանդակ աշխատանքներ են կատարվել հանրության հետ կապերի և լրատվության բաժնի, ուսանողական խորհրդի, ինչպես նաև ուսանողական գիտական ընկերության կողմից: Մշակվեց և հաստատվեց ԳՊՀ ուսանողական խորհրդի նախագահի ընտրությունների անցկացման ընթացակարգը: Ակտիվացել է ուսանողական ինքնակառավարման մարմինների փոխհամաձայնեցված գործունեությունը՝ տարաբնույթ միջոցառումների կազմակերպման, հանրապետության երիտասարդական կառույցների, հասարակական կազմակերպությունների հետ համատեղ ծրագրերի իրականացման, ընկերական փոխօգնության, ուսանողության գիտական, ստեղծագործական, հոգևոր և մասնագիտական զարգացման ուղղություններով: Կազմակերպվել են ֆակուլտետային և միջֆակուլտետային գիտաժողովներ:

***2010-2011 ուստարում Գավառի պետական համալսարանի ուսումնագիտական զարգացման հայեցակարգ***

Մասնագիտական կրթության որակի ապահովման նպատակը պահանջում է համալիր միջոցառումների ձեռնարկում: Կրթական գործունեության բովանդակային, մեթոդական, կադրային ապահովումը, աշխատաշուկայի կողմից մասնագետներին ներկայացվող պահանջները և բուհի ինքնավերլուծության արդյունքները անհրաժեշտ են դարձնում բուհի ուսումնագիտական աշխատանքների արդյունավետության բարձրացումը: Համալսարանի զարգացման ռազմավարական ծրագրին համապատասխան՝ կիրականացվեն հետևյալ աշխատանքները.

**Ուսումնամեթոդական աշխատանքներ**

1.1. Իրականացնել կրթական ծրագրերի բովանդակային և կառուցվածքային փոփոխություններ՝ ուղենիշ ունենալով որակավորումների եվրոպական շրջանակի չափանիշները: Հաշվի առնել ուսանողների, շրջանավարտների, գործատուների շրջանում նախորդ ուստարում կատարված հարցումների արդյունքները: Շահառուների պահանջները, գործատուների կողմից արված առաջարկությունները ներառել ուսումնական պլաններում և առարկայական ծրագրերում՝ կրթության արդիականացման, շրջանավարտների մասնագիտական առաջխաղացման հնարավորությունների

ընդլայնման նպատակով: Ուսումնական պլանների լավարկման նպատակով հաշվետու ուստարում հարցումներ ենք կատարել և առաջարկություններ ստացել Գավառի ավագ դպրոցի, Գեղարքունիքի մարզի Լճափի միջնակարգ դպրոցի, Գեղարքունիքի առևտրաարդյունաբերական պալատի, Երևանի ավտոմատ կառավարման համակարգերի գիտահետազոտական ինստիտուտի, ՀՀ ԳԱԱ Հ.Բունիաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտի, «Սևանի ազգային պարկ» ՊՈԱԿ-ի և այլ կազմակերպությունների կողմից:

- 1.2. Բակալավրի կրթական աստիճանում բոլոր մասնագիտությունների գծով ապահովել ելքային արդյունքների լրակազմը՝ գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևով, լրանշակել մագիստրոսական կրթական ծրագրերի արդեն սահմանված ելքային արդյունքները՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ կրթական համակարգի առաջին շրջափուլի ավարտը միաժամանակ երկրորդ շրջափուլի մուտքն է: Առաջին և երկրորդ շրջափուլերի համար նախատեսված կրթական վերջնարդյունքները հստակորեն տարանջատել՝ չխախտելով ընդհանուր մասնագիտության համար նախատեսված վերջնարդյունքների ամբողջականությունը:
- 1.3. Բակալավրիատի բոլոր մասնագիտությունների գծով մշակել և ընթացիկ ուստարվա բակալավրիատի շրջանավարտներին տրամադրել համաեվրոպական նմուշի դիպլոմի հավելված՝ հայերեն և անգլերեն լեզուներով:
- 1.4. Մշակել և ներդնել ուսուցման ելքային արդյունքների վրա հիմնված ներհամալսարանական մոր կրթական չափորոշիչներ՝ բակալավրի և մագիստրոսի կրթական աստիճանների համար:
- 1.5. Վերահսկել կրթական ծրագրերով նախատեսված դասընթացների, առանձին մոդուլների ելքային արդյունքների ճիշտ ձևակերպումը և դրանց փոխկապակցումը ինչպես դասընթացի գնահատման չափանիշների և ուսուցման մեթոդների, այնպես էլ կրթական ծրագրերի վերջնարդյունքների հետ:
- 1.6. Ուսանողների ուսումնառության անհատական ծրագրերում հնարավորինս մեծացնել ընտրովի դասընթացների հաշվեկշիռը, բարձրացնել ուսանողի մասնակցության աստիճանը՝ իր կրթական հետագծի նախագծման գործում:
- 1.7. Ընդլայնել կրեդիտային համակարգի կիրառության տիրույթը՝ ընդգրկելով հեռակա ուսուցման համակարգը:
- 1.8. Վերանայել ուսանողների ընթացիկ և ամփոփիչ գնահատման ձևերը, հետևել համապատասխանությանը՝ նախապես սահմանված նորմերին:
- 1.9. Մանկավարժական դասընթացների բովանդակությունը համապատասխանեցնել հանրակրթության արդի պահանջներին:



- 1.10. Շարունակել կրթական գործունեության բոլոր ոլորտներին վերաբերող էլեկտրոնային տեղեկատվական ռեսուրսների բանկի համալրման աշխատանքները, ստեղծել էլեկտրոնային արխիվ:
- 1.11. Ստեղծել և կիրարկել դասընթացներին ուսանողների գրանցման, նրանց անձնական, ուսումնական առաջադիմության տվյալների մուտքագրման ու մշակման, ակադեմիական տեղեկագրի, դիպլոմի հավելվածի պատրաստման միասնական էլեկտրոնային համակարգ:
- 1.12. Ներմուծել համալսարանում կառուցվածքային ստորաբաժանումների տարեկան գործունեության արդյունքների վերլուծության և հաշվետվողականության նոր համակարգ:
- 1.13. Ապահովել տեղեկատվական տեխնոլոգիաների արդյունավետ օգտագործումը ուսումնական գործընթացում, խրախուսել մանկավարժական առաջավոր փորձի տարածումը:
- 1.14. Շարունակել էլեկտրոնային տարբերակով հեռակա ուսուցման համակարգի դասընթացների ուսումնամեթոդական նյութերի ստեղծման աշխատանքները:
- 1.15. Լիցենզավորման պահանջներին համապատասխան՝ աշխատաշուկայում առավել պահանջարկ ունեցող նոր մասնագիտությունների հայտի նախապատրաստում և ներկայացում ՀՀ ԿԳ նախարարություն՝ գործունեության թույլտվություն ստանալու նպատակով:

## **2. Գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքներ**

- 2.1. Խրախուսել պրոֆեսորադասախոսական անձնակազմի գիտահետազոտական աշխատանքները, ապահովել մագիստրոսական ծրագրերի հետազոտական ուղղվածությունը:
- 2.2. Կարևորել գիտական ղեկավարի սեմինարը, մագիստրոսների գիտահետազոտական պրակտիկաները:
- 2.3. Մագիստրոսական թեզերի ղեկավարման գործընթացում ընդգրկել համագործակից գիտակրթական հաստատությունների ներկայացուցիչներին:
- 2.4. Մագիստրոսական ծրագրի կրթական կառուցման ստանդարտները ավելացնել ապագա հետազոտողին անհրաժեշտ մասնագիտական, մանկավարժական հմտությունների ուսուցմանը միտված դասընթացներ:
- 2.5. Համալսարանում պարբերաբար կազմակերպել հանրապետական գիտաժողովներ, ինչպես նաև ուսանողական գիտական կոնֆերանսներ:

- 2.6. Աջակցել ուսանողական գիտական ընկերության աշխատանքներին՝ սովորողների մոտ զարգացնելու հետազոտական կարողություններ:
- 2.7. Խրախուսել միջհամալսարանական գիտական խմբերի աշխատանքներում երիտասարդ մասնագետների մասնակցությունը:
- 2.8. Ապահովել համալսարանի դասախոսների մասնակցությունը հեռահար on-line գիտական կոնֆերանսներին և գիտաժողովներին:

### **3. Հանրության հետ կապերի ամրապնդմանն ուղղված աշխատանքներ**

- 3.1. Բազմազանեցնել հասարակության հետ համալսարանի կապերը, ակտիվացնել համալսարանի մասնակցությունը կրթական, հետազոտական և հանրային խորհրդատվական ծառայությունների ոլորտում իրականացվող ծրագրերին:
- 3.2. Կատարելագործել համալսարանի ինտերնետային կայքը, բարելավել նրա տեխնիկական վիճակը և բարձրացնել շահագործման արդյունավետությունը:
- 3.3. Շարունակել համալսարանի վերաբերյալ հանրային կարծիքի, ինչպես նաև շրջանավարտ-մասնագետին ներկայացվող աշխատաշուկայի պահանջների ուսումնասիրությունները:
- 3.4. Կնքել համաձայնագրեր տարածաշրջանում գործող ավագ դպրոցների հետ՝ համատեղ կրթական գործունեություն իրականացնելու վերաբերյալ, ստեղծել բազային դասարաններ բնագիտական և հումանիտար հոսքերում, ակտիվացնել աշակերտների կապը համալսարանի հետ:
- 3.5. Ամրապնդել համալսարանի կապը շրջանավարտների հետ, ստեղծել շրջանավարտների տվյալների էլեկտրոնային տեղեկատվական բազա, նրանց հետ պահպանել գործակցային հարաբերություններ:

### **4. *Դասախոսական կազմի շարունակական մասնագիտական աճի ապահովմանն ուղղված աշխատանքներ***

Կազմակերպել դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի վերապատրաստումներ, անգլերենի ուսուցման, համակարգչային, կրթական նոր տեխնոլոգիաներին տիրապետելու և ուսումնական գործընթացում ներդնելու հմտությունների ձևավորման գործնական դասընթացներ:

Իրականացնել ԳՊՀ ներքին տեղեկատվական համակարգը գործարկող և շահագործող մասնագետների վերապատրաստում:

Օժանդակել համալսարանի բոլոր դասախոսներին, ուսանողներին էլեկտրոնային հասցեների տրամադրման գործընթացին, խթանել դրանց օգտագործումը ուսանող-

դասախոս երկկողմ շփումներում, հեռավար ուսուցման մեթոդները հատկապես կիրառել հեռակա ուսուցման համակարգում սովորողների համար:

Ապահովել համալսարանի մասին տեղեկատվության ամբողջականությունը և մատչելիությունը, յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում նախապատրաստել և հանրակրթական ուսումնական հաստատություններին տրամադրել «Դիմորդի ուղեցույց»-ը, պատրաստել տեսասկավառակներ, համացանցի միջոցով տարածել ԳՊՀ-ի վերաբերյալ լիարժեք տեղեկատվություն:

## **ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ**

Դեկան՝ *Կատվայան Վիկտոր Լիպարիտի,*  
*բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր*  
Դեկանի տեղակալ՝ *Բադայան Մարինե Միքայելի*

### **ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄՆԵՐԸ**

<b>Դասիչ</b>	<b>Մասնագիտություն</b>
031000	Հայոց լեզու և գրականություն
032400	Ռուսաց լեզու և գրականություն
031300	Անգլերեն լեզու

#### **Մասնագիտացումներ՝**

<b>բակալավր՝</b>	բանասիրության, մանկավարժության բակալավրի
<b>մագիստրոս՝</b>	բանասիրության մագիստրոսի

Ուսանողների թիվը՝ 380

Շրջանավարտների թիվը՝ 73 (բակալավր), 20 (մագիստրոս)

**ԳԱՎԱՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ  
2009-2010 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2010-2011 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ  
ՉԱՐԳԱՅՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ**

2009 - 2010 ուսումնական տարում ԳՊՀ բանասիրական ֆակուլտետում նախատեսված կրթական բոլոր ծրագրերը լիովին իրականացվել են, կատարվել են ուսումնամեթոդական, դաստիարակչական, գեղագիտական բնույթի զգալի աշխատանքներ, կրթական գործընթացը կազմակերպվել է համաձայն ուսումնական պլանների և հաստատված ժամանակացույցի:

Ուսումնական տարվա ծմեռային քննաշրջանի արդյունքներով բանասիրական ֆակուլտետի՝ բակալավրիատի կրթակարգով սովորող ուսանողների ուսման բացարձակ առաջադիմությունը կազմել է 67 տոկոս, իսկ գարնանային քննաշրջանի արդյունքներով՝ 66,80 տոկոս, այսինքն՝ ուսումնական տարվա ընթացքում բակալավրիատի ուսանողությունը ընդհանուր առմամբ հանդես է բերել կայուն առաջադիմություն: Գարնանային քննաշրջանում ծմեռային համեմատությամբ առաջադիմության որոշ աճ են արձանագրել երկրորդ կուրսերը (55,95% և 61,25%), իսկ առաջին և երրորդ կուրսերն ունեցել են առաջադիմության որոշակի անկում (համապատասխանաբար՝ 78,21% -75,64% և 68,24% - 63,95%): Իրենց ցուցանիշները բարելավել են ինը խմբերից վեցը (Ռուսաց լեզու և գրականություն բաժնի 1-ին, 2-րդ, 3-րդ, Անգլերեն լեզու բաժնի 1-ին, Հայոց լեզու և գրականություն բաժնի 2-րդ և 3-րդ կուրսեր): Ուսումնական տարվա ավարտին լավագույն ցուցանիշ են ունեցել Հայոց լեզու և գրականություն բաժնի երրորդ կուրսի ուսանողները՝ առաջադիմության 90,91 տոկոսով: Վատագույն ցուցանիշ հանդես են բերել Անգլերեն լեզու բաժնի երկրորդ և երրորդ կուրսերը՝ համապատասխանաբար առաջադիմության 48,28 և 50 տոկոսներով:

Բակալավրիատի Հայոց լեզու և գրականություն բաժնում, որպես կանոն, առկա է սովորողների կայուն և համեմատաբար բարձր առաջադիմություն: Ռուսաց լեզու և գրականություն բաժնում արդեն երկրորդ ուսումնական տարին է, ինչ ամբիոնի ջանադիր աշխատանքը տալիս է իր դրական արդյունքները, և արձանագրվում է ուսման որակի և առաջադիմության շարունակական աճ: Ընդգծված հետնապահի դերում է հայտնվել Անգլերեն լեզու բաժինը, որի երկրորդ և երրորդ կուրսերի առաջադիմության ցուցանիշները ամենացածրն են ֆակուլտետում: Գարնանային քննաշրջանի արդյունքներով բակալավրիատի 244 ուսանողներից 45-ը քննությունները հանձնել են միայն «գերազանց»

գնահատականներով, 89–ը՝ «գերազանց» և «լավ» գնահատականներով, 29–ը՝ խառը գնահատականներով: 29 ուսանողներ էլ վաստակել են անբավարար գնահատականներ:

Ուսումնական տարվա ընթացքում ֆակուլտետի ուսանողներից տասնհինգը ազատվել են համալսարանից, տարկետում է տրամադրվել չորս ուսանողների, այլ ֆակուլտետ են տեղափոխվել տասնինը ուսանողներ: Իրենց ուսանողական իրավունքները վերականգնել և այլ ֆակուլտետից բանասիրական ֆակուլտետ են տեղափոխվել յոթ ուսանողներ:

2009-2010 ուսումնական տարում բակալավրիատի պետական ավարտական քննություններին մասնակցեցին ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի 74 ուսանողներ, որոնցից 24–ը վաստակեցին միայն «գերազանց» գնահատականներ, իսկ 11–ը արժանացան գերազանցության դիպլոմի: Անգլերեն լեզու բաժնի ուսանողներից մեկը ստացավ անբավարար գնահատական, և այդպիսով ֆակուլտետը բակալավրիատի համակարգում ունեցավ 73 շրջանավարտ: Պետական ավարտական քննությունների հանձնաժողովները և դրանց նախագահները հիմնականում գոհ էին ուսանողների բանավոր պատասխաններից և ավարտական աշխատանքների որակից:

2008-2009 ուսումնական տարվանից ֆակուլտետն ունի նաև մագիստրատուրայի բաժին, որի առաջին կուրսերում այժմ սովորում են 28 ուսանողներ, իսկ երկրորդ կուրսերում՝ 23 ուսանողներ: Այստեղ գարնանային քննաշրջանի արդյունքներով առկա է 86,96 տոկոս առաջադիմություն: Անցած ուսումնական տարում բանասիրական ֆակուլտետի մագիստրատուրան ունեցավ 20 շրջանավարտ, որոնցից երեքը (բոլորն էլ՝ Անգլերեն լեզու բաժնից) մագիստրատուրան ավարտեցին գերազանցության դիպլոմով: Եթե Ռուսաց լեզու և Հայ գրականություն մագիստրոսական ծրագրերի շրջանավարտների ավարտական թեզերը արժանացան A գնահատականի տարբեր աստիճանների, ապա Անգլերեն լեզու բաժնի շրջանավարտները վաստակեցին նաև B, C գնահատականներ: Ունեցանք մագիստրատուրայի առաջին շրջանավարտները, և չնայած նրանց ցուցաբերած արդյունքները հիմնականում գոհացուցիչ էին, բայց մագիստրատուրայի կրթական համակարգը հիմնավորապես տիրապետելու, կիրառելու և կատարելագործելու առումով դեռևս շատ անելիքներ ունենք:

Ինչպես միշտ, անցած ուսումնական տարում ևս ֆակուլտետի առօրյայի շատ կարևոր մաս են կազմել տարաբնույթ գիտական, գեղարվեստական, հոբբեյանական միջոցառումները, ցերեկույթները, մրցույթները: Հիշատակության արժանի են Ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի կազմակերպած ուսանողական գիտական կոնֆերանսները, Չեխովին, Պուշկինին նվիրված միջոցառումները, Ընդհանուր գրականության ամբիոնի կազմակերպած

ցերեկույթները՝ նվիրված Հովհաննես Թումանյանին, Վիլյամ Շեքսպիրին, Հայոց լեզվի ամբիոնի՝ Մայրենի լեզվին նվիրված միջոցառումները և այլն:

Անցած ուսումնական տարում բանասիրական ֆակուլտետի շրջանակում գործող ամբիոններում թարմացվել են առարկայական ծրագրերը, պատրաստվել են դասախոսությունների էլեկտրոնային տարբերակներ՝ երրորդ և չորրորդ կուրսեցիների համար, դասավանդվող առարկաների բնութագրեր, տարբեր կարգի հարցաշարեր ու այլ փաստաթղթեր՝ կրեդիտային համակարգով սովորող կուրսերի համար: Ամբիոններում պարբերաբար անցկացվել են գիտական բանավեճեր, սեմինարներ և քննարկումներ:

Ամբիոնների դասախոսները զբաղվում են նաև գիտական գործունեությամբ: Նրանց հոդվածները տպագրվում են ինչպես ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածուներում, այնպես էլ հանրապետության այլ գիտական հանդեսներում ու ամսագրերում: Անցած ուսումնական տարում հրապարակվել են շուրջ երկու տասնյակ գիտական հոդվածներ, մի շարք դասախոսներ մասնակցել են հանրապետական գիտաժողովների: Ամբիոնների մի շարք աշխատակիցներ կատարում են աշխատանքներ գիտական թեզերի ամբողջացման ուղղությամբ, և նրանցից երկուսը (ի դեպ, ԳՊՀ շրջանավարտներ) վերջերս պաշտպանեցին թեկնածուական ատենախոսություններ:

Ֆակուլտետում ընդհանուր առմամբ նկատելի է ուսանողների առաջադիմության ցուցանիշների կայունացում, ինչը բավարար հիմք է հետագա առաջընթացի համար: Նոր ուսումնական տարվա՝ ֆակուլտետի զարգացման հայեցակարգը նպատակ ունի ապահովել ուսումնական ողջ գործընթացի որակական հետագա աճ՝ ունեցած ձեռքբերումների պահպանման և ամրապնդման, նոր նախաձեռնությունների և ծրագրերի հետևողական ներդրման շնորհիվ:

Բանասիրական ֆակուլտետի 2010 – 2011 ուստարվա զարգացման հայեցակարգը պարունակում է կատարելիք աշխատանքների հետևյալ համախումբը.

**1. Ամբիոնների գործունեությունը ավելի արդյունավետ դարձնելուն միտված աշխատանքներ.**

ա/ ամբիոնի նիստերում ուսումնագիտական, մեթոդական, կազմակերպական հարցերից բացի պարբերաբար անդրադառնալ համապատասխան բաժնի ուսանողների առաջադիմության ցուցանիշների քննարկմանը, մշակել և իրականացնել թույլ առաջադիմություն ունեցող ուսանողների հետ աշխատանքի արդյունավետ եղանակներ.

բ/ քննական հարցաշարերի, հարցատոմսերի, թեստերի, ավարտական թեզերի և կուրսային աշխատանքների թեմաները քննարկելիս և կազմելիս նկատի ունենալ կրթական համակարգին ներկայացվող նորագույն պահանջները.

գ/ հետևողականորեն կիրառել դասատվության նորագույն մեթոդներ՝ հիմնական նպատակ ունենալով գիտելիքների մատուցումը ուսանողների մտածողության զարգացմամբ և աշխարհայացքի ընդլայնմամբ զուգորդելը, ուսանողների մոտ գիտելիքները գործադրելու ունակություններ ու հմտություններ ձևավորելը.

դ/ հատուկ ուշադրություն դարձնել հանձնարարվող անհատական աշխատանքների կատարման որակին՝ ուսանողներին ցույց տալով մեթոդական անհրաժեշտ օգնություն.

ե/ հետևել ամբիոնի բոլոր աշխատակիցների գիտական մակարդակի հետևողական բարձրացմանը.

զ/ պարբերաբար անցկացվող գիտական սեմինարներին մասնակից դարձնել գիտական հետաքրքրություններ ունեցող ուսանողներին և հատկապես մագիստրանտներին.

է/ մասնագիտական առարկաների շրջանակներում ուսանողներին կանոնավորապես հանձնարարել ռեֆերատներ, էսսեներ, գիտական աշխատանքի պարզագույն այլ եղանակներ, առավել խելացի ուսանողների հետ կատարել համատեղ գիտական աշխատանքներ, նպաստել մագիստրանտների գիտական հետաքրքրությունների և գիտական աշխատանք կատարելու կարողությունների զարգացմանը.

ը/ ուսումնական տարվա ընթացքում յուրաքանչյուր ամբիոնի գիտական հետաքրքրությունների շրջանակներում կազմակերպել գիտական կոնֆերանսներ, կազմակերպել միջոցառումներ, ուսանողական օլիմպիադաներ.

թ/ ֆակուլտետի խորհրդում հանդես գալ ամբիոնում կատարվող աշխատանքների մասին հաղորդումներով:

## **2. Դասատվության որակի հետևողական աճ ապահովելուն միտված աշխատանքներ.**

ա/ դասատվության ուսանողակենտրոն եղանակին անցնելով՝ կիրառել նաև դասախոսակենտրոն եղանակի հնարավորությունները.

բ/ հասնել այն բանին, որ ուսանողը յուրաքանչյուր դասի ներկայանա որոշակի նախագիտելիքով և պարզաբանման ենթակա հարցերով.

գ/ նյութի հանգամանակից մեկնաբանումով, քննարկումներով, հարց ու պատասխանով, այլ եղանակներով հասնել այն բանին, որ յուրաքանչյուր ուսանող տվյալ թեմայի շրջանակներում արդեն լսարանում այս կամ այն չափով յուրացնի մատուցվող գիտելիքը և կարողանա անել դատողություններ.



դ/ գործնական աշխատանքների ժամանակ, ինչպես նաև անհատական աշխատանքներ կատարելիս նպաստել ուսանողների ինքնուրույն, ստեղծագործական մտածողության զարգացմանը.

ե/ կիրառել ուսման առաջավոր ուսանողների խրախուսման եղանակներ:

**3. Ակադեմիապես թույլ ուսանողների հետ աշխատանքների արդյունավետության բարձրացմանը միտված աշխատանքներ.**

ա/ ուսման մեջ թերացող յուրաքանչյուր ուսանողի հետ կազմել անհատական աշխատանքների պլան և ժամանակացույց, անհրաժեշտության դեպքում համալսարան հրավիրել նաև ծնողներին.

բ/ գիտելիքների ստուգման յուրաքանչյուր փուլի արդյունքները քննարկել ամբիոնում՝ ուսանողների մասնակցությամբ.

գ/ կազմակերպել լրացուցիչ խորհրդատվություններ և հարցումներ.

դ/ բոլոր առարկաների գծով կիրառելով գիտելիքների նվազագույն պաշարի՝ ուսանողի պարտադիր իմացության ապահովման համակարգը՝ կիսամյակը մեկ անգամ այդ եղանակով անդրադառնալ նաև նախորդ կիսամյակների անցած նյութին:

**4. Ուսումնական գործընթացի, գիտելիքների նկատմամբ ուսանողների հետաքրքրության աճ ապահովող աշխատանքներ.**

ա/ մատուցվող գիտելիքները կապակցել անցած նյութին, գիտելիքների ավելի լայն ոլորտին, ինչպես նաև շաղկապել իրականությանը՝ այդպիսով արժևորելով ներկայացվող նյութը.

բ/ կազմակերպել առարկայական օլիմպիադաներ, վիկտորինաներ, բանավեճեր.

գ/ պարբերաբար կազմակերպել ուսանողական գիտական կոնֆերանսներ, հնարավորության դեպքում լավագույն նյութերը ներկայացնել տպագրության.

դ/ ֆակուլտետի յուրաքանչյուր խմբում անցկացնել նշանավոր որևէ գրողի ստեղծագործությունների քննարկումներ, հրատարակել պատի թերթեր, բաժիններում անցկացնել ուսանողական գիտական կոնֆերանսներ.

ե/ անցկացնել «Լավագույն խումբ», «Լավագույն ուսանող», «Լավագույն պատի թերթ», «Լավագույն լրագրող» մրցույթներ.

զ/ էականորեն ակտիվացնել ուսանողական խորհրդի աշխատանքները, բարձրացնել նրա դերը ֆակուլտետում:

**5. Ուսանողների բարոյահոգեբանական, մշակութաբանական որակների զարգացման նպատակով կազմակերպել գրական, գեղարվեստական, մշակութային տարաբնույթ**

ցերեկույթներ, մրցույթներ, հանդիպումներ նշանավոր մարդկանց հետ, ձեռնարկել այլ միջոցառումներ:

Վ. Լ. Կատվայան

ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի դեկան

**ՔՆՆԱՇՐՋԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

**ՁՄԵՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ**

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազանցիկների թիվը	Առաջադիմության %-ը
<b>Բակալավրիատ</b>				
Հայոց լեզու և գրականություն				
1-ին	38	1	10	94.74
2-րդ	34	13	2	55.88
3-րդ	21	1	7	85.71
4-րդ	24	0	11	75.00
Ռուսաց լեզու և գրականություն				
1-ին	16	4	5	56.25
2-րդ	19	5	2	47.37
3-րդ	20	3	1	60.00
4-րդ	20	1	7	70.00
Անգլերեն լեզու				
1-ին	24	7	4	66.67
2-րդ	31	5	1	61.29
3-րդ	44	6	12	63.64
4-րդ	31	5	7	58.06
<b>Ընդամենը</b>	<b>322</b>	<b>5</b>	<b>69</b>	<b>67.08</b>
<b>Մագիստրատուրա</b>				
Հայոց լեզու և գրականություն				
1-ին	9	0	2	55.56
2-րդ	4	0	2	100
Ռուսաց լեզու և գրականություն				
1-ին	9	0	1	100
2-րդ	7	0	2	100
Անգլերեն լեզու				
1-ին	7	0	1	42.86
2-րդ	11	1	3	45.45
<b>Ընդամենը</b>	<b>47</b>	<b>1</b>	<b>11</b>	<b>70.21</b>

**ԱՄԱՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ**

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազան- ցիկների թիվը	Առաջադիմու- թյան %-ը
<b>Բակալավրիատ</b>				
Հայոց լեզու և գրականություն 1-ին	38	5	6	78.95
2-րդ	33	6	2	63.64
3-րդ	22	0	7	90.91
Ռուսաց լեզու և գրականություն 1-ին	15	2	6	80.00
2-րդ	16	0	2	87.50
3-րդ	20	1	6	76.47
Անգլերեն լեզու 1-ին	25	6	4	68.00
2-րդ	31	3	5	48.28
3-րդ	44	6	7	50.00
<b>Ընդամենը</b>	<b>244</b>	<b>29</b>	<b>45</b>	<b>66,80</b>
<b>Մագիստրատուրա</b>				
Հայոց լեզու և գրականություն 1-ին	8	0	5	62.50
Ռուսաց լեզու և գրականություն 1-ին	9	0	2	100
Անգլերեն լեզու 1-ին	6	0	0	100
<b>Ընդամենը</b>	<b>23</b>	<b>0</b>	<b>7</b>	<b>86.96</b>

2009/2010 ՈՒՄ. ՏԱՐՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ ԵՆ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցումների թեզիս
6	3	-	1	34	1

Ֆակուլտետում գործող ամբիոնների թիվը` 4

**ՀԱՅՈՑ ԼԵՉՎԻ ԱՄԲԻՈՆ**

Ամբիոնի վարիչ` *Համբարձումյան Վազգեն Գուրգենի, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*

**ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ**

1. Ասոյան Թաթուլ Արտիկի - բանասիրական գիտ. թեկնածու, ԳՊՀ դոցենտ
2. Իսկանդարյան Լիլիթ Հրաչիկի - դասախոս
3. Խանդանյան Սիրանուշ Կառլենի - դասախոս
4. Վարդանյան Գայանե Լևիկի - դասախոս
5. Հարությունյան Հերմինե Խաչիկի - դասախոս
6. Սարգսյան Ռուզաննա Մարատի - լաբորանտ

**ՀԱՍՏԵՂՈՂՆԵՐ**

- Կատվալյան Վիկտոր Լիպարիտի - ԲՖ դեկան, բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
- Ալեքսանյան Թամարա Կարապետի - դասախոս
- Ներսիսյան Վարսիկ Արմենի - բանասիրական գիտ. թեկնածու
- Իսկանդարյան Նարինե Մանվելի - բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ
- Ասատրյան Ծովինար Ժորայի - բանասիրական գիտ. թեկնածու

**ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

1. Հայոց լեզվի ուսուցման գործնականության և արդյունավետության ապահովման հարցեր:

2. Լեզվաբանության ընդհանուր, ժամանակակից հայոց լեզվի տեսության և պատմության, լեզվի ուսուցման մեթոդիկայի հիմնահարցերի ուսումնասիրություն:
3. Բարբառագիտական հետազոտություններ:

### ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցումների թեզիս
-	1	-	-	13	1

### ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԵԹՈՂԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

**Կատվայան Վ. Լ.** Սահմանական եղանակը Բայազետի բարբառում // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Զ. 12, Երևան, 2010, էջ 284-288:

**Կատվայան Վ. Լ.** Արարատի և Բայազետի բարբառների փոխհարաբերությունները // Պատմաբանասիրական հանդես, N 2-3, Երևան, 2009թ., էջ 145-157:

**Կատվայան Վ. Լ.** Բայազետի բարբառը ըստ բազմահատկանիշ դասակարգման // Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ, N2, Երևան, 2010, էջ 181-186:

**Կատվայան Վ. Լ.** «Քավառա խանաք-չանաք» (զվարճապատումներ Բայազետի բարբառով) // Երևան, 2009, 232 էջ:

**Ասոյան Թ. Ա.** Գրապայքարը «Բազմավեպի» էջերում // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Զ. 12, Երևան, 2010, էջ 288-295:

**Ալեքսանյան Թ. Կ.** Բառապաշարի հարստացման աշխատանքի տեսակները // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Զ. 12, Երևան, 2010, էջ 295-303:

**Ալեքսանյան Թ. Կ.** Գրական-գեղարվեստական երկի ուսուցումը // Մանկավարժական միտք, Զ. 3-4, Երևան, 2010, էջ 203-207:

**Խանդանյան Ս. Կ.** Գոյական որոշչի արտահայտությունը արդի հայերենի գոյականական բառակապակցություններում: Ուղղական հոլովով գոյական որոշչի առանձնահատկությունները // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Զ. 12, Երևան, 2010, էջ 303-308:

**Խանդանյան Ս. Կ.** Սեռական հոլովով գոյական որոշչի առանձնահատկությունները գոյականական բառակապակցություններում // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Զ. 12, Երևան, 2010, էջ 308-311:

**Հարությունյան Զ. Խ.** Նորակազմությունների բառակազմական կաղապարները Ստեփանոս Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Սիսական» երկում // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Զ. 12, Երևան, 2010, էջ 311-317:

**Սարգսյան Ռ. Մ.** Ստորոգյալի հարցը ժամանակակից հայերենում // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Զ. 12, Երևան, 2010, էջ 317-323:

**Իսկանդարյան Ն. Մ.** Հակոբ Օշականը Թումանյանի մասին // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Զ. 12, Երևան, 2010, էջ 396-409:

**Իսկանդարյան Ն. Մ.** Քառսուն ճյուղ Ծամ Դեղծունի կերպարի առասպելական ծագման և նրա զուգորդների շուրջ // Ջեկուցում «Մշակույթների երկխոսություն» միջազգային գիտաժողովում, Գյումրի, 2010, մայիս:

**Ներսիսյան Վ. Ա.** Նոր բառեր Հովհաննես Օձնեցու նորահայտ տոնացուցային երկում, Պատմաբանասիրական հանդես, N 1, Երևան, 2010, էջ 174-183:

**Ներսիսյան Վ. Ա.** Հովհաննես Օձնեցու երկերի լեզուն // Ատենախոսության սեղմագիր, Երևան, 2009, 28 էջ:

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Գրիգորյան Վաչագան Ռաֆիկի, բանասիրական գիտությունների դոկտոր, ԳՊՀ պրոֆեսոր*

### ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. Ղազարյան Նորայր Կարապետի - բանասիրական գիտ. թեկնածու, ԳՊՀ դոցենտ
2. Ղարիբյան Ալինա Ամբիկի - ասիստենտ
3. Ղռեջյան Լուսինե Խաչատուրի - դասախոս
4. Փոշոտյան Լիլիթ Սարգսի - դասախոս

### ՀԱՄԱԵՂՈՂՆԵՐ

1. Եղիազարյան Ազատ Կոմունարի-բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր
2. Առաքելյան Արա Հրաչիկի - բանասիրական գիտ. թեկնածու, ԳՊՀ պրոֆեսոր

## ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Միջնադարյան գրականության, մասնավորապես, «Սասնա ծռեր» էպոսի, ինչպես նաև գերմանական էպոսի առնչությունների վերաբերյալ ուսումնասիրություններ:
2. Չարենցի անտիպ շրջանի հետազոտական աշխատանքներն ու Հրանտ Մաթևոսյանի ստեղծագործության ամբողջական ուսումնասիրությունը:
3. Արդի հայ պոեզիայի վերաբերյալ ուսումնասիրություններ:
2010-2011 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգը բխում է նախորդ տարվա հայեցակարգի հիմնական դրույթներից: Ֆակուլտետի առջև դրված խնդիրների հաշվառման, առկա բացթողումների ու թերացումների վերլուծության հիման վրա անհրաժեշտ է կատարել որոշ ռազմավարական ճշգրտումներ: Իբրև ելակետ ընդունում ենք այն դրույթը, որ կրթական համակարգին ներկայացվող հիմնական պահանջը ուսման որակի բարելավումն է: Սա ֆակուլտետի գլխավոր ռազմավարական նպատակն է:

Որակի բարելավումը անընդհատ, շարունակական, համակարգված գործունեություն է, որն ունի իր առանձնահատկությունները և մշտապես պահանջում է կրթության արդյունավետության ապահովում: Դա պայմանավորված է նրանով, թե որքան է մեր կողմից կազմակերպվող ուսուցումը համապատասխանում ժամանակի սոցիալական, կրթական, գիտական, տեխնիկական, մշակութային զարգացումներին:

Ներկայումս հասարակական զարգացումներում արմատավորվում են ազատական արժեքները: Վերջին 20 տարիների սոցիալական գործընթացներին զուգընթաց, ազատական արժեքները ներթափանցեցին կրթական համակարգ: Դրանք բազմաշերտ են ու բազմաբովանդակ, ուստի ազատությունը, լինելով նվաճված ու շոշափելի արժեք, պահանջում է լուրջ մոտեցում: Այն, որ կրթությունը մարդուն ազատ դարձնելու միջոցներից մեկն է, սա վիճարկելի չէ, իսկ ինչպես նոր պայմաններում ապահովենք ազատ մարդու կրթություն և դաստիարակություն՝ ֆակուլտետի մտահոգությունն է: Հարցադրումն իր մեջ պարունակում է բարդություն և կարծում ենք, դա պայմանավորված է նրանով, որ ազատական արժեքների պայմաններում ուսումնական գործընթացի մասնակիցները առաջին պլան են մղում իրենց իրավունքները, իսկ պարտականությունները երբեմն անտեսվում են, ուստի դեկանատի խնդիրն է աշխատանքներն այնպես կազմակերպել, որ կարևորվեն ինչպես ուսանողների իրավունքները, այնպես էլ պարտականությունները: Ուստի հայեցակարգում ամրագրում ենք, որ ազատականացման գլխավոր առաքելությունը հենց պարտականությունների կատարման կարևորությունը գիտակցելն է: Այն աշխատանքի և ուսումնական առողջ բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորման ու պահպանման գլխավոր երաշխիքն է, որը մեծապես նպաստում է ստեղծագործ, արդյունավետ աշխատանքին:

Ազատականացման պայմաններում կրթության համակարգի բարեփոխման բարդությունը կապված է ոչ միայն բարոյահոգեբանական գործոնի հետ, այլև թաքնված է կրթության ժամանակակից մոդելի՝ կրեդիտային համակարգի բուն էության մեջ:

Սեպտեմբերի առաջին շաբաթվա ընթացքում ուսանողներին պարտադիր տրվում են դասախոսությունների տեքստերը, անհատական աշխատանքների ցանկը: Սրան հաջորդում են առաջին և երկրորդ լուծարային շրջանները, որից անմիջապես հետո սկսվում է միջանկյալ քննությունների առաջին փուլը:

Կիսամյակի ընթացքում ֆակուլտետում հանձնվում է շուրջ 1500 միջանկյալ քննություն, կատարվում մոտավորապես 3500 անհատական աշխատանք, ինչն ընթանում է «բաշխում-հավաքում-ստուգում-գրանցում-արդյունքների գնահատում կամ վերջնական ամփոփում» սխեմայով: Սա ենթադրում է պարտականությունների հստակ բաշխում, պահանջում կազմակերպվածության և պատասխանատվության բարձր մակարդակ: Ուսումնասիրել ենք հաշվետու ժամանակահատվածում այդ գործընթացի օղակներից յուրաքանչյուրը և ստացվել է հետևյալ պատկերը. սահմանված ժամկետում անհատական աշխատանքները չեն ներկայացրել պատմության և իրավագիտության բաժնի ուսանողների շուրջ 10-12%-ը, (մանկավարժների մոտ նման խնդիր չի ծագում), իսկ միջանկյալ գրավորներին չեն ներկայացրել 2-3%-ը:

Կրեդիտային համակարգի մոդելում կարևորվել են միջանկյալ քննությունները: Սակայն, ուսանողների որոշ մասը պատշաճ կերպով չի պատրաստվում միջանկյալ քննություններին: Մասնակի փոփոխությունները (թեստերի ներմուծումը) ցանկալի արդյունքներ դեռևս չեն տվել, և լուրջ աշխատանք կատարելու անհրաժեշտություն է զգացվում: Ներկայիս ուսումնական գործընթացի իրականացումը դասախոսների համար և՛ աշխատատար է, և՛ ժամանակատար: Իրականում կարծես ավելի շատ քննարկվում է «ինչպես ստուգել և գնահատել», քան «ինչպես սովորեցնել» հարցը: Խնդիրը լուծելու համար քայլեր ենք ձեռնարկել ստուգման մեխանիզմների պարզեցման և հստակեցման ուղղությամբ:

Կրթության որակի բարձրացման նպատակով պարբերաբար վերանայվել ու թարմացվել են ուսումնական պլաններն ու առարկայական ծրագրերը, սակայն շատ անելիքներ կան ժամանակի պահանջներին համապատասխանելու համար:

Համակարգային փոփոխությունների համատեքստում ընդունվեց նաև դասախոսակենտրոն համակարգը ուսանողակենտրոն համակարգով փոխարինելու գաղափարը: Ինչպես հայտնի է, ցանկացած գործող համակարգ ունենում է երկու բևեռ, որոնց հավասարակշռության դեպքում համակարգը զարգանում է, իսկ խիստ բևեռացումը ունենում է ապակառուցողական հետևանքներ: Նախկին համակարգը թերևս կարելի է բնորոշել որպես երկբևեռ համակարգ, որի մի բևեռում ուսանողն էր, մյուսում՝ դասախոսը, սակայն ուսանողներին չէր վերապահվում ակտիվ դեր: Ազատական արժեքների պայմաններում, երբ կիրառվում են ինտերակտիվ մեթոդներ, միակողմանի բևեռացումը կարծում ենք՝ ճիշտ չէ: Այս պայմաններում էլ չի բացառվում արհեստականորեն ուռճացնել «ուսանողակենտրոն» հասկացությունը և

թերագնահատել դասախոսի դերը: Հակված ենք այն գաղափարին, որ դասախոսը իր փորձով, գիտելիքներով, հմտությամբ «նտածել, վերլուծել, համադրել» սովորեցնելու առաքելությամբ երկբևեռ համակարգի մի բևեռում է, իսկ ուսանողը սովորելու, պահանջելու, ընկալելու, յուրացնելու տեսակետից՝ մյուս բևեռում: Ուսումնական համակարգում դրանք համարժեք բևեռներ են: Ֆակուլտետում դասախոսական աշխատանքի մեջ ներգրավված են որակյալ մասնագետներ, փորձված մանկավարժներ, տարբեր պետական մարմիններում աշխատող անձինք: ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դասախոսները, բացի մանկավարժական գործունեությունից զբաղվում են նաև գիտահետազոտական աշխատանքով: Նշենք նաև, որ գիտական աշխատանքների ակտիվացման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումների արդյունքում նախատեսված 40-ի փոխարեն տպագրության ներկայացվեցին 45 հոդվածներ, հրատարակվեցին նաև երկու մենագրություններ:

Մասնագիտական կրթությունը նպաստում է անձի սոցիալական կարգավիճակի ապահովմանը՝ նրան հնարավորություն տալով զարգանալու, ինքնակատարելագործվելու, հասնելու մասնագիտական հաջողությունների: Դեկանատի և ամբիոնների խնդիրն է գնահատել և խրախուսել ուսանողների ինքնուրույն ձեռքբերումները, նպաստել նրանց ինքնահաստատմանն ու ինքնադրսևորմանը, որին նպաստում են նաև ֆակուլտետում կազմակերպվող բազմաբնույթ միջոցառումները: Հատկանշական են «Հայաստան - ՆԱՏՕ» և «Հայաստան - Թուրքիա հարաբերությունների» վերաբերյալ քննարկումները: Մեր ուսանողների տրամաբանված, ինքնատիպ պատասխանների մասին նշել են քննարկմանը մասնակցած փորձագետները, իսկ հիշյալ թեմաներով գրավոր աշխատանքների մրցույթին մասնակցեցին ֆակուլտետի 15 ուսանողներ: Վիրաբ Ենգոյանը /Պատմության բաժնի 4-րդ կուրս/ արժանացավ խրախուսական մրցանակի և ստացավ ուսման վարձի զեղչ:

Մի շարք ուսանողներ, հատկապես ծնողազուրկ և սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներ, մասնակցել են տարբեր կազմակերպությունների կողմից հայտարարված մրցույթներին և ստացել դրամական պարգևներ:

Ֆակուլտետի ուսանողների ակտիվության և ինքնուրույնության զարգացմանը նպաստում է նաև իրավաբանական կլինիկայի գործունեությունը: 2009 թվականի նոյեմբերին և 2010 թվականի մարտին Ամերիկյան իրավաբանների ընկերակցության կազմակերպած աշնանային և գարնանային դպրոցներին մասնակցություն են ունեցել իրավագիտության բաժնի 25 ուսանողներ, որոնք ստացել են մասնակցության վկայականներ, մի քանիսը արժանացել են դիպլոմների: Ուսանողները մասնակցել են 10 սեմինար քննարկումների՝ Ամերիկյան իրավաբանների ընկերակցության, իրավաբանների ԱՄՆ դեպարտամենտի, ՄԱԿ-ի գրասենյակի ու այլ կազմակերպություններից հրավիրված մասնագետների մասնակցությամբ:

Ուսումնական գործընթացի տեսանելի արդյունքը սովորողների ուսման առաջադիմության ցուցանիշներն են: Նախորդ տարի այս նույն ժամանակահատվածում մեր առջև խնդիր դրեցինք ֆակուլտետում ուսման առաջադիմությունը բարձրացնել 10%-ով, այն համարեցինք իրագործելի: 2009-2010 ուսումնական տարում ուսման առաջադիմությունը կազմեց 62.8%, նախկինում բավականին ցածր էր՝ 51.2%: 2010-2011 ուսումնական տարվա համար, իբրև նշածող ստանձնում ենք 70%-ի սահմանը, որը ֆակուլտետի ներուժը հաշվի առնելով՝ դարձյալ իրագործելի ենք համարում, ընդ որում՝ կաշխատենք նշված սահմանագծից նվազում թույլ չտալ: Այս նպատակով նախատեսել ենք հետևյալ միջոցառումները. առաջին հերթին լուրջ անհատական բացատրական աշխատանք կատարել նախորդ կիսամյակում առարկայական պարտքեր ունեցող ուսանողների հետ, պարզել ցածր առաջադիմության պատճառները: Կարևորելով «սովորեցնել սովորել» կարգախոսը՝ ուսանողների մեջ պետք է արմատավորել սովորելու կամք և վճռականություն, խրախուսել գիտելիքների կուտակումը և նվազագույնի հասցնել հեռացումները: Հաշվետու ժամանակահատվածում անբավարար առաջադիմության համար հեռացվել են չորս ուսանողներ, զինվորական ծառայության են մեկնել 6 ուսանող, վերադարձել՝ 4-ը:

Պետական ավարտական քննությունների արդյունքում անբավարար գնահատական ստացան 6 ուսանող, իսկ քննության չներկայացան 2-ը:

Նախորդ տարվա համեմատ 2010 թվականին ֆակուլտետ ընդունված առաջին կուրսեցիների թիվը իրավագիտության բաժնում ավելացավ 14-ով, պատմության բաժնում՝ 13-ով: Հավելենք, որ տարեկան շուրջ 10 ուսանողով ավելանում է ֆակուլտետի ուսանողների թիվն՝ ի հաշիվ այլ ֆակուլտետների և երկրորդ մասնագիտություն ստանալ ցանկացողների:

Հունանիտար մասնագիտությունների ֆակուլտետում կողք կողքի աշխատում են ինչպես փորձառու, վաստակաշատ դասախոսներ, այնպես էլ երիտասարդ, գիտության մեջ իրենց առաջին քայլերն անող մասնագետներ, որոնք հաջողությամբ համագործակցում են, օգնում միմյանց: Մեր համերաշխ կոլեկտիվն ի զորու է լուծել ֆակուլտետի առջև դրվող բոլոր խնդիրները:

**Հ. Գ. ՂԱԶՈՅԱՆ**  
ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների  
ֆակուլտետի ղեկան

**ՔՆՆԱՇՐՋԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

**ՉՄԵՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ**

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար զնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազան- ցիկների թիվը	Առաջադիմու- թյան %-ը
<b>Բակալավրիատ</b>				
Իրավագիտություն				
1-ին	26	10	6	61.5
2-րդ	41	15	8	56.1
3-րդ	50	14	5	56
4-րդ	53	18	15	50.9
Պատմություն				
1-ին	14	10	-	28.5
2-րդ	15	3	-	66.6
3-րդ	22	9	-	54.5
4-րդ	15	2	6	86.6
Տարրական.կրթ. մանկ. և մեթոդիկա				
1-ին	8	2	3	75
2-րդ	16	2	2	81.2
3-րդ	13	-	1	100
4-րդ	5	-	2	100
<b>Ընդամենը</b>	<b>278</b>	<b>85</b>	<b>48</b>	<b>61</b>
<b>Մագիստրատուրա</b>				
Իրավագիտություն				
1-ին	10	1	-	40
2-րդ	16	2	4	68.7
Պատմություն /իրավ. հիմ./				
1-ին	6	-	3	83
2-րդ	4	-	3	75
Մանկ. և մեթոդ. /տարր. կրթ./				
1-ին	1	-	1	100
2-րդ	3	1	2	66.6
<b>Ընդամենը</b>	<b>40</b>	<b>4</b>	<b>13</b>	<b>65</b>

**ԱՄԱՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ**

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար զնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազան- ցիկների թիվը	Առաջադիմու- թյան %-ը
<b>Բակալավրիատ</b>				
Իրավագիտություն 1-ին	27	5	7	76.9
2-րդ	41	8	8	56.1
3-րդ	50	12	5	58
Պատմություն 1-ին	14	-	2	64.3
2-րդ	16	4	1	37.5
3-րդ	22	1	3	68.1
Տարրական.կրթ. մանկ. և մեթոդիկա 1-ին	8	1	3	62.5
2-րդ	16	1	-	68.7
3-րդ	13	1	5	92.3
<b>Ընդամենը</b>	<b>207</b>	<b>33</b>	<b>34</b>	<b>62.8</b>
<b>Մագիստրատուրա</b>				
Իրավագիտություն 1-ին	10	4	3	50
Պատմություն /իրավ. հիմ./ 1-ին	6	-	4	100
Ման. և մեթոդ. /տարր. կրթության/ 1-ին	1	-	1	100
<b>Ընդամենը</b>	<b>17</b>	<b>4</b>	<b>8</b>	<b>70.5</b>

**2009/2010 ՈՒՄ. ՏԱՐՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ ԵՆ**

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ծեռնարկ	Ուսումնամեթոդական ծեռնարկ	Հոդված	Ձեկուցումների թեզիս
1	1	-	-	50	2

Ֆակուլտետում գործող ամբիոններ թիվը՝ 3

**ՀԱՍԱՐԱԿՎԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄԲԻՈՆ**

Ամբիոնի վարիչ՝ Քուրքյան Լուսիկ Ներսեսի, մանկավարժական գիտությունների թեկնածու, ԳՊՀ պրոֆեսոր

**ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ**

Օհանյան Հայկ Հեքիմի, մանկավարժական գիտությունների թեկնածու, ԳՊՀ պրոֆեսոր  
 Ալեքսանյան Լիլիթ Էդվարդի, ասիստենտ  
 Կոտոլկյան Թամարա Հակոբի, դասախոս  
 Պետրոսյան Նաիրա Ֆահրադի, դասախոս  
 Ղազարյան Օլգա Ալբերտի, լաբորանտ

**ՀԱՍԱՏԵՂՈՂՆԵՐ**

Հակոբյան Հրանտ Խաչատուրի, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր  
 Բարսեղյան Պարզև Աշոտի, փիլիսոփայական գիտությունների թեկնածու  
 Ղաջոյան Համլետ Գրիշայի, փիլիսոփայական գիտությունների թեկնածու, ԳՊՀ դոցենտ  
 Սարգսյան Հովհաննես Լավրենտի, փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ  
 Վարդանյան Կամո Երեմի, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ  
 Այվազյան Էդուարդ Իշխանի, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ  
 Զարգարյան Արփիմե Հրանտի, դասախոս  
 Թովմասյան Լիլիթ Սպարտակի, դասախոս  
 Հովհաննիսյան Էդուարդ Սարգիսի, դասախոս  
 Սաֆարյան Ալիտա Սոսի, դասախոս  
 Սիդեղնիկովա Ռիտա Վյաչեսլավի, դասախոս  
 Դավթյան Արմինե Վահրամի, դասախոս

**ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Երեխայի իմացական ոլորտի, առանձին հատկությունների և վարքի հոգեբանամանկավարժական զարգացման հիմնախնդիրները:

**ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ծեռնարկ	Ուսումնամեթոդական ծեռնարկ	Հոդված	Ձեկուցումների թեզիս
1	-	-	-	16	-

## ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԵԹՈՂԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

**Куркчян Л. Н.** *Իծăăöïđăăæăăïèă æăñđîêîâî îăđàùăïèÿ ñ äăòüè* // Խ. Արսլանի ծննդյան 200-ամյակին նվիրված պրոֆեսորադասախոսական անձնակազմի ասպիրանտների, գիտաշխատողների և հայցորդների 54-րդ գիտական նստաշրջան, Երևան, 2010:

**Քուրքչյան Լ. Ն., Հարությունյան Ն.** Հոգեշտկողական աշխատանքների առանձնահատկությունները բռնության ենթարկված երեխաների հետ // Մանկավարժական կրթության որակի հոգեբանական հիմնախնդիրները, գիտաժողովի նյութեր, 10-12 հուլիս, 2010, Երևան: «Ասողիկ», էջ 223-228:

**Քուրքչյան Լ. Ն., Թովմասյան Լ. Ա.** Աուտիստիկ ախտանիշներ ունեցող երեխաների հետ տարվող անհատական հոգեբանական աշխատանքի յուրահատկությունը // Միջազգային գիտաժողով՝ նվիրված Արցախի պետական համալսարանի 40-ամյակին, Ստեփանակերտ, 2010:

**Քուրքչյան Լ. Ն., Թովմասյան Լ. Ա.,** Աուտիստիկ ախտանիշներ ունեցող երեխաների ինտեգրացիայի դինամիկան նախադպրոցական հաստատությունների խմբերում // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան: Իրավունք, 2010, N 12, էջ 561-566:

**Ղաջոյան Հ. Գ.** Ճշմարտության արժևորումը Ավետիք Իսահակյանի գրական ժառանգության մեջ // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան: Իրավունք, 2010, N 12, էջ 207-216:

**Բարսեղյան Պ. Ա.** Հինդուիզմի գաղափարական ակունքները. Վեդայական կրոն // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան: Իրավունք, 2010, N 12, էջ 216-225:

**Բարսեղյան Պ. Ա.** Հայոց դիցաբանության հնագույն շերտի ուսումնասիրության մեթոդաբանական սկզբունքները // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան: Իրավունք, 2010, N 12, էջ 225-237:

**Բարսեղյան Պ. Ա.** Ջայնիզմի հիմնական առանձնահատկությունները // Հայ աստվածաբանական (գիտական հոդվածների) ժողովածու, Գ, Երևան, ԵՊՀ հրատարակություն, 2009, էջ 100-112:

**Բարսեղյան Պ. Ա.** Սինտոյի տիեզերածնական առասպելները // ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի տարեգիրք, ԵՊՀ հրատարակություն, Երևան, 2009, էջ 134-142:

**Օհանյան Հ. Հ.** Ժամանակակից դիդակտիկայի մի քանի հիմնահարցեր // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան: Իրավունք, 2010, N 12, էջ 556-561:

**Սիդելնիկովա Ռ. Վ.** Մանկատան սաների սոցիալական փոփոխությունները // «Հոգեբանությունը և կյանքը» ամսագիր, Երևան, 2009:

**Դավթյան Ա. Վ., Խաչատրյան Ա.** Անձի սոցիալականացման և խոսքի զարգացման փոխկապվածությունը // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան: Իրավունք, 2010, N 12, էջ 567-576:

**Սարգսյան Հ. Լ.** Հայ միջնադարյան փիլիսոփայության ազգային բնույթը // Գիտական հոդվածների ժողովածու, ՀՌՀ չորրորդ տարեկան գիտաժողով: Երևան, 2010:

**Այվազյան Է. Ի.** Ավագ դպրոցի հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր առարկայի նոր դասընթացի մասին // Մաթեմատիկական և ֆիզիկական դպրոցում, 2010, N 1, էջ 3-10:

**Այվազյան Է. Ի.** Ինչ է գերծանրաբեռվածությունը // «Մանկավարժություն» ամսագիր, 2010, N 3, էջ 4-7:



Հակոբյան Ս., Այվազյան Է., Խաչատրյան Ռ. Մաթեմատիկայի դասընթացը 2010-2011 ուսումնական տարում /մեթոդական նամակ/ // «Մաթեմատիկական դպրոցում» ամսագիր, 2010, N 4, էջ 3-14:

Ներսիսյան Բ., Աբաջյան Ս., Այվազյան Է. Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր -11 // Թեստերի ժողովածու 4 պրակով, Երևան: Էդիտ-Պրինտ, 2010:

### ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ Հարությունյան Համլետ Մալխասի, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

#### ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Ավետյան Վարչամ Վահանի, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ  
 Թևոսյան Բաղդասար Մանուցի, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ  
 Կիրակոսյան Գասպար Լևոնի, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ  
 Ղարաբյոզյան Արմեն Հայկազի, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ  
 Խաչատրյան Արմենակ Սուրենի, պատմական գիտությունների թեկնածու  
 Հակոբյան Արսեն Աշոտի, պատմական գիտությունների թեկնածու, ԳՊՀ դոցենտ  
 Պողոսյան Աշխունջ Ամիրխանի, պատմական գիտությունների թեկնածու, ԳՊՀ դոցենտ  
 Շահբազյան Սոֆյա Կարապետի, լաբորանտ

#### ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ

Ջոհրաբյան Էդուարդ Լենդրուշի, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ  
 Վարդանյան Արգիշտի Մնացականի, դասախոս

Ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ընդհանուր ուղղությունները  
 Գեղարքունիքի Գավառը՝ 1920 թվականից մինչև 1940 թվականը:

#### ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցումների թեզիս
-	1	-	-	12	-

#### ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Կիրակոսյան Գ. Լ. Մեթոդական դիտարկումներ Արևելյան Հայաստանի գյուղացիության սոցիալական շերտավորման և հարցի ուսուցման վերաբերյալ // Միջբուհական գիտաժողովի նյութեր, Հատոր 2-րդ, մաս 1-ին, Հասարակական գիտություններ, Երևան-Գյումրի, 2009:

Կիրակոսյան Գ. Լ. Արևելյան Հայաստանի բնակչության սոցիալական կառուցվածքը XIX դարի 80-90-ական թվականներին (մենագրություն) // Երևան, 2010:

Ավետյան Վ. Վ. Հնագույն մետաղամշակությունը Սևանի ավազանում // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան: Իրավունք, 2010, N 12, էջ 128-138:

**Պողոսյան Ա. Ա.** Արցախի գորգագործական մշակույթի ավանդույթների արեալային տարածման հարցի շուրջ // Միջազգային գիտաժողովի նյութեր, պրակ առաջին, Ստեփանակերտ, 2009, էջ 256-259:

**Պողոսյան Ա. Ա.** «Լոռի-Փամբակ» ենթախմբի գորգերի մասին // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան: Իրավունք, 2010, N 12, էջ 139-145:

**Պողոսյան Ա. Ա.** «Խնձորեսկ» խմբի մի տիպի գորգերի ծագման ու արեալային տարածման հարցի շուրջ // Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում (Հայ ժողովրդական մշակույթ XV), Երևան, 2010, էջ 380-387:

**Ղարազյոզյան Ա. Ջ.** Ղարաղաղ // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան: Իրավունք, 2010, N 12, էջ 145-150:

**Վարդանյան Ա. Մ.** Աղվանից մարզպանության կազմավորումը // Լրաբեր հասարակական գիտությունների, N 1-2, 2010, էջ 101-106:

**Վարդանյան Ա. Մ.** Տարընթերցումներ Աղվանքի գավառների վերաբերյալ // Կանթեղ գիտական հոդվածների ժողովածու, N 2, 2010:

**Հակոբյան Ա. Ա.** Թաթախոս հայեր. պատմություն և ինքնություն, մաս 2 // Armenishch – Deutsche Korrespondenz, 2009, N 1. (գերմաներեն):

**Հակոբյան Ա. Ա.** Փոխանակում և վերաբնակեցում // Armenishch –Deutsche Korrespondenz, 2009, N 3. (գերմաներեն):

**Հակոբյան Ա. Ա.** Հայ փախստականները Հայաստանում. Ձյունաշող // Armenishch –Deutsche Korrespondenz, 2010, N 3. (գերմաներեն):

**Ջոհրաբյան Է. Լ.** Ագրարային վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում և գյուղացիության սոցիալական կարգավիճակը // Գիտությունների ազգային ակադեմիա, Հայոց պատմության հիմնահարցեր, N 11, էջ 316-331:

## **ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ**

### **ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ**

Խաչատրյան Սամվել Արտաշեսի, իրավաբանական գիտությունների թեկնածու, ԳՊՀ պրոֆեսոր

Աֆրիկյան Արևիկ Տելեմակի, դասախոս

Վարդանյան Գեղեցիկ Մարատի, դասախոս

Բախտիկյան Լուսինե Վանիկի, լաբորանտ

### **ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ**

Հակոբյան Հրանուշ Հրանտի, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր  
Հակոբյան Ռուզաննա Խաչիկի, իրավաբանական գիտությունների թեկնածու, ԳՊՀ պրոֆեսոր  
Խաչատրյան Աշոտ Հայկի, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր  
Մարգարյան Վահրամ Տելեմակի, իրավաբանական գիտությունների թեկնածու, ԳՊՀ դոցենտ  
Ապրոյան Արսեն Հրաչիկի, ասիստենտ  
Վարդանյան Մարգարետ Գոռի, ասիստենտ  
Հովհաննիսյան Օլգա Արտյոմի, դասախոս  
Մուրադյան Պապին Օնիկի, դասախոս

Մուրադյան Սկրտիչ Արշավիրի, դասախոս  
Գրիգորյան Տարոն Վրեժի, դասախոս

## ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արդի պայմաններում քաղաքացիական, քրեական և սահմանադրական օրենսդրության բարեփոխման հեռանկարները:

### ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցումների թեզիս
-	1	-	-	22	2

### ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂՎԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **Հակոբյան Յ. Յ.** Հայ իրավական միտքը և XXI դարի մարտահրավերները // Ձեկուցում հայ իրավաբանների միջազգային համաժողովում, Երևան, 19.09.2009թ.:
2. **Հակոբյան Յ. Յ.** Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 62-րդ հոդվածի մեկնաբանություն // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան: Իրավունք, N 12, 2010, էջ 436-446:
3. **Հակոբյան Յ. Յ.** Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 62-րդ, 65-րդ, 66-րդ, 67-րդ, 69-րդ և 73-րդ հոդվածների մեկնաբանություններ // Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, Ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի, Երևան, 2010, էջ 679-685, 391-706, 711-715, 725-731:
4. **Հակոբյան Յ. Յ.** Տեղեկատվական անվտանգությունը և ժամանակի մարտահրավերները // Ձեկուցում սփյուռքահայ լրագրողների համաժողովում, Ստեփանակերտ, 13.10.2010թ.:
5. **Հակոբյան Յ. Յ.** Կանուրջներն արդեն զցված են // Ձեկուցում «Հայկական ճարտարապետությունը և XXI դարը» խորագրով ճարտարապետների համահայկական միջազգային համաժողովում, Երևան, 21.04.2009թ.:
6. **Հակոբյան Յ. Յ., Հակոբյան Ռ. Խ.** Կոռուպցիայի դեմ պայքարի հիմնական ուղղությունները // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Հումանիտար գիտություններ, Երևան, N 11, 2009, էջ 16-25:
7. **Հակոբյան Ռ. Խ.** Նկատառումներ «սահմանադրականություն» և «սահմանադրական պատասխանատվություն» հասկացությունների վերաբերյալ // Օրենք և իրականություն, Միջազգային իրավաբանական գիտական հանդես, N N 4, 6, էջ 1-4; 12-13, Երևան, 2009:
8. **Հակոբյան Ռ. Խ.** Սահմանադրական պատասխանատվության ինստիտուտը՝ որպես գիտական ուսումնասիրման առարկա // ԼՂՀ կրթության և գիտության նախարարության Արցախի պետական համալսարանի միջազգային գիտաժողովի նյութեր՝ նվիրված ԱրՊՀ հիմնադրման 40-ամյակին, Պրակ 1, Ստեփանակերտ, 2009, էջ 275-279:

9. **Հակոբյան Ռ. Խ.** Մարդու և քաղաքացու բավարար կենսամակարդակի սահմանադրական իրավունքը // Օրենք և իրականություն, Միջազգային իրավաբանական գիտական հանդես, N 12, էջ 1-4, Երևան, 2009:
10. **Հակոբյան Ռ. Խ.** Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի դերակատարությունը սահմանադրական պատասխանատվության կիրառման կառուցակարգում // Արդարադատություն, N 2 (4), էջ 1-10, Երևան, 2009:
11. **Հակոբյան Ռ. Խ.** Հայաստանի Հանրապետությունում սպառողների իրավունքների պաշտպանության սահմանադրաիրավական հիմքերը // Օրենք և իրականություն, Միջազգային իրավաբանական գիտական հանդես, N 3, էջ 1-5, Երևան, 2010:
12. **Հակոբյան Ռ. Խ.** Նկատառումներ սահմանադրական պատասխանատվության ինստիտուտի հասկացության և էության վերաբերյալ // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան: Իրավունք, 2010, N 12, էջ 446-457:
13. **Հակոբյան Ռ. Խ.** Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 31.1-րդ, 34-րդ հոդվածների մեկնաբանություններ // Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, Ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի, էջ 380-388; 422-430, Երևան: Իրավունք, 2010:
14. **Խաչատրյան Ա. Հ.** Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի իրավական կարգավիճակի սահմանադրական ամրագրման մի քանի հարցերի շուրջ // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան: Իրավունք, 2010, N 12, էջ 458-471:
15. **Խաչատրյան Ա. Հ.** Տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության հիմնական խնդիրների սահմանադրական ամրագրումը // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան: Իրավունք, 2010, N 12, էջ 471-490:
16. **Խաչատրյան Ա. Հ.** Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 45-րդ, 48-րդ, 70-րդ, 79-րդ, 80-րդ և 83.4-րդ հոդվածների մեկնաբանություններ // Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, Ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի, Երևան, 2010, էջ 526-534, 542-562, 715-720, 761-770, 800-811:
17. **Խաչատրյան Ա. Հ.** Հայաստանի հարկերի համակարգը. իրավաքաղաքական և պատմատեսական ակնարկ (հին շրջանից մինչև 1918թ.) // ՀՀ ԳԱԱ Պատմաբանասիրական հանդես, 2010 N 2(84), էջ 53-69:
18. **Խաչատրյան Ա. Հ., Խաչատրյան Հ. Ա.** Պատգամավորական հարցման և հարցապնդման սահմանադրաիրավական կարգավորումը Հայաստանի Հանրապետությունում // «Մանց» համալսարան, Գիտական հոդվածների ժողովածու, 2010, էջ 206-216:
19. **Խաչատրյան Ա. Հ., Խաչատրյան Հ. Ա.** Ազգային ժողովի արտահերթ նստաշրջանային գործունեության հիմնահարցերը ՀՀ Սահմանադրության 70-րդ հոդվածի մեկնաբանությունների շրջանակում // «Մանց» համալսարան, Գիտական հոդվածների ժողովածու, 2010, էջ 197-206:
20. **Օն՝ ածծյի Ա. Ա.** Ìàððèçàòèÿ äîñóààðñòàáîííé àèàñðè è àá ïñèàáñòàèÿ // Ëîíñèðèðòèèíîá ìðàâîñóàèÿ, N 3, 2009, ñ. 3-9:
21. **Խաչատրյան Ս. Ա.** Տիրիդատ մեծ թագավորի հակաադանդավորական հրամանագրերը, դրանց արքիոլոգիական, իրավաբանական, տրամաբանական և սոցիոլոգիական վերլուծությունը (մեմագրություն) // Երևան, 2010, 126 էջ:
22. **Խաչատրյան Ս. Ա.** Լեգիտիմությունը և լեգալությունը՝ որպես իրավունքի ներքին օբյեկտիվ հատկանիշներ // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան: Իրավունք, 2010, N 12, էջ 496-507:

23. **Խաչատրյան Ս. Ա.** Ջրադաշտական իրավունքի ճանաչման աղբյուրները //ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Երևան: Իրավունք, 2010, N 12, էջ 507-517:
24. **Ապրոյան Ա. Յ.** Երեխայի իրավական կարգավիճակի զարգացման պատմությունը //ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Երևան: Իրավունք, 2010, N 12, էջ 533-546:
25. **Մուրադյան Մ. Ա.** Իրավական ակտերի նախագծի նախապատրաստման և ընդունման գործընթացը //ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Երևան: Իրավունք, 2010, N 12, էջ 547-555:

Դեկան՝ *Ամիրխանյան Սամվել Գրիգորի,*  
*տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր*

Դեկանի տեղակալ՝ *Հերզոյան Մարիամ Նորիկի,*  
*տնտեսագիտության թեկնածու, դոցենտ*

## ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄՆԵՐԸ

Դասիչ	Մասնագիտություն
080300	Ֆինանսներ
081500	Հաշվապահական հաշվառում
080600	Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում

Մասնագիտացումներ՝ տնտեսագետի

Ուսանողների թիվը՝ 371

Շրջանավարտների թիվը՝ 67

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ

**2009-2010 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2010-2011 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ  
ՉԱՐԳԱՅՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ**

2009-2010 ուսումնական տարում տնտեսագիտական ֆակուլտետում շարունակվել է կրթության կրեդիտային համակարգով կազմակերպման գործընթացը: Տնտեսագիտական ֆակուլտետի դեկանատը, համապատասխան ամբիոնները հետևել են կրթական ծրագրերի հիմնական նպատակին, այն է՝ գիտելիքների, ունակությունների և հմտությունների համակցված փոխանցմանը: Դեկանատը հետամուտ է ուսանողի կողմից կրեդիտային համակարգով սահմանվող ուսումնական բեռնվածության ծավալի լիարժեք կատարմանը: Մեր տեսադաշտում է ուսանողի լսարանային, արտալսարանային և ինքնուրույն կատարվող աշխատանքը: Անցյալ ուսումնական տարում, համալսարանի ռեկտորատի աջակցությամբ, ֆակուլտետում դրական առաջընթաց գրանցվեց: Իհարկե, ձեռքբերումների կողքին կան նաև շատ անելիքներ, ինչը պահանջում է գործընթացի համալիր վերլուծություն և հայեցակարգային խնդիրների մշակում:

Անցյալ ուսումնական տարվա ձմեռային քննաշրջանի արդյունքներով տնտեսագիտական ֆակուլտետի՝ բակալավրիատի կրթակարգով սովորող ուսանողների ուսման բացարձակ առաջադիմությունը կազմել է 75.7%, իսկ գարնանային քննաշրջանի արդյունքներով՝ 75.8%: Անցյալ ուսումնական տարին առանձնանում է նրանով, որ ոչ կրեդիտային՝ ավանդական համակարգով սովորող բակալավրիատի վերջին խմբերն ավարտեցին, որոնցից «Բիզնեսի կազմակերպում» մասնագիտության չորրորդ կուրսը փորձնական գնահատվեց կրեդիտային սկզբունքներով:

Առաջադիմությունը առաջին կուրսերում ըստ կիսամյակների կազմել է՝ 75.0 % և 75.4%, երկրորդ կուրսերում՝ համապատասխանաբար՝ 85.6% և 66.7%, երրորդ կուրսերում՝ 64.7% և 84.3%, չորրորդ կուրսերում, առաջին կիսամյակում՝ ընդամենը՝ 79.4%: Ըստ մասնագիտությունների, առաջադիմությունը ունի հետևյալ պատկերը.

«Ֆինանսներ» մասնագիտության խմբերում՝ առաջին կիսամյակում 84.2%, երկրորդ կիսամյակում՝ 63.9%, «Հաշվապահական հաշվառում» մասնագիտության խմբերում 85.7%-ի դիմաց երկրորդ կիսամյակում առաջադիմությունը կազմել է 62.5%, իսկ «Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտության դեպքում առաջադիմությունը պահպանվել է 88 %:

2009-2010 ուս. տարվա առաջին կիսամյակում միայն գերազանց գնահատականներ ստացողների թիվը կազմել է ուսանողների 39.4%, իսկ երկրորդ կիսամյակում՝ 37.3%, գերազանց և լավ գնահատականներ ստացողներին՝ համապատասխանաբար՝ 29.9% և 31.9%, միայն բավարար գնահատականներով սովորողների թիվը կազմել է 7-9%: Միայն

բավարար ստացողների ցուցանիշը նախորդ տարիների համեմատությամբ նվազել է, որը դրական երևույթ է: Գործին նպաստել է կրեդիտային համակարգը, որը խթանել է ուսանողների առաջադիմությանը: Հաշվի առնելով կրեդիտային չափումները՝ ներկայացնենք ուսանողների առաջադիմությունն ըստ միջին որակավորման գնահատականների (ՄՈԳ-ի)։

2009-2010 ուս. տարում՝ ըստ մասնագիտությունների և կուրսերի ձևավորված ՄՈԳ-ը համապատասխան սանդղակներով.

Կուրսերն ըստ մասնագիտությունների	1.7-2.9		3.0-3.5		3.6-4.0	
	ուսանողների թիվը	%	ուսանողների թիվը	%	ուսանողների թիվը	%
Ֆինանսներ 1-ին	11	32	11	32	12	36
Ֆինանսներ 2-րդ	12	33	8	22	16	45
Ֆինանսներ և վարկ 3-րդ	15	35	8	19	20	47
Հաշվապահական հաշվառում 1-ին	14	87	2	13	-	-
Հաշվապահական հաշվառում 2-րդ	20	54	10	27	7	19
Հաշվապահական հաշվառում և աուդիտ 3-րդ	15	56	4	24	8	30
Ձեռնարկությունների տնտ. և կառ. 1-ին	4	100	-	-	-	-
Ձեռնարկությունների տնտ. և կառ. 2-րդ	9	53	5	29	3	18
Բիզնեսի կազմակերպում 3-րդ	21	66	3	9	8	25

ՄՈԳ-ի ցուցանիշներից ակնհայտ է դառնում, որ «Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում» 1-ին կուրսում չկան 3.0-3.5 և 3.6-4.0 միջին որակավորման գնահատականներ ստացողներ: «Հաշվապահական հաշվառում» մասնագիտության 1-ին կուրսի ուսանողների 87%-ի ՄՈԳ-ը կազմում է 1.7- 2.9: Ոչ մի ուսանողի ՄՈԳ-ը չի հասել 3.6-4.0-ի: 3.6-4.0 ՄՈԳ ունեցող ուսանողների տոկոսը բարձր է «Ֆինանսներ» մասնագիտության բոլոր կուրսերում (36-47%): Վիճակը բավարար է «Հաշվապահական հաշվառում» և «Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում» 2-րդ և 3-րդ կուրսերում:

Ֆակուլտետի ուսանողները հետաքրքրված են ՄՈԳ-ի արդյունքներով, որոնք սահմանված կարգով հրապարակվում են:

Կրեդիտային համակարգի պայմաններում արժևորվում է դասերին ներկա լինելու փաստը: Առարկայի դասավանդման գործընթացին 25%-ից ցածր ներկայությունը ուսանողին հարկադրում է լրացնել բացակայությունները: Անպատասխանատու և բացակայող ուսանողների ծնողները հրավիրվում են համալսարան, որպեսզի.



ծնողները տեղյակ լինեն համալսարանի պահանջներին,

հետևեն իրենց երեխաների կրթության գործընթացին:

Փորձը ցույց է տալիս, որ նման միջոցառումները տալիս են դրական արդյունք:

Ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի պաշտպանությունը, ինչպես նաև պետական քննություններն անցկացվել են 2010թ. մայիս ամսին:

Պետական քննություններին մասնակցել են բակալավրիատի 62 ուսանողներ, այդ թվում՝

Ֆինանսներ մասնագիտությամբ - 29 ուսանող

Հաշվապահական հաշվառում մասնագիտությամբ - 19 ուսանող

Բիզնեսի կազմակերպում մասնագիտությամբ - 14 ուսանող:

Նախորդ տարվա 4 շրջանավարտների թույլատրվել է մասնակցելու պետական ավարտական քննություններին և դիպլոմային աշխատանքների պաշտպանությանը: Նրանք ևս ապահովեցին դրական արդյունք:

Հաշվետու տարում բակալավրիատի «Ֆինանսներ և վարկ» մասնագիտությամբ ավարտեց 31 ուսանող, այդ թվում՝ գերազանցության դիպլոմով՝ 7 ուսանող: «Հաշվապահական հաշվառում և աուդիտ» մասնագիտությամբ ավարտեցին 19 ուսանողներ, այդ թվում՝ գերազանցության դիպլոմով 2 ուսանող: «Բիզնեսի կազմակերպում» մասնագիտությամբ ավարտեց 14 ուսանող, նրանցից գերազանցության դիպլոմով՝ 4 ուսանող:

Հաշվետու տարում համալսարանը ավարտեցին առաջին մագիստրոսները, որոնք սովորում էին կրեդիտային համակարգով:

«Ֆինանսներ» մասնագիտությամբ մագիստրոսական թեզերի պաշտպանությանը մասնակցելու իրավունք են ստացել 10 մագիստրոսներ, որոնցից մեկը հարգելի պատճառով չի մասնակցել թեզի պաշտպանությանը: Մնացած 9-ը մագիստրոսներն էլ ապահովել են դրական արդյունք: Թեզերի պաշտպանության արդյունքները հետևյալն են՝

(A+) - 1 ուսանող

(B+) - 3 ուսանող

(B-) - 2 ուսանող

(A-) - 1 ուսանող

(B) - 2 ուսանող:

«Հաշվապահական հաշվառում» մասնագիտության գծով մագիստրոսական թեզեր պաշտպանեց 7 մագիստրոս: Թեզերի պաշտպանության արդյունքները հետևյալն են՝ (A+) - 1 ուսանող, (A) - 2 ուսանող, (A-) - 4 ուսանող:

Մագիստրատուրայի «Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ 3 ուսանող պաշտպանեցին մագիստրոսական թեզերը: Պաշտպանության արդյունքները հետևյալն են՝

(A+) - 1 ուսանող, (A) - 2 ուսանող:

Հաշվետու ժամանակաշրջանում ֆակուլտետի ուսանողների շարժը ունի հետևյալ պատկերը.

	I կիսամյակ	II կիսամյակ	ընդամենը
Ձորակոչվել է բանակ	7	5	12
Ձորացրվել է բանակից	5	2	7
Տեղափոխվել է ԳՊՀ այլ ֆակուլտետներից	3	-	3
Տեղափոխվել է ԳՊՀ այլ ֆակուլտետ	1	-	1
Տեղափոխվել է այլ ԲՈՒՀ	4	3	7
Հեռացվել /ազատվել/ է ԳՊՀ-ից	4	3	7
Վերականգնվել է /տարկետումից, հեռացումից/	3	4	7
Տեղափոխվել է այլ բուհից ԳՊՀ	2	1	3
Տրամադրվել է տարկետում	3	4	7

Դեռևս ուսումնական տարվա սկզբից հեռակա ֆակուլտետից թվով 13 ուսանողներ ազատ ունկնդրի կարգավիճակով մասնակցեցին դասընթացներին, որոնց մեջ եղան ուսանողներ, ովքեր տնտեսագիտական ֆակուլտետ տեղափոխվելուց հետո դրսևորում են ակտիվություն և պատշաճ առաջադիմություն:

Հաշվետու ժամանակաշրջանում ֆակուլտետում սկսեցին դասավանդել նոր դասախոսներ՝ Տնտեսական գործունեության վերլուծություն, Բիզնեսի պլանավորում, Հաշվապահական հաշվառում, Աուդիտ, Ապահովագրական գործ, Բանկային գործ և այլ առարկաների գծով:

Դասախոսական կազմի համալրումը նպաստեց կրթական արդի մեթոդների ներդրմանը: Հիմնական առարկաների գծով էլեկտրոնային դասախոսությունների ստեղծումը հնարավորություն է ընձեռում ուսանողներին՝ նախօրոք ուսումնասիրել թեման, այնուհետև ներկայանալ քննարկման, օգտագործել ինտերնետային կապի հնարավորությունները:

Ինչպես համալսարանում, այնպես էլ ֆակուլտետում կան ուսանողներ, ովքեր ուսանում են արտերկրում: Այժմ Հունաստանի Սալոնիկի համալսարանում սովորում է «Ֆինանսներ և վարկ» 3-րդ կուրսի ուսանողուհի Շուշան Խաչատրյանը: Այս հարցում ուսանողներին պետք է կողմնորոշել և խրախուսել անգլերեն լեզվի իմացությունը:

Տնտեսագիտական ֆակուլտետի դեկանատը, ամբիոնների հետ միասին, պրակտիկայի կազմակերպումը նպատակաուղղում են ուսանողների մասնագիտական ունակությունների շարունակական և հետևողական զարգացմանը՝ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան:

Ուսումնական և արտադրական պրակտիկայի բոլոր փուլերի ծավալն ու բովանդակությունը որոշվում է պրակտիկայի ծրագրով, որը մշակում են համապատասխան ամբիոնները: Այդ ծրագրերն ունեն բովանդակային առանձնահատկություններ՝ կապված կազմակերպությունների իրավական կարգավիճակի հետ:

Ուսանողները պրակտիկան հիմնականում անցկացնում են նախարարություններում, ձեռնարկություններում, առևտրային բանկերում, տարածքային հարկային տեսչություններում, համայնքներում, ֆինանսական կազմակերպություններում և այլուր:

Պրակտիկայի ընթացքում ուսանողները հնարավորություն են ստանում ձեռք բերած տեսական գիտելիքները համալրել պրակտիկ գործունեության հետ, կատարել անհրաժեշտ վերլուծություններ, գիտելիքներն ամրապնդել գործնականում:

Ֆակուլտետում ավանդույթ են դարձել հրավիրված մասնագետների հանդիպումները ուսանողների հետ և նրանց առջև դասախոսություններով հանդես գալը: Դրա լավագույն օրինակը VIVA CELL MTS-ի մի խումբ մասնագետների դասախոսությունների շարքն էր՝ «Մարքետինգային ռազմավարության խնդիրներն ու ժամանակակից մեթոդները» և այլ արդի թեմաներով:

Մեր ուսանողները պարբերաբար մասնակցում են հնգօրյա դասընթացների VIVA CELL MTS-ի երևանյան գրասենյակում:

Այս տարի մեր մագիստրոսներն աշխատանքի են անցել հետևյալ կազմակերպություններում՝ որպես «Գարանտ» լիմենս ապահովագրական գործակալության աշխատակից, «ԳՈՐԾՔ» ՍՊԸ-ի, Աշխատանքային և հարկային օրենսդրությունը պարզաբանող վաճառքի մենեջեր, «Ռեսո» ապահովագրական ընկերության մենեջեր, Յունիբանկի Գավառ մասնաճյուղի մենեջեր, Գեղարքունիքի մարզի Առաջնորդարանի հաշվապահ, ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում ֆինանսաբյուջետային վարչությունում 1-ին կարգի մասնագետ և այլն:

Հաշվետու ժամանակաշրջանում ֆակուլտետի դասախոսները կատարել են գիտահետազոտական աշխատանք, տպագրել գիտական հոդվածներ, հանդես եկել գիտաժողովներում: Տեղի է ունեցել նաև ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության կազմակերպած գիտաժողով՝ նվիրված տնտեսագիտության արդի հիմնախնդիրներին:

Դեկանատը զբաղվում է ուսանողների սոցիալական խնդիրներով: 13 ուսանողներ օգտվում են Հայ օգնության ֆոնդի «Ժիրայր Նիշանյան» հիմնադրամի կրթաթոշակից, 4 ուսանող՝ «Բարեպաշտ սերունդ» հիմնադրամի կրթաթոշակից:

Ֆակուլտետում պարբերաբար կազմակերպվում են ինտելեկտուալ մրցույթներ, էքսկուրսիաներ, տարաբնույթ միջոցառումներ: Գործում է ուսանողական խորհուրդը, տնտեսագետների ակումբը: Ակումբը կազմակերպել է հետևյալ միջոցառումները.

- քննարկում «ՀՀ ՓՄՁ ոլորտը, հիմնախնդիրները և զարգացման միտումները» թեմայով, որին մասնակցել են Գեղարքունիքի մարզի զարգացման «Պանակլան» ՍՊԸ տնօրենը, տեղական տնտեսության մասնակցային ծրագրի փորձագետ, «Եվրակոնստրուկցիա» ԹԻԷՅՓԻ ՍՊԸ գլխավոր հաշվապահ, և տնտեսագիտական ֆակուլտետի դասախոսներ,
- քննարկում «Աշխատաշուկայի վերլուծությունը Գեղարքունիքի մարզում» թեմայով, որին մասնակցում էին Գավառի զբաղվածության մարզային կենտրոնի ղեկավարներ,
- քննարկում «Ապահովագրական գործի կարևորությունը ֆինանսական համակարգում և ներկա վիճակը ՀՀ-ում» թեմայով՝ դասախոսների և հրավիրված մասնագետների մասնակցությամբ:

Կարևորվում են ուսանողության հանդիպումները գործատուների հետ, ձեռնարկվում բոլոր անհրաժեշտ միջոցները՝ որակյալ կրթություն ապահովելու, կիրթ և բազմակողմանի զարգացած մարդիկ դաստիարակելու համար:

Տնտեսագիտական ֆակուլտետի համար առաջնային խնդիր է կրթության որակի բարձրացումը, աշխատաշուկայի պահանջների հաշվառումը, կրթական արդի տեխնոլոգիաների կիրառումը:

Տնտեսագիտական ֆակուլտետի լավագույն ուսանողներ գործուղվում են Եվրոպական երկրների համալսարաններ՝ այնտեղ անցկացնելու ուսումնառության որոշակի հատված:

Նկատի ունենալով որակի ապահովման անհրաժեշտությունը՝ տնտեսագիտական ֆակուլտետի 2010-2011 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգում գլխավոր ենք համարում հետևյալ ուղղությունները.

Որակի ապահովմանը միտված նոր միջոցառումների իրականացում:

Կապերի հաստատում Հայաստանի և արտերկրի առաջատար համալսարանների հետ:

Մագիստրատուրայում գիտահետազոտական աշխատանքների արդյունավետ մեթոդների ներդրում:

Պրակտիկաների ընթացքում ուսանողների մասնագիտական հմտությունների ամրապնդում:

Աշխատաշուկայի հետ հետադարձ կապի ապահովում, գործատուների ներգրավում ուսումնական ծրագրերի արդիականացման գործընթացում:

Այս նպատակով անհրաժեշտ է համախմբել ամբիոնների դասախոսական ներուժը, ներգրավել որակյալ մասնագետների: Որակի ապահովումը հնարավոր ենք համարում կրթության գործընթացի արդիականացման, ուսուցման նոր տեխնոլոգիաների, տեղեկատվական տեխնոլոգիաների ավելի լայն ընդգրկման դեպքում:

Ուսանողի նկատմամբ պետք է ցուցաբերել անհատական մոտեցում: Դասախոսը պետք է տիրապետի ուսանողին ակտիվացնելու, գիտելիքների կուտակմանը մղելու արդյունավետ

ձևերին ու մեթոդներին: Ամբիոնները պետք է ծրագիր մշակեն՝ կրթության ելքային արդյունքների հստակ ապահովման նպատակով: Անհրաժեշտ է բարձրացնել պահանջկոտությունն ու կարգապահությունը, լինել օբյեկտիվ և հետևողական:

Տնտեսագիտական ֆակուլտետի 2010-2011 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգը ընդգրկում է հետևյալ կոնկրետ ուղղություններն ու անելիքները.

- Հետևել տնտեսագիտության և դրա ճյուղերի արդի փոփոխություններին, համապատասխանաբար արդիականացնել առարկայական ծրագրերն ու ուսումնական պլանները:
- Ուսումնասիրել արտասահմանյան համալսարանների համապատասխան մասնագիտությունների ուսումնական պլաններն ու առարկայական ծրագրերը, համադրել ԳՊՀ պլանների և ծրագրերի հետ, նպաստել դասախոսների վերապատրաստման գործընթացին, նոր մասնագետների ներգրավմանը:
- Ամբիոններում որակի տեղաշարժերի հաշվառում կազմակերպել՝ ըստ կուրսերի և ըստ դասընթացների, դրանից բխեցնելով հստակ ժամկետներում դասախոսների և ուսանողների անելիքները: Ֆակուլտետի խորհրդի, ամբիոնների նիստերում քննության առարկա դարձնել ուսման որակը՝ հանդես գալով դրա բարձրացմանը նպաստող նախաձեռնություններով:
- Ամբիոններում կազմակերպել առաջավոր փորձի ուսումնասիրություն և կիրառել առավելագույն արդյունավետություն ապահովող մեթոդներ:
- Բարձրացնել պրակտիկայի արդյունավետությունը, ապահովել ուսանողների շահագրգիռ մասնակցությունը պրակտիկային:
- Պետական ավարտական քննությունների հանձնաժողովների նախագահների դիտողություններից ելնելով ձեռնարկել կոնկրետ քայլեր:
- Կապեր հաստատել համապատասխան մասնագիտությունների գծով աշխարհի առաջատար համալսարաններում աշխատող հայ դասախոսների և ուսանողների հետ: Համագործակցել հիմնականում ուսանողների և դասախոսների փոխանակման, առարկայական և ուսումնական պլանների մշակման, կրթական նոր տեխնոլոգիաների ներդրման ուղղությամբ: Այս աշխատանքը պետք է սկսել ՀՀ պետական բուհերի կոնսորցիումի անդամ համալսարանների հետ:
- Մագիստրատուրա երաշխավորել միայն արժանի հավակնորդներին:
- Ուսանողների շրջանում հարցում-հետազոտություն անցկացնել՝ պարզելու ուսանողների կարծիքը, թե որոնք են ուսման ցածր առաջադիմության պատճառները և ինչ են առաջարկում նրանք՝ որակի ապահովման նպատակով:

- Ամբիոններից պահանջել՝ քննարկել դասախոսությունների և գործնական աշխատանքների կազմակերպման մեթոդները, տարածել լավագույն փորձը:
- Ստուգել ուսանողների՝ ժամանակակից գրականությամբ ապահովվածությունը, ակտիվացնել կապը էլեկտրոնային գրադարանի հետ, անդամագրվել աշխարհի հեղինակավոր գրադարաններին, գրականությունը հասանելի դարձնել ուսանողներին ինչպես ԳՊՀ գրադարաններում և համակարգչային լսարաններում, այնպես էլ անմիջապես համացանց աղբյուրներից:
- Հատուկ ուշադրություն դարձնել օտար լեզուների ուսուցմանը և ուսանողների կողմից օտար լեզուներով տնտեսագիտական գրականության ուսումնասիրմանը:
- Ամբիոնները պետք է օգնություն ցույց տան համալսարանի և ֆակուլտետի ՈՒԳԸ-ներին՝ նպաստելով ուսանողների մոտ գիտահետազոտական հմտությունների ծնավորմանը:
- Մագիստրատուրայի խմբերում պարապող դասախոսներից պահանջել՝ ուսանողների գիտական կարողությունների զարգացում, որակապես նոր բնույթի աշխատանքի կատարում:
- Մագիստրատուրայում ներմուծել կարճաժամկետ՝ մինչև տասնչորս ժամ տևողությամբ հատուկ մասնագիտական դասընթացներ՝ այսպիսով նպաստելով բարձրակարգ մասնագետների կարճաժամկետ ներգրավմանը ուսումնական գործընթացին:
- Ուսման մեջ թերացող ուսանողի համար կազմել անհատական աշխատանքների պլան, կազմակերպել դասալսումներ: Նախատեսում ենք թերացող ուսանողների համար անցկացնել լրացուցիչ խորհրդատվություն:
- Ելնելով ռեսուրսային հնարավորություններից և ուսանողների թվից՝ ըստ մասնագիտությունների ակտիվացնել խորհրդատուների ինստիտուտը:
- Ամրապնդել ակադեմիական քաղաքականության վարչության հետ կապը՝ ուսանողների դասի հաճախումների և առաջադիմության գործը օպերատիվ հսկելու և ծագած խնդիրներին ժամանակին լուծում տալու համար:
- Նպաստել ուսանողների հոգևոր-մշակութային և գեղագիտական զարգացմանը:
- Հետևել ուսանողների կողմից ներքին կարգապահական կանոնների կատարմանը:

Ս. Գ. ԱՄԻՐԻԱՆՅԱՆ  
ԳՊՀ տնտեսագիտական  
ֆակուլտետի ղեկավար

**ՔՆՆԱՇՐՋԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

*ՉՄԵՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ*

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազան- ցիկների թիվը	Առաջադիմու- թյան %-ը
<b>Բակալավրիատ</b>				
Ֆինանսներ				
1-ին	35	7	10	80.0
2-րդ	38	6	16	84.2
Ֆինանսներ և վարկ				
3-րդ	43	15	23	62.8
4-րդ	30	3	12	90.0
Հաշվ. հաշվառում				
1-ին	16	4	1	75.0
2-րդ	42	5	4	85.7
Հաշվ. հաշվ. և աուդիտ				
3-րդ	29	10	7	65.5
4-րդ	19	5	7	73.7
Ձեռնարկ. տնտ. և կառ.				
1-ին	5	3	-	40.0
2-րդ	17	1	3	88.2
Բիզնեսի կազմ.				
3-րդ	30	10	8	66.7
4-րդ	14	4	4	64.3
<b>ԸՆԴԱՄԵՆՆՆԸ</b>	<b>318</b>	<b>73</b>	<b>95</b>	<b>75.8</b>
<b>Մագիստրատուրա</b>				
Ֆինանսներ				
1-ին	8	-	5	87.5
2-րդ	10	-	4	100
Հաշվ. հաշվառում				
1-ին	5	-	1	100
2-րդ	7	-	4	85.7
Ձեռն. տնտես. և կառ.				
1-ին	5	-	4	100
2-րդ	3	-	1	100
<b>ԸՆԴԱՄԵՆՆԸ</b>	<b>38</b>	<b>-</b>	<b>19</b>	<b>94.7</b>

**ԱՄԱՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ**

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար զնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազան- ցիկների թիվը	Առաջադիմու- թյան %-ը
<b>Բակալավրիատ</b>				
Ֆինանսներ 1-ին	36	6	10	80.6
2-րդ	36	13	17	63.9
Ֆինանսներ և վարկ 3-րդ	43	5	11	86.0
Հաշվ. հաշվառում 1-ին	16	4	-	68.8
2-րդ	40	11	11	62.5
Հաշվ. հաշվ. և աուդիտ 3-րդ	28	3	12	85.7
Ձեռն. տնտես. և կառ. 1-ին	5	2	-	60.0
2-րդ	17	3	4	82.4
Բիզնեսի կազմ. 3-րդ	31	6	6	47.1
<b>Ընդամենը</b>	<b>252</b>	<b>53</b>	<b>71</b>	<b>75.8</b>
<b>Մագիստրատուրա</b>				
Ֆինանսներ 1-ին	7	-	4	100
Հաշվ. հաշվառում 1-ին	5	-	1	100
Ձեռն. տնտես. և կառ. 1-ին	5	-	4	100
<b>Ընդամենը</b>	<b>17</b>		<b>9</b>	<b>100</b>



**2009/2010 ՈՒՄ. ՏԱՐՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ ԵՆ**

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	1	-	-	13	-

Ֆակուլտետում գործող ամբիոններ թիվը՝ 3

**ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԱՄԲԻՈՆ**

Ամբիոնի վարիչ՝ *Կարապետյան Վարազդատ Ազատի, տնտեսագիտության թեկնածու, ԳՊՀ դոցենտ*

**ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ**

1. Մովսեսյան Դավիթ Մերուժանի - տնտեսագիտության թեկնածու, ԳՊՀ դոցենտ
2. Ավետիսյան Աստղիկ Սիմոնի - դասախոս, գործավար
3. Խաչատրյան Գայանե Արտիկի - դասախոս, լաբորանտ
4. Մուրադյան Գուրգեն Գևորգի - դասախոս
5. Հերզոյան Մարիամ Նորիկի - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
6. Խչեյան Մակիչ Համլետի - տնտեսագիտության թեկնածու

**ՀԱՍԱՏԵՂՈՂՆԵՐ**

Հարությունյան Հարություն Սարգսի - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ  
 Խաչատրյան Հակոբ Հայկի - տնտեսագիտության թեկնածու, ԳՊՀ պրոֆեսոր  
 Սերգոյան Գեղամ Պարույրի - տնտեսագիտության հայցորդ  
 Ծատրյան Քրիստինե Վլադիկի - դասախոս  
 Գրիգորյան Արտյոմ Ատոմի - դասախոս  
 Սահակյան Կարեն Էդիկի - դասախոս

**ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Տեղական և տարածքային տնտեսական զարգացման հիմնախնդիրներ

**ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	-	-	-	2	-

1. Հերզոյան Մ. Ն. Մարդկային ռեսուրսները որպես կառավարման գործընթացի արդյունավետ կազմակերպման գրավական // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Յունանիտար գիտություններ, N 11, 2009, էջ 283-291:
2. Խաչատրյան Գ. Ա. Հարկային բեռի ազդեցությունը առևտրային կազմակերպությունների ֆինանսական կայունության վրա // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Յունանիտար գիտություններ, N 11, 2009, էջ 318-323:

## ՀԱՇՎԱՊԱՅԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Հակոբ Մելսիկի Ղուլոյան,*  
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր

### ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Խլղաթյան Իշխան Երեմի - տնտեսագիտության թեկնածու, պրոֆեսոր  
Առաքելյան Վալերի Հովհաննեսի - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ  
Ղաջոյան Կարինե Համլետի - դասախոս  
Գաբրիելյան Նազելի - դասախոս, լաբորանտ

### ՀԱՍՍՏԵՂՈՂՆԵՐ

1. Ամիրխանյան Սամվել Գրիգորի - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
2. Այրումյան Իրինա Գագիկի - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
3. Սարգսյան Պարզև Սուրիկի - դասախոս
4. Եղիազարյան Սամվել Ռադիկի - դասախոս
5. Հակոբյան Անահիտ Ալեքսանի - դասախոս
6. Մարգարյան Հասմիկ Անդրանիկի - դասախոս
7. Դանիելյան Նաիրա Ռուբենի - դասախոս
8. Օհանյան Այծեմիկ Վաղարշակի - դասախոս
9. Պողոսյան Ռուդիկ Գեորգու - դասախոս

## ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- ա) Ձեռնարկությունների (կազմակերպությունների) տնտեսական գործունեության տնտեսագիտական վերլուծության և ֆինանսական պլանավորման մեթոդիկաների մշակում և կատարելագործման հիմնախնդիրները:
- բ) Ձեռնարկությունների (կազմակերպությունների) կառավարման մեթոդների, մեխանիզմների, գործիքների և տեխնոլոգիաների մշակման և կատարելագործման հիմնական ուղղությունները:
- գ) Կազմակերպություններում հաշվապահական հաշվառման, հարկային հաշվառման և աուդիտի մեթոդոլոգիայի և կազմակերպման կատարելագործման հիմնահարցերը:

### ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	Ռեսուրսային ծեռնարկ	Ռեսուրսամեթոդական ծեռնարկ	Հոդված	Ձեկուցումների թեզիս
-	1	-	-	10	-

**ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՌԻՍՈՒՄԱԿԱՆ ԴԻՍՍԵՐՏԱԿԱՆ ՀԻՄՆԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ**

**Խլղաթյան Ի. Ե., Ամիրխանյան Ս. Գ.** Հետքեյնսյան տեսության մի քանի հարցադրումների մասին // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Հունամիտար գիտություններ, N 11, 2009, էջ 279-282:

**Ղուլոյան Հ. Մ.** Կազմակերպության ֆինանսական դրության կանխատեսման մեթոդները // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Հունամիտար գիտություններ, N 11, 2009, էջ 314-318:

**Պողոսյան Ռ. Գ.** Գյուղատնտեսական արտադրանքի և կենսաբանական ակտիվների հաշվառումը ՀՀ-ում // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Հունամիտար գիտություններ, N 11, 2009, էջ 309-314:

**Առաքելյան Վ. Հ., Մարգարյան Հ. Ա., Ղարազյոզյան Ա. Ա., Մելքոնյան Ա. Լ.** Ռազմավարական այլընտրանքների ընտրության հնարավոր չափանիշները // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Հունամիտար գիտություններ, N11, 2009, էջ 291-297:

**Առաքելյան Վ. Հ., Գրիգորյան Գ. Ռ., Մարգարյան Հ. Ա., Մելքոնյան Ա. Լ.** Արտադրանքի շերտավորման ռազմավարության մի քանի հարցեր // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Հունամիտար գիտություններ, N 11, 2009, էջ 297-303:

**Առաքելյան Վ. Հ., Մարգարյան Հ. Ա.** Տնտեսական գործունեության վերլուծության արդի խնդիրները // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Հունամիտար գիտություններ, N 11, 2009, էջ 303-309:

**Առաքելյան Վ. Հ., Ղուլոյան Հ. Մ., Սարգսյան Գ. Ռ.** Համաշխարհային բանկի խմբի գործունեության գնահատումը ՀՀ-ում, մենագրություն, Երևան: Նահապետ, 2009:

**Խլղաթյան Ի. Ե., Ամիրխանյան Ս. Գ.** Ժամանակակից ֆինանսական ճգնաժամի առաջացման պատճառների մասին // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Տնտեսագիտություն, N 12, 2010, էջ 159-163:

**Պողոսյան Ռ. Գ.** Երկու հարց՝ կապված անուղղակի մեթոդով դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության հետ // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Տնտեսագիտություն, N 12, 2010, էջ 187-194:

**Առաքելյան Վ. Հ., Մարգարյան Հ. Ա., Մարտիրոսյան Մ.** Կիզակետման, առաջինը մուտք գործման և սիներգիզմի ռազմավարության մի քանի հարցեր // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Տնտեսագիտություն, N12, 2010, էջ 194-200:

**Առաքելյան Վ. Հ., Գաբրիելյան Ն. Է.** Կազմակերպությունների «Վճարունակություն» և «Իրացվելիություն» հասկացությունների բացահայտման մի քանի հարցեր // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Տնտեսագիտություն, N 12, 2010, էջ 172-175:

**ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՄԲԻՈՆ**

Ամբիոնի վարիչ՝ **Ջաթոյան Հրաչյա Սամվելի,**  
տնտեսագիտության թեկնածու, ԳՊՀ պրոֆեսոր

**ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ**

1. Հովակիմյան Ռազմիկ Ռուբենի - տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ
2. Նավասարդյան Անեթ Ալֆրեդի - դասախոս
3. Բագոյան Սոնա Սահակի - դասախոս, լաբորանտ

**ՀԱՍԱՏԵՂՈՂՆԵՐ**

1. Սարգսյան Գոռ Ռոբերտի - տնտեսագիտության թեկնածու
2. Բարսեղյան Արմինե Վահագնի -մանկավարժական գիտությունների թեկնածու
3. Թադևոսյան Նարինե Հակոբի - դասախոս
4. Շահինյան Վարդուհի Էդիկի - ասիստենտ
5. Մելքոնյան Վաչագան Ռաֆայելի- տնտեսագիտության թեկնածու, ԳՊՀ պրոֆեսոր
6. Հովեյան Աստղիկ Գագիկի - դասախոս

**ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Տնտեսական ճգնաժամի ազդեցությունը ՓՄՁ ոլորտի վրա և դրա հաղթահարման հնարավոր ուղիները:

**ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցումների թեզիս
-	-	-	-	1	-

**ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԵԹՈՂԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ**

1. Հ. Ս. Զաքոյան, Ա. Վ. Բարսեղյան      Տարածքային տնտեսական զարգացման անհամասնությունների մեղմացման հնարավորությունները      Հայաստանի Հանրապետությունում: ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Տնտեսագիտություն, N 12 2010, էջ 167-172:

## ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Դեկան՝ Կուտուզյան Նելլի Ալբերտի,  
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, դոցենտ

### ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄՆԵՐԸ

Դասիչ	Մասնագիտություն
031000	Հայոց լեզու և գրականություն
032400	Ռուսաց լեզու և գրականություն
030400	Պատմություն (իրավունքի հիմունքներ)
020400	Աշխարհագրություն
051100	Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթության)

Մասնագիտացումներ՝  
Բանասեր. Հայոց լեզվի և գրականության ուսուցիչ  
Բանասեր. Ռուսաց լեզվի և գրականության ուսուցիչ  
Պատմաբան. Պատմության /իրավունքի հիմունքների/ ուսուցիչ  
Աշխարհագրագետ. Աշխարհագրության ուսուցիչ  
Տարրական դասարանների ուսուցիչ

Ուսանողների թիվը՝ 996

Շրջանավարտների թիվը՝ 118

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ  
ՖԱԿՈՒԼՏԵՏԻ 2009-2010 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2010-2011  
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ**

2009-2010 ուսումնական տարում ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետում կրթական գործընթացը կազմակերպվել է՝ համաձայն ուսումնական պլանների և համալսարանում գործող կանոնակարգերի: Հետևողականորեն միջոցառումներ են ձեռնարկվել ուսանողների պատշաճ կարգապահությունը և առաջադիմությունն ապահովելու, հաճախումները բարձր մակարդակի վրա պահելու ուղղությամբ: Հաշվետու ժամանակահատվածում անհարգելի բացակայությունների պատճառով նկատողություն է ստացել 187 ուսանող, խիստ նկատողություն՝ 46 ուսանող, դասերին չներկայանալու պատճառով համալսարանից հեռացվել է 22 ուսանող: 2009-2010 ուսումնական տարում նպատակային տեղերում ընդունվել է 11 ուսանող, որոնցից 9-ը Գեղարքունիքի մարզից են, 1-ը՝ Արարատի, 1-ը՝ Կոտայքի մարզերից, նրանց հետ կնքվել են եռակողմ պայմանագրեր: Դասատվության որակը, ինչպես նաև ուսանողների գիտելիքների ստուգման գործընթացները վերահսկելու նպատակով դեկանատի կողմից կազմակերպվել են դասալսումներ և հանձնաժողովային քննություններ: Նախքան կիսամյակի սկիզբը, բոլոր ամբիոններում վերանայվել են հեռակա կրթական ծրագրերը, թեմատիկ պլանները, ստուգողական և կուրսային աշխատանքների թեմաները, քննական առարկաների հարցաշարերը, որոնք հաստատվել են ամբիոնների միստերում: Հաշվի առնելով վերջին տարիներին դպրոցական առարկայական ծրագրերում կատարված փոփոխությունները՝ դեկանատը առաջարկել է ամբիոններին վերանայել և արդիականացնել առարկայական ծրագրերը: Հեռակա ուսուցման բոլոր 30 կուրսերում ուսանողներին տրամադրվել են քննական հարցաշարերը և առաջարկվող մասնագիտական գրականության ցանկը:

Հաշվետու ուսումնական տարվա 1-ին կիսամյակում ուսանողների առաջադիմությունը նախքան լուծարքային շրջանը կազմել է 80,2%, իսկ 2-րդ կիսամյակում՝ 56,3%: Առաջադիմության էական տարբերությունն՝ ըստ կիսամյակների, պայմանավորված է քննաշրջաններում քննությունների թվի տարբերությամբ: Հունվարյան քննաշրջանը ավելի քիչ թվով քննություններ է ներառում, քան երկրորդ կիսամյակը: Բացի այդ, ստուգողական բոլոր աշխատանքները կատարվում են 2-րդ կիսամյակի ընթացքում: Առաջադիմության

ցուցանիշները մտահոգիչ են, և դեկանատն ու ամբիոններն այս ուղղությամբ անելիքներ շատ ունեն:

Ուսանողների առաջադիմության բարձրացման, ուսանողների կրթական շահագրգռվածության ապահովման, ինքնուրույն աշխատանքի խթանման, ուսուցման պլանավորման մեջ նրանց դերակատարության բարձրացման նպատակով անցկացվել են հարցումներ՝ ուսումնական գործընթացի և ստացած կրթությունից ուսանողների բավարարվածության գնահատման վերաբերյալ: Հարցումները վերաբերվել են գիտելիքների գնահատման չափանիշներին, կրթական ծրագրերի ուսումնամեթոդական ապահովվածությանը, ռեկտորատի, դեկանատի, վարչատնտեսական անձնակազմի աշխատանքի գնահատմանը: Ստացված արդյունքները վերլուծվել են ռեկտորատում և դեկանատում: Բոլոր դիտողությունների և առաջարկությունների ուղղությամբ կատարվում են աշխատանքներ՝ ապահովելու արդյունավետ կրթական միջավայր և որակյալ ուսուցում: Հարցումներ են կազմակերպվել նաև շրջանավարտների շրջանում: Հետագայում ուսանողների ներգրավվածությունը որակի ապահովման գործընթացում ապահովելու նկատառումով հարցումներ են անցկացվել նաև առաջին կուրսի ուսանողների շրջանում՝ համալսարանում ուսումնառությունից նրանց սպասելիքներն ու ակնկալիքները ճշգրտելու, նախասիրություններն ու ցանկությունները հաշվի առնելու, ինչպես նաև նախկին կրթության վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով:

Դասախոսական անձնակազմը համալրվել է որակյալ մասնագետներով: Ուսուցման որակը բարձրացնելու կարևոր գործոններից է նաև ուսումնամեթոդական բազան: Շարունակվում է հեռակա ուսուցման համակարգում սովորողների համար ուսումնամեթոդական ձեռնարկների պատրաստման և հրատարակման գործընթացը: Պատմության, ռուսաց լեզվի և գրականության ամբիոններում հաշվետու ուստարում մշակվել են ուսումնամեթոդական ձեռնարկներ հեռակայող ուսանողների համար: Արդի գիտական նորույթների մասին տեղեկացնելու նպատակով ֆակուլտետում պարբերաբար կազմակերպվում են սեմինար-քննարկումներ՝ այլ բուհերի գիտաշխատողների մասնակցությամբ:

Ավարտական կուրսերի ուսանողների պրակտիկաների անցկացումից հետո գործատուների կողմից ստացվել են դրական արձագանքներ՝ շրջանավարտների գիտելիքների, գործնական կարողությունների վերաբերյալ: Հեռակա ուսուցման ֆակուլտետի ուսանողները պետական ավարտական քննություններին ցուցաբերեցին 74,2% առաջադիմություն: Պետական քննությունների արդյունքներով կարմիր դիպլոմ շնորհվեց 4 շրջանավարտի:

Հեռակա ուսուցման ֆակուլտետի զարգացման գործընթացում կարևոր ենք համարում.

Ուսումնամեթոդական նյութերի ապահովումը: Բոլոր դասընթաց-մոդուլների առարկայական ծրագրերը միևնույն ձևաչափով՝ կոմպետենցիաների միջոցով սահմանելը կարող է էապես հեշտացնել հեռակա ուսուցման համակարգում դասավանդվող առարկաների թեմատիկ պլանավորումը: Գործնականում տարբերվում են կրթական վերջնարդյունքների ներկայացման երկու տեսակ՝ «շեմային» վերջնարդյունքներ, որոնք որոշում են անցողիկ մակարդակը, և «ցանկալի» արդյունքներ, որոնք ցույց են տալիս, թե ձեռք բերվելիք կոմպետենցիաների ինչ մակարդակ է ակնկալում դասախոսը միջին ուսանողից: Առարկայական ծրագրում դասախոսի կողմից սահմանված շեմային արդյունքները պետք է ապահովել հեռակա ուսուցման համակարգում:

Հասարակության սոցիալ-տնտեսական զարգացման ուղղությունները, կրթության միջազգայնացումը, տեղական և համաշխարհային աշխատաշուկաների պահանջները, միջազգային չափանիշներին համապատասխան մրցունակ մասնագետների պատրաստման խնդիրը անհրաժեշտություն է դարձնում՝ մշակել կրեդիտային համակարգի կիրարկման ընթացակարգ հեռակա ուսուցման համակարգում և կրեդիտային ուսուցումը ներդնել նոր ուսումնական տարվանից հեռակա ուսուցման բոլոր մասնագիտությունների առաջին կուրսերում:

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով՝ նախապատրաստել աշխատաշուկայում պահանջարկ ունեցող «Բնօգտագործման տնտեսագիտություն» մասնագիտության գծով անհրաժեշտ փաստաթղթային փաթեթ, ապահովել անհրաժեշտ ուսումնամեթոդական, նյութատեխնիկական բազա և դիմել ՀՀ Կրթության և գիտության նախարարություն՝ գործունեության թույլտվություն ստանալու նպատակով:

Ուսումնական պլաններում բուն մասնագիտական կոմպետենցիաների ձևավորմանն ուղղված դասընթացների ժամաքանակն ավելացնել՝ ի հաշիվ ոչ մասնագիտական դասընթացների:

Բարձրացնել մասնագիտական առարկաներից ստուգողական և կուրսային աշխատանքների կազմակերպման, գնահատման գործընթացի արդյունավետությունը:

Ուսուցման հեռակա համակարգում դասընթացների կարճատևությունը բացասաբար է անդրադառնում պակաս ինքնուրույնություն ունեցող ուսանողի ակադեմիական առաջադիմության վրա: Հնարավորության դեպքում առաջարկում ենք խրախուսել ազատ ունկնդրի կարգավիճակով ակադեմիապես թույլ ուսանողների մասնակցությունը առկա ուսուցման համապատասխան դասընթացներին:

Նպատակահարմար ենք գտնում գիտելիքների ստուգման նպատակով քննությունների անցկացման թեստային եղանակի փորձարկում՝ ուսանողների տեղափոխությունների ժամանակ:



Շարունակել կրթական ծրագրերից սովորողների բավարարվածության հարցումների պրակտիկան ավարտական կուրսերի ուսանողների շրջանում, ինչպես նաև անցկացնել հարցումներ առաջին կուրսեցիների շրջանում՝ համալսարանից ունեցած սպասումների, ակնկալիքների վերաբերյալ: Հարցման արդյունքների վերլուծությունը հաշվի առնել ուսուցման գործընթացը պլանավորելիս և կազմակերպելիս:

Քննաշրջանների կարճատևությունը և դասընթացներին անմիջապես հաջորդելու փաստը բացասաբար են անդրադառնում որոշ ուսանողների ակադեմիական առաջադիմության, ինչպես նաև դեկանատի կողմից վերահսկողության գործընթացի վրա: Ուստի, անհրաժեշտ է քննաշրջանին հատկացվող ժամկետները վերանայել՝ հաշվի առնելով ուսանողների կարծիքները:

Իրավագիտություն և հաշվապահական հաշվառում ամբիոններում նախապատրաստել ուսումնամեթոդական ձեռնարկներ՝ հեռակա ուսուցման համակարգում սովորող ուսանողների համար, մշակել ստուգողական աշխատանքների կատարման ուղեցույցեր՝ գործնական աշխատանքների օրինակներով:

Անհրաժեշտ է ակտիվացնել հեռակա ուսուցման ֆակուլտետի ուսանողական խորհրդի համագործակցությունը առկա ուսուցման ֆակուլտետների ուսխորհուրդների, ուսանողական գիտական ընկերության հետ, ինչպես նաև ապահովել ուսանողների մասնակցությունը համալսարանում ընթացող բարեփոխումներին, իրականացվող ծրագրերին:

Անհրաժեշտ է ամրապնդել կապը հեռակա ուսուցման ֆակուլտետի շրջանավարտների և համալսարանի միջև, խրախուսել շրջանավարտների կողմից համալսարանի տեղեկատվական աջակցությունը, այլ բնույթի նախաձեռնությունները: Ստեղծել ուսանողների և շրջանավարտների էլեկտրոնային հասցեների տեղեկատվական բանկ:

Ն. Ա. Կուտուզյան  
ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր

**ՔՆՆԱՇՐՋԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆՐԸ**

**ՉՄԵՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ**

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազանցիկ- ների թիվը	Առաջադի- մության %-ը
<b>Հայոց լեզու և գրականություն</b>				
1-ին	35	-	6	97,1
2-րդ	28	11	-	39,3
3-րդ	39	-	3	94,9
4-րդ	26	4	-	65,4
5-րդ	39	2	1	84,6
6-րդ	33	4	3	78,8
<b>Ռուսաց լեզու և գրականություն</b>				
1-ին	24	1	4	95,8
2-րդ	24	5	2	70,8
3-րդ	19	-	6	94,7
4-րդ	18	2	2	88,9
5-րդ	29	-	17	96,6
6-րդ	22	-	10	95,5
<b>Պատմություն /իրավունքի հիմ./</b>				
1-ին	67	3	-	89,6
2-րդ	53	7	-	69,8
3-րդ	49	8	1	71,4
4-րդ	31	5	7	77,4
5-րդ	47	-	2	83
6-րդ	35	4	-	74,3
<b>Աշխարհագրություն</b>				
1-ին	36	15	3	41,7
2-րդ	25	9	3	36
3-րդ	35	5	4	80
4-րդ	22	1	-	86,4
5-րդ	34	-	7	100
6-րդ	25	-	-	96
<b>Մանկավարժություն և մեթոդիկա /տարր. կրթ./</b>				
1-ին	58	-	-	98,3
2-րդ	24	6	-	66,7
3-րդ	34	8	2	50
4-րդ	17	-	1	100
5-րդ	32	-	-	96,9
6-րդ	30	4	-	83,3
<b>Ընդամենը</b>	<b>990</b>	<b>104</b>	<b>84</b>	<b>80,2</b>

**ԱՄԱՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՁԱՆ**

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազան- ցիկների թիվը	Առաջադի- մության %-ը
<b>Հայոց լեզու և գրականություն</b>				
1-ին	38	19	4	39,5
2-րդ	29	4	1	58,6
3-րդ	39	5	-	64,1
4-րդ	24	4	-	75
5-րդ	38	-	9	86,8
<b>Ռուսաց լեզու և գրականություն</b>				
1-ին	25	1	1	80
2-րդ	23	-	2	82,6
3-րդ	19	2	-	89,5
4-րդ	16	-	1	75
5-րդ	29	1	2	75,9
<b>Պատմություն /իրավունքի հիմ./</b>				
1-ին	62	40	-	17,7
2-րդ	50	16	1	32
3-րդ	48	6	-	45,8
4-րդ	32	18	3	37,5
5-րդ	46	1	1	89,1
<b>Աշխարհագրություն</b>				
1-ին	34	13	1	44,1
2-րդ	25	17	-	28
3-րդ	35	18	1	22,9
4-րդ	21	10	1	33,3
5-րդ	34	14	3	38,2
<b>Մանկավարժություն և մեթոդիկա /տարր. կրթ./</b>				
1-ին	58	14	-	67,2
2-րդ	25	4	-	60
3-րդ	33	5	2	84,8
4-րդ	18	5	2	55,6
5-րդ	32	3	1	84,4
<b>ԸՆԴՀԱՆՈՒՐ</b>	<b>833</b>	<b>220</b>	<b>36</b>	<b>56,3</b>

## ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

### Վարչության պետ՝ *Ղարիբյան Ալինա Ամբիկի*

Գավառի պետական համալսարանի Ակադեմիական քաղաքականության վարչությունը (այսուհետ՝ ԱՔՎ) 2009-2010 ուսումնական տարում ենթարկվել է կառուցվածքային որոշակի փոփոխությունների, ինչի արդյունքում ԱՔՎ-ն ներառում է հետևյալ բաժինները.

- մինչբուհական /նախապատրաստական/,
- բակալավրիատի աշխատանքների կազմակերպման,
- մագիստրատուրայի աշխատանքների կազմակերպման,
- որակի ապահովման:

Հաշվի առնելով համալսարանում կրթության որակի բարձրացման խնդրի կարևորությունը՝ անհրաժեշտություն առաջացավ ստեղծել համապատասխան կառույց և համալսարանի խորհրդի 2010 թ. փետրվարի 6-ի որոշմամբ ԱՔՎ-ի կազմում ստեղծվեց որակի ապահովման բաժին:

2009-2010 ուսումնական տարում կազմակերպվեցին նախապատրաստական դասընթացներ 8 առարկաների գծով: Դասընթացներին մասնակցեցին շուրջ հիսուն դիմորդներ: Նրանցից քսանհինգը դարձան ԳՊՀ առկա և հեռակա ուսուցման ֆակուլտետների ուսանողներ, ընդ որում՝ 3-ը ընդունվեցին անվճար տեղերում:

ԱՔՎ-ի գործունեության հաջորդ կարևոր ուղղությունը բակալավրիատի և մագիստրատուրայի ուսումնական գործընթացի կազմակերպումն է՝ այդ աշխատանքներում ներգրավելով համալսարանի համապատասխան ստորաբաժանումներին:

Ուսումնական տարվա սկզբում վարչության կողմից պատրաստվել և գիտխորհրդի հաստատմանն են ներկայացվել 2009-2010 ուսումնական տարվա ուսումնական աշխատանքների հաշվարկի նորմերը և առաջին կիսամյակի ուսումնական ժամանակացույցը:

Վարչությունը, համագործակցելով ամբիոնների, դեկանատների և մեթոդիավորումների հետ, ճշգրտել և բարելավել է բակալավրիատի և մագիստրատուրայի ուսումնական պլանները, որոնք բակալավրիատի մասով ներկայացվել են երկու փաթեթների տեսքով՝ ավանդական քառամյա բակալավրիատի և կրեդիտային սկզբունքներով գործող բակալավրիատի, քանի որ հաշվետու տարում համալսարանը թողարկեց վերջին ոչ կրեդիտային (ավանդական) քառամյա բակալավրիատի շրջանավարտներին:

Վարչության կողմից ստուգվել են համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի ուսումնական ծանրաբեռնվածությունները, և վերահսկվել է դրանց կատարման ընթացքը:

Հաշվարկվել են ժամավճարային հիմունքներով աշխատող դասախոսների ուսումնական բեռնվածքները և ամենամսյա կատարված ժամաքանակները ներկայացվել են վճարման:

Կատարվել են դասացուցակների ճշգրտումներ և լսարանային ֆոնդի ստուգումներ՝ անխափան ուսումնական գործընթաց ապահովելու նպատակով: Այս աշխատանքը շարունակական բնույթ ունի, ինչի արդյունքում դասացուցակները դարձել են այսպես կոչված «կայուն շարժական»: Հստակ գործել է ուսումնական ժամանակացույցը:

Կատարվել են նաև դասաժամերի կատարման ամենօրյա ստուգումներ, վերահսկվել է ընթացիկ և ամփոփիչ քննությունների կատարման ընթացքը և համապատասխանությունը նշված ժամանակացույցին:

ԱԲՎ-ի կողմից վերահսկվել են պրակտիկաների բոլոր ձևերի անցկացման և գնահատման գործընթացները, քննարկվել են պրակտիկաների ղեկավարների հաշվետվությունները, յուրաքանչյուր կիսամյակի վերջում ստուգվել են դասամատյանները, հաշվառվել են կատարված ժամաքանակները, իսկ յուրաքանչյուր կիսամյակի սկզբում անցկացվել են ֆակուլտետների մեթոդական խորհուրդների նիստեր, հաշվի են առնվել եղած բոլոր կարծիքներն ու նկատառումները, վարչության կողմից մշակվել և գիտխորհրդին ու ռեկտորատին են ներկայացվել համապատասխան առաջարկություններ:

Ուսումնական տարվա սկզբին ամբիոնների առաջին նիստերից հետո վարչություն են ներկայացվել ամբիոնների կողմից հաստատված՝ բակալավրիատի և մագիստրատուրայի առարկայական ծրագրերի փաթեթները և ամբիոնների ուսումնական աշխատանքների ծավալները:

Յուրաքանչյուր կիսամյակի սկզբում ԱԲՎ-ն անցկացնում է ամբիոնների փաստաթղթային ստուգումներ՝ ամբիոնների փաստաթղթային հաշվառման թերթիկներով:

Հաշվետու ուսումնական տարվա վերջում վարչության կողմից ճշգրտվել և ամբողջացվել են համալսարանի առկա և հեռակա ֆակուլտետների շրջանավարտների անձնական գործերը, ակադեմիական փաստաթղթերը, դիպլոմի միջուկների գնահատականները:

ԱԲՎ-ն ղեկանատների և ամբիոնների հետ միասին նախապատրաստել և հաշվառել է շրջանավարտների ավարտական փաստաթղթերը, մշակվել ու նախապատրաստվել են քննական և պետական ավարտական որակավորման մատյանները:

ԱԲՎ-ի աշխատանքները միտված են մագիստրատուրայի կրթական ծրագրի ուսումնական և հետազոտական բաղադրիչների պատշաժ իրականացմանը: 2009-2010 ուսումնական տարում համալսարանը կատարեց մագիստրատուրայում կրեդիտային համակարգով իր երրորդ ընդունելությունը և թողարկեց իր առաջին մագիստրոս շրջանավարտներին: Կատարվեցին ծրագրային որոշ փոփոխություններ, մասնավորապես՝ «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության ուղղությամբ 2008-2009 ուսումնական

տարում մագիստրատուրայում գործում էր «Հայ գրականության պատմություն» մագիստրոսական ծրագիրը, 2009-2010 ուսումնական տարում նույն բաժնի կրթական երկրորդ աստիճանում գործեց «Ժամանակակից հայոց լեզու և թարգմանչական գործ» մագիստրոսական ծրագիրը, իսկ 2010-2011 ուսումնական տարում նույն բաժնում միաժամանակ գործում են նշված երկու ծրագրերը: Վարչությունը, կրեդիտային համակարգի պահանջներից ելնելով, ամբիոնների և դեկանատների հետ միասին մշակել և հաստատման է ներկայացրել ոչ միայն պարտադիր մասնագիտական, այլ նաև ուսանողի կողմից ընտրովի մագիստրոսական դասընթացների ուսումնական ծրագրերը:

Մագիստրոսական ծրագրի պատշաճ կատարման անհրաժեշտությունից ելնելով՝ մագիստրատուրայի առաջին կուրսեցիների ցուցակների հստակեցումից հետո պատրաստվել և մագիստրոսներին են հանձնվել նրանց անհատական մատյանները:

Վարչությունը նաև հետամուտ է եղել ԳԴՀ մագիստրոսական կրթական ծրագրով նախատեսված պահանջների կատարմանը չորս կիսամյակների ընթացքում: Մասնավորապես, ամբիոնները կազմակերպել են մագիստրոսական թեզերի թեմաների և գիտական ղեկավարների հաստատման, մագիստրոսների կողմից թեմայի ընտրության, ծրագրի ղեկավարի կողմից խորհրդատվությունների անցկացման, գիտամանկավարժական և գիտահետազոտական պրակտիկաների անցկացման, ավարտական աշխատանքի ներկայացման, գրախոսման և այլ աշխատանքներ:

Բացի բակալավրիատում և մագիստրատուրայում ուսումնական գործընթացների կազմակերպման գործառույթներից, ԱԲՎ-ն իրականացնում է կրթության որակի բարձրացմանը միտված այլ աշխատանքներ, կազմակերպում ամենամյա հարցումներ ուսանողների շրջանում:

Ուսումնական գործընթացի որակի ապահովման նպատակով վարչությունը համատեղ աշխատանքներ է ծավալում ֆակուլտետների, ամբիոնների հետ: ԱԲՎ-ն սերտորեն համագործակցում է նաև կադրերի բաժնի, հաշվապահության, լրատվության և հանրության հետ կապերի բաժնի, համակարգչային տեխնիկայի շահագործման բաժնի, արխիվի, գրադարանի և համալսարանի այլ կառուցվածքային ստորաբաժանումների հետ:

Վարչությունը համագործակցում է նաև ուսանողական խորհրդի հետ՝ նպատակ ունենալով նրանց ուժերը նպատակաուղղել նախ և առաջ կրթության որակի բարձրացմանը:

Համալսարանի վարչական անձնակազմի և ուսանողների համար վարչությունը կազմակերպեց համակարգչային դասընթացներ, որոնք շարունակվում են ընթացիկ ուսումնական տարում: Նախատեսվում է նաև անգլերեն և ռուսերեն լեզուների ուսուցման կազմակերպում՝ օգտագործելով համապատասխան ամբիոնների ներուժը:

Դեռևս նախորդ ուսումնական տարիներին սկիզբ առած՝ ուսանողների անձնական և ուսումնական տվյալների բազայի ստեղծման գործընթացը հաշվետու ժամանակահատվածում շարունակվել է ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային ձևերով:

Վարչությունում ստեղծված տեղեկատվական բազայի հիման վրա ուսումնական գործընթացին վերաբերող տեղեկատվական-վիճակագրական տվյալները նախապատրաստվում են կիսամյակային, տարեկան հաշվետվությունների համար, ներկայացվում ՀՀ ԿԳ նախարարություն, Վիճակագրական վարչության պետական կոմիտե և այլ իրավասու մարմիններ ու կազմակերպություններ:

ԳՊՀ-ում Ակադեմիական քաղաքականության վարչությունը վերահսկել է ուսանողների ինչպես ներբուհական, այնպես էլ միջբուհական տեղափոխություններ ընթացքը՝ կազմակերպելով առկա առարկայական տարբերությունների հանձման գործընթացը: 2009-2010 ուսումնական տարում գրանցվել է ուսանողների հետևյալ շարժը.

h/h	ԳՊՀ ուսանողների շարժը	2009-2010 ուս. տարի
1	Այլ բուհերից ԳՊՀ են տեղափոխվել	6
2	ԳՊՀ-ից այլ բուհեր են տեղափոխվել	5
3	Երկրորդ մասնագիտություն ստացողներ	10
4	Քուլեջից ԳՊՀ են ընդունվել	2
5	Առկա ուսուցման ֆակուլտետից տեղափոխվել են հեռակա	28
6	Հեռակա ուսուցման ֆակուլտետից տեղափոխվել են առկա	18
7	Ներֆակուլտետային տեղափոխություն են կատարել	7
8	Տարկետում են ստացել	113
	→ առողջական վիճակի հիմքով	36
	→ զինծառայության մեկնելու հիմքով	77
9	ԳՊՀ-ից հեռացվել են	138
10	ԳՊՀ-ից ազատվել են	16
11	Վերականգնվել են ԳՊՀ՝	135
	→ զորացրումից հետո	60
	→ հեռացումից հետո	27
	→ տարկետումից հետո	18
	→ պետական քննություններից թույլատրվածներ	30
	<b>Ընդհանուր շարժը</b>	<b>478</b>

Ինչպես վերը նշվեց, 2009-2010 ուսումնական տարվա երկրորդ կեսին վարչության կազմում ստեղծվեց նոր բաժին, որը կոչվեց որակի ապահովման բաժին: Բաժինը

արդյունավետորեն աշխատեց Որակի ապահովման ազգային կենտրոնի առաջադրած հարցաշարերի լրացման, մագիստրոսների ավարտական փաստաթղթի՝ դիպլոմի նոր, եվրոպական չափանիշներին համապատասխան հավելվածի ստեղծման ուղղություններով: ԱԲՎ-ն ուսումնասիրում է այլ բուհերում ձեռնարկվող քայլերը՝ աշխատանքների կազմակերպման նորանոր եղանակներ ներդնելու նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում վարչությունը աշխատել է պատասխանատվությամբ, բարեխղճորեն: Աստիճանաբար ԱԲՎ-ում ստեղծվում է ուսումնական գործընթացի համար անհրաժեշտ փաստաթղթային բազա: Վարչության աշխատակիցները ձեռք են բերում որոշակի փորձ և հմտություններ, որոնք նպաստում են համալսարանում ուսումնական գործընթացի ճիշտ և արդյունավետ կազմակերպմանը:



## ԳՎՎՈՒԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

### Գրադարանի վարիչ՝ Նահրա Ֆահրադի Պետրոսյան

Գրքային ունեցվածքը՝	36.900	Բաժին՝	2
ընթերցողները՝	3.200	ընթերցասրահ՝	2
հաճախումը՝	400.000	աշխատողների թիվը՝	3
գրքատացքը՝	500.500		

2009-2010 ուսումնական տարվա ընթացքում ԳՊՀ գրադարանի գրքային ֆոնդը համալրվել է շուրջ 1000 կտոր մասնագիտական և գեղարվեստական գրականությամբ: Ֆոնդերի համալրումը կատարվել է՝ ելնելով ուսումնական ծրագրերի և համալսարանի գիտական գործընթացի պահանջներից, համալսարանի կողմից պարբերաբար կատարվող գնումների և հեղինակների ու անհատների նվիրատվությունների շնորհիվ: Ընթացիկ տարում կատարվել է մասնագիտական գրականության զտում, գրքերի ստուգում և վերանորոգում: Կատարվել է նաև մասնագիտական գրականության վերադասավորում և համակարգում, շարունակվել է գրքային ֆոնդի համակարգչային մուտքագրումը, նկարագրումը և դասակարգումը՝ ըստ գրադարանային մատենագիտական դասակարգումների: Մասնագիտական գրականության ֆոնդերի գրացուցակները տրամադրվել են համապատասխան ամբիոններին՝ ուսանողներին կուրսային, անհատական և ավարտական աշխատանքները պատրաստելիս գրականությամբ աջակցելու նպատակով:

Բազմաթիվ մատենագիտական ցանկերով, գիտական հոդվածների գրացուցակներով, քարտարաններով և բառարաններով հարստացվել է գրադարանային տեղեկատվական համակարգը: Գրադարանում առկա «Բանբեր Երևանի Համալսարանի», «Լրաբեր հասարակական գիտությունների», «Պատմա-բանասիրական հանդես», «Գիտության աշխարհում», «Օրենք և իրականություն», «Հանրային կառավարում», «Արդարադատություն», «Ազրոգիտություն» և այլ ամսագրերից, գիտական հանդեսներից ու հոդվածների ժողովածուներից մշակվել և կազմվել է «Գիտական հոդվածների մատենագիտություն», որը պարբերաբար լրացվում է նոր հոդվածների ցանկերով և թարմացված տարբերակը տեղադրվում է [www.gsu.am](http://www.gsu.am) ԳՊՀ ինտերնետային կայքում: Կայքում տեղադրված է նաև ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածուների 12 համարների մատենագիտական ցանկը: Այսուհետ ինտերնետից օգտվող ուսանողներն ու դասախոսները կարող են տեղեկանալ ԳՊՀ

գրադարանում առկա գիտական հոդվածների մատենագիտական ցանկին առանց գրադարան այցելելու: Ավելին, մատենագիտական ցանկերում նշված հոդվածների հասցեները հուշում են այն ինտերնետային կայքերը, որոնց միջոցով հնարավորություն է ընձեռնվում ծանոթանալու ամբողջ հոդվածին՝ կրկին չայցելելով գրադարան:

ԳՊՀ գրադարանը, լինելով «Հայկական գրադարանային միության» անդամ, համագործակցում է Ազգային գրադարանի, ինչպես նաև այլ բուհերի գրադարանների հետ և իրականացնում է ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածուների ամբողջ փաթեթի փոխանակում այլ ժողովածուների հետ: ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածուները շրջանառվում են նաև Արցախի, Երևանի, Գյումրու, Վանաձորի բուհերում:

Հաշվետու ժամանակաշրջանում ԳՊՀ գրադարանի աշխատակազմը ձեռնամուխ է եղել էլեկտրոնային գրադարանի ստեղծման աշխատանքներին: Ինտերնետային կայքերից ներբեռնված շուրջ 300 գրքերից կազմված գրադարանի դասակարգումը, նկարագրումը և նոր գրքերի ներբեռնման աշխատանքները ընթացքի մեջ են և այսուհետ լինելու են գրադարանի ամենօրյա և շարունակական աշխատանքի բաղկացուցիչ մասը: Էլեկտրոնային գրադարանի գործածումը և ուսանողների ու դասախոսների սպասասարկումը նախատեսվում է սկսել 2010-2011 ուսումնական տարվա ընթացքում:

Այսպիսով, գրադարանը աշխատում է հնարավորինս լավ կատարել Գավառի պետական համալսարանի գիտական-տեղեկատվական կենտրոնի իր առաքելությունը:

## ԳՊՀ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԵՎ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

### *Բաժնի վարիչ՝ Պապին Օնիկի Մուրադյան*

ԳՊՀ հանրության հետ կապերի և լրատվության բաժինը ստեղծվել է ԳՊՀ խորհրդի 2010 թվականի փետրվարի 6-ի որոշմամբ: Բաժինը ԳՊՀ կառուցվածքային ստորաբաժանում է, որի նպատակն է ԳՊՀ-ի գործունեության մասին տեղեկատվության տարածումը հասարակության լայն շրջանակներում, հասարակական գործընթացներում ԳՊՀ-ի ակտիվ ներգրավումը:

Բաժինը հրատարակում է «Գավառի համալսարան» թերթը եւ թարմացնում ԳՊՀ-ի ինտերնետային կայքը՝ [www.gsu.am](http://www.gsu.am):

Հաշվետու ժամանակահատվածում մշակվել է ԳՊՀ գիտական խորհրդի հաստատմանն է ներկայացվել Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի գործունեության կանոնակարգը: Կազմվել է բաժնի ռազմավարական ծրագիրը, որը ներառում է բուհի ներքին և արտաքին կապերին վերաբերող ծրագրեր: Բաժինը սերտորեն համագործակցում է ԳՊՀ ուսանողական խորհրդի, ուսանողական գիտական ընկերության, շրջանավարտների և կարիերայի կենտրոնի, դիմորդների հետ, կազմակերպում է այլ շահառուների հետ տարվող աշխատանքները:

2009-2010 ուսումնական տարվա ընթացքում Հանրության հետ կապերի և լրատվության բաժնին աշխատանքներ է իրականացրել հետեւյալ ուղղություններով՝

### **Ձանգվածային լրատվության միջոցների հետ աշխատանք**

**Համագործակցություն կրթական ոլորտի պետական և հասարակական կազմակերպությունների հետ**

Դիմորդների հետ տարվող աշխատանքներ

Շրջանավարտներ և կարիերայի կենտրոնի գործունեության կազմակերպում,

Ուսանողական խորհրդի հետ տարվող աշխատանքներ,

Ուսանողական գիտական ընկերության գործունեության ակտիվացում,

«Գավառի համալսարան» թերթի հրապարակում,

[www.gsu.am](http://www.gsu.am) ինտերնետային կայքի պատրաստում և համալրում

Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային կազմակերպությունների և տարբեր կառույցների հետ աշխատանքներ:

**Ձանգվածային լրատվության միջոցների հետ աշխատանք.**

Գավառի «Քյավառ», Սևանի «STV 1», Մարտունու «Ձանգակ» հեռուստաընկերությունների և «Գեղամա աշխարհ» թերթի հետ սկսվել է ակտիվ համագործակցություն:

ԳՊՀ-ում տեղի ունեցող միջոցառումները պարբերաբար լուսաբանվել են ինչպես մարզային լրատվամիջոցների, այնպես էլ հանրապետական ՁԼՄ-ների կողմից:

ԳՊՀ-ի վերաբերյալ տեղեկություններն էլեկտրոնային փոստով ուղարկվել են հայաստանյան լրատվամիջոցների հասցեներով: ԳՊՀ գործունեությանը պարբերաբար անդրադարձել են «Արմենպրես» լրատվական գործակալությունը, «Հայաստանի Հանրապետություն», «Առավոտ», «Ազգ» օրաթերթերը, «Կրթություն» շաբաթաթերթը և մի շարք էլեկտրոնային պարբերականներ:

Հայաստանյան տպագիր մամուլում, էլեկտրոնային թերթերում եւ լրատվական գործակալություններում ԳՊՀ-ին վերաբերող նյութերն առանձնացվել են եւ կազմվել է «Մամուլը ԳՊՀ-ի մասին» ալբոմ-ժողովածու:

Մարզային ՁԼՄ-ներից ԳՊՀ-ի գործունեությունն առավել հաճախ լուսաբանել է «Քյավառ» հեռուստաընկերությունը: Հաշվետու ժամանակահատվածում լուսաբանվել է ավելի քան 27 միջոցառում:

«Քյավառ» հեռուստատեսությունից վերցվել են ԳՊՀ-ին վերաբերող արխիվային նյութերը եւ կազմվել է ԳՊՀ video արխիվը:

«Սփյուռ» եւ «Գլոբալինֆո» տեղեկատվական ծառայություններին տրամադրվել են ԳՊՀ պատմությանն ու գործունեությանը, վարչական ու ֆակուլտետային ստորաբաժանումներին, ինչպես նաեւ մատուցող կրթական ծառայություններին վերաբերող տեղեկատվություն:

Գեղարքունիքի մարզի պաշտոնական ինտերնետային կայքում՝ [www.gegharkunik.region.am](http://www.gegharkunik.region.am), ԳՊՀ-ին վերաբերող տեղեկատվությունը թարմացվել է, արդիականացվել:

Թվանշայնացվել և արխիվացվել են ԳՊՀ հիմնադրման օրվանից մինչ այժմ լուսանկարված թղթային լուսանկարները:

ԳՊՀ միջոցառումների ընթացքում լուսանկարված էլեկտրոնային լուսանկարներին արխիվացվել են՝ ըստ համապատասխան ամսաթվերի եւ անհրաժեշտության դեպքում օգտագործվում են տեղեկատվական բուկլետներ եւ գրքույկներ տպագրելիս:

**Համագործակցություն կրթական ոլորտի պետական եւ հասարակական կազմակերպությունների հետ.**

- ✓ Մշակվել է ԳՊՀ ակադեմիական ազնվության հայեցակարգի նախագիծ, որի հաստատումից հետո համալսարանականների համար կազմակերպվել է Ակադեմիական ազնվության հայեցակարգի շնորհանդեսը: ԳՊՀ-ն առաջին բուհն է, որն ընդունել է Ակադեմիական ազնվության հայեցակարգ: Այս փաստաթղթում ամրագրված է դասախոսների, ուսանողների և համալսարանի աշխատակազմի մյուս անդամների վարքագծի կանոնները:
- ✓ Գնահատման եւ թեստավորման կենտրոնի առաջարկով 2010 թ միասնական քննությունների կազմակերպման և անցկացման գործընթացին մասնակցել են նաեւ ԳՊՀ ուսանողները: ԳՊՀ տարբեր ֆակուլտետների 20 ուսանող վերապատրաստվել են ԳԹԿ մասնագետների կողմից, ապա մասնակցել միասնական քննություններին՝ որպես կազմակերպիչներ:
- ✓ ԳՊՀ գրադարանը նոր գրքերով համալրելու նպատակով՝ համագործակցել ենք Երևանի պետական համալսարանի և այլ գիտակրթական հաստատությունների հետ եւ ԳՊՀ գրադարան է բերվել անհրաժեշտ մասնագիտական գրականություն:
- ✓ Պատրաստվել և տպագրվել է «Առաջին կուրսեցու ուղեցույց» գրքույկը, որը բովանդակում է ԳՊՀ ուսանողի խարտիան, ԳՊՀ ստեղծման համառոտ պատմությունը, անդրադառնում բուհի կառավարմանն ու կառուցվածքին, ուսումնական գործընթացի կազմակերպմանը, ֆակուլտետների գործունեությանը, ուսանողական և մշակութային կառույցներին, ԳՊՀ կանոնակարգերին (ուսանողական նպաստների, կրթաթոշակների հատկացման վերաբերյալ), ԳՊՀ սովորողի իրավունքներին ու պարտականություններին, ինչպես նաև ներառում է օգտակար խորհուրդներ ուսանողների համար:
- ✓ Ֆակուլտետներում կազմակերպվել են առաջին կուրսեցիներին նվիրված միջոցառումներ, և բոլոր առաջին կուրսեցիներին բաժանվել են «Առաջին կուրսեցու փաթեթներ»,
- ✓ Սանկտ Պետերբուրգում կազմակերպվող «Սելիգեր-2010» համառուսաստանյան կրթական ֆորումին մասնակցելու համար ԳՊՀ ուսանողների շրջանում անցկացվեց մրցույթ՝ ստեղծվեց հանձնաժողով: Ֆորումի ձևաչափին համապատասխան ստուգեց հայտագրված ուսանողների ռուսերեն և անգլերեն լեզուների իմացությունը, այնուհետև դրական միավորներ ստացած ուսանողներին տրվեցին մեթոդական ցուցումներ օն-լայն հայտերը լրացնելու համար: Մրցույթի արդյունքում ռուսաստանյան ժյուրիի անդամներն ընտրել էին ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի բիզնեսի կազմակերպում բաժնի 3-րդ

կուրսի ուսանող Արամ Ղարաօյրոյանին, ով 2010թ հուլիսի 1-8-ը Ս. Պետերբուրգում մասնակցեց «Սելիգեր 2010» համառուսաստանյան կրթական ֆորումին:

- ✓ «Քաղաքացիական նախաձեռնություններ» ծրագրի շրջանակներում մի խումբ ԳՊՀ ուսանողներ 2009թ. հոկտեմբերից մինչև 2010թ. փետրվարը Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության կենտրոնի Գեղարքունիքի մասնաճյուղում մասնակցեցին Կենտրոնի կողմից կազմակերպված ուսուցումներին:
- ✓ 2010թ. մայիսի 21-ին Հայկական Կարիտաս ընկերության հրավերով Գավառ քաղաքի հրապարակում ԳՊՀ մի խումբ ուսանողներ մասնակցել են «Զրո աղքատություն» խորագրով մոնավառությանը:
- ✓ «People In Need» ընկերության հայաստանյան մասնաճյուղի Գեղարքունիքի մարզի տարածքային միգրացիոն կենտրոնի հետ համատեղ 2010թ. մայիսի 6-ին ԳՊՀ ուսանողների համար կազմակերպվել է «Միգրացիոն հոսքեր եւ դրանց հետեւանքները» թեմայով սեմինար քննարկում, որի շրջանակում ներկայացվեցին Գեղարքունիքի մարզի աշխատաշուկայի վիճակագրական տվյալները: Քննարկվեց երկքաղաքացիության մասին նորմեր բովանդակող ՀՀ օրինագծի դրույթները և «Ուսանողական միգրացիային» վերաբերող հարցեր:

### ***Ուսանողական խորհուրդ.***

Կարևորելով ԳՊՀ ուսանողական խորհրդի դերը՝ Հանրության հետ կապերի և լրատվության բաժինը հետեւողական է եղել ակտիվացնել ԳՊՀ ուսանողական կառույցների գործունեությունը՝ մի շարք ծրագրեր իրականացնելով համալսարանի և ֆակուլտետային ուսանողական խորհուրդների հետ: Նախ, ֆակուլտետային ուսանողական խորհուրդները ներկայացրել են իրենց աշխատանքային ծրագրերը: Ստեղծվել է համագործակցություն ուսանողական խորհրդի և ուսանողական ծրագրային թիմի միջև: Այս երկու ուսանողական կառույցները համատեղ իրականացրել են մի շարք միջոցառումներ:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ հաշվետու ժամանակահատվածում լրանալու է ԳՊՀ ուսանողական խորհրդի նախագահի պաշտոնավարման ժամկետը եւ անհրաժեշտ է անցկացնել նոր ընտրություն՝ Հանրության հետ կապերի և լրատվության բաժինը մշակել է ընտրությունների անցկացման փաստաթղթերի փաթեթը, և իրականացրել նախապատրաստական աշխատանքներ 2010-2011 ուստարվա սկզբին ԳՊՀ ՈՒԽ նախագահի ընտրություններ անցկացնելու նպատակով: Առաջին անգամ բուհի առկա համակարգում սովորող բոլոր ուսանողները անմիջական ժողովրդավարության սկզբունքով գաղտնի քվեարկությամբ ընտրել են ՈՒԽ նախագահ:

### ***Ուսանողական գիտական ընկերություն.***

Առկա ուսուցման ֆակուլտետներում ձևավորվել են ուսանողական գիտական ընկերություններ, որոնք կիսամյակի ընթացքում կազմակերպել են թեմատիկ գիտաժողովներ, այնուհետև ուսանողների գիտական զեկուցումները ֆակուլտետային կոորդինատորների միջոցով հանձնվել է Հանրության հետ կապերի և լրատվության բաժին: Խմբագրվելուց և վերջնական տեսքի բերվելուց հետո դրանք հանձնվել են համապատասխան ամբիոններին: Մասնագիտական երաշխավորագրեր ստացած զեկուցումները տպագրվելու են ԳՊՀ ուսանողական հոդվածների առաջին ժողովածույում: Հանրության հետ կապերի և լրատվության բաժինը քայլեր է ձեռնարկում ԳՊՀ ուսանողական գիտական ընկերության գործունեությունն ակտիվացնելու ուղղությամբ:

### ***Դիմորդների հետ տարվող աշխատանքներ.***

- ✓ Գեղարքունիքի մարզպետարանում կազմակերպվել է կլոր սեղան-քննարկում՝ «Մասնագիտական կողմնորոշում» խորագրով, որին մասնակցել են ԳՊՀ վարչական կազմի ներկայացուցիչների, դպրոցների տնօրենների, դիմորդների, ուսանողների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:
- ✓ «Դասը վարում են համալսարանականները» ծրագրի շրջանակներում ԳՊՀ դասախոսական կազմն այցելել է մարզի ավելի քան 40 դպրոցներ և պատասխանել աշակերտներին հետաքրքրող հարցերին: Աշակերտների շրջանում անցկացվել են հարցումներ. յուրաքանչյուր այցից հետո ամփոփվել են հարցաթերթիկներում նշված պատասխանները եւ ներկայացվել են ԳՊՀ ռեկտորատի անդամներին: Տարեվերջին արդյունքների ամփոփման հիման վրա կազմվել է հաշվետվություն:
- ✓ Տպագրվել է «ԳՊՀ դիմորդի ուղեցույց-2010»-ը և տեղադրվել ԳՊՀ պաշտոնական ինտերնետային կայքում՝ [www.gsu.am](http://www.gsu.am): Այն ուղարկվել է նաև հանրապետության շուրջ 100 հանրակրթական դպրոցների էլեկտրոնային փոստի հասցեներով, իսկ տպագիր տարբերակը Գեղարքունիքի մարզպետարանի կրթության, սպորտի, մշակույթի և երիտասարդության հարցերով վարչության միջոցով տրամադրվել է մարզի բոլոր հանրակրթական դպրոցներին: «Դասը վարում են համալսարանականները» ծրագրի շրջանակներում Գեղարքունիքի մարզի դպրոցներ այցելած համալսարանականները ուղեցույցը բաժանել են մարզի ավարտական դասարանի աշակերտներին:

### ***Շրջանավարտների և կարիերայի կենտրոն.***

2010թ. հունիսի 29-ին ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնը կազմակերպեց «Ուսանողների և շրջանավարտների կարիերայի խնդիրները արդի աշխատաշուկայի համատեքստում»: Հանրապետական սեմինար-քննարկմանը մասնակցեց նաև ԳՊՀ

հանրության հետ կապերի և լրատվության բաժինը: Բաժնի վարիչը սեմինարի մասնակիցների ուշադրությունը հրավիրեց մարզային բուհերում առկա հիմնախնդիրներին և առաջարկեց ուղորտում իրականացվող ծրագրերում մասնակից դարձնել նաև մարզային բուհերին:

«Էյջ-Էս-բի-սի բանկ Հայաստան» ՓԲԸ-ի ներկայացուցիչները առաջարկեցին ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի ուսանողների ուսումնական պրակտիկան անցնել իրենց բանկում: Իսկ ՀՀ սպորտի և երիտասարդության նախարարության ներկայացուցիչը առաջարկեց ակտիվ համագործակցություն սկսել «Երիտասարդական միջոցառումների կազմակերպման կենտրոն» ՊՈԱԿ-ի Գեղարքունիքի մասնաճյուղի հետ:

### **«Գավառի համալսարան» ուսումնական թերթ.**

Պարբերականին հիմնականում թղթակցում են «Տպագիր և էլեկտրոնային ժուռնալիստիկայի հիմունքներ» դասընթացին հաճախող ուսանողները:

Ամսաթերթն ավելի հետաքրքիր ու բովանդակալից դարձնելու նպատակով այս ուսումնական տարվա ընթացքում ուսանողների և դասախոսների շրջանում հարցում է անցկացվել, թե համալսարանականներն ինչպիսին կցանկանային տեսնել «Գավառի համալսարան» թերթը և ինչպիսի նյութեր կցանկանան կարդալ: Հարցման արդյունքներն ամփոփելուց հետո պարբերականում ավելացել են մի շարք խորագրեր՝ «Մասնագետի անկյուն», «Ուսանողի ամբիոն», «Լսարանից դուրս» կամ «Դիմանկար» և այլն:

«Գավառի համալսարան» թերթն իր համարներում լուսաբանում է բուհի առօրյան՝ ուսումնական ու գիտական գործունեությունը, ներկայացնում ուսանողներին հետաքրքրող հարցեր, անդրադառնում գիտաժողովների, մրցույթների անցկացմանն ու ուսանողական խորհրդի գործունեությանը:

Թերթում տեղ են գտել համալսարանում իրականացվող կրթական բարեփոխումներին, կարգապահության բարձրացմանը, որակի ապահովմանը վերաբերող տեղեկատվական նյութեր: Մասնավորապես, անդրադարձել ենք համալսարանում կրեդիտային համակարգի ներդրման, կրթության որակի ապահովման ներբուհական ընթացակարգերի արմատավորման գործընթացներին, ինչպես նաև համալսարանի արտաքին կապերին:

Թերթի էջերում հաճախ են տպագրվել նյութեր Գավառի պետական համալսարանի և հանրապետության մյուս բուհերի, գիտական-մշակութային կազմակերպությունների, միջազգային կառույցների համագործակցության մասին: Պարբերականի ուշադրությունից չի վրիպում նաև մեր դասախոսների մասնակցությունը տարատեսակ և տարաբնույթ միջազգային և հանրապետական գիտաժողովներին:

Թերթն էլեկտրոնային տարբերակով տեղադրվում է ԳՊՀ պաշտոնական ինտերնետային կայքում՝ [www.gsu.am](http://www.gsu.am):



*www.gsu.am* ինտերնետային կայք.

Ուսանողների շրջանում հարցումներ են անցկացրել ԳՊՀ ինտերնետային կայքի վերաբարձացման եւ բարելավման ուղղությամբ:

Կայքը գտնվում է կարգավորման փուլում: Այսպիսով, ԳՊՀ հանրության հետ կապերի և լրատվության բաժինը աշխատանքներ է իրականացրել տարբեր ուղղություններով և դեռևս շատ անելիքներ ունի:

### **ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԵՎ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱԺԻ 2010-2011 ՈՒՍԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ**

ԳՊՀ հանրության հետ կապերի և լրատվության բաժնի զարգացման հայեցակարգում ներառված են այն գերակա խնդիրները, որոնք արդի գիտակրթական հաստատությունների գործունեության անօտարելի բաղադրամասն են կազմում:

Ուսումնասիրելով հանրապետական ու միջազգային կրթական հաստատությունների փորձը՝ հանգել ենք այն եզրակացության, որ մեր օրերում խիստ անհրաժեշտություն է բուհական համակարգում ունենալ հանրության և լրատվամիջոցների հետ կապերն համակարգող կառույց:

ԳՊՀ հանրության հետ կապերի և լրատվության բաժինն իր գործունեությունն իրականացնում է երկու ուղղություններով՝ ելնելով արտաքին և ներքին հանրային կապերի (PR) առանձնահատկություններից: Ենթադրվում է, որ ներքին PR իրականացնելու անհրաժեշտություն չի զգացվում, սակայն պետք է նկատի ունենալ, որ բուհն այն կառույցն է, որում ներառված են սոցիալական տարբեր խմբերի ու խավերի ներկայացուցիչներ՝ ասվածը վերաբերում է թե՛ ուսանողներին, թե՛ պրոֆեսորադասախոսական կազմին, հետևաբար անելիքները բազմազան են ու բազմաբնույթ:

Ներքին կապերի դեպքում աշխատանքներն իրականացվում են ռեկտորատի, ուսանողական խորհրդի, ուսանողական գիտական ընկերության և այլ ստորաբաժանումների հետ, սակայն ներքին և արտաքին կապերի սահմաններն այդքան էլ զատորոշված չեն: Մի շարք ծրագրերում դրանք հատվում են և առավել նպաստում բուհի զարգացմանն ու վարկանիշի բարձրացմանը: Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի գործունեությունը դրա վառ դրսևորումն է: Մի կողմից բուհը ներսում աշխատանքներ է իրականացնում ավարտական կուրսի ուսանողների հետ, մյուս կողմից էլ պայմանավորվածություն է ձեռք բերում գործատուների հետ՝ այդ շրջանավարտներին աշխատանքի ընդունելու հարցում: Դիմորդների հետ տարվող աշխատանքը, կարելի է համարել արտաքին կապերի դրսևորում, սակայն պետք է նկատել, որ ամիսներ հետո այն վերածվում է ներքին կապերի: Այսօրվա

դիմորդները մեր վաղվա ուսանողներն են, ուսխորհրդի ու ուսանողական գիտական ընկերության անդամները: Նույնը վերաբերում է «Գավառի համալսարան» թերթին ու [www.gsu.am](http://www.gsu.am) կայքին: Այստեղ բացառապես հրապարակվում են Գավառի պետական համալսարանին վերաբերող նյութեր և լուսանկարներ, սակայն այն ընթերցում ու դիտում են շատերը: Այսպիսով, հասարակության հետ կապերի և լրատվության բաժինը ապահովում է Գավառի պետական համալսարանի և՛ ներսի, և՛ դրսի կապերը: Նախատեսում ենք հրականացնել հետևյալ գործառույթներն՝ ըստ ոլորտների.

- ✓ Աշխատանքներ իրականացնել ԳՊՀ խորհրդանշանները (դրոշ, օրհներգ) մշակելու, լոգոն վերանայելու և մասսայականացնելու ուղղությամբ,
- ✓ Ծրագրել, կազմակերպել և վերահսկել ՋԼՄ-ների, հասարակական կազմակերպությունների և այլ շահագրգիռ կառույցների հետ համագործակցության և տեղեկատվության փոխանակման գործընթացը,
- ✓ Վերլուծել լրատվամիջոցներում համալսարանի, կրթության և գիտության ոլորտի կարևոր խնդիրների մասին հրապարակված և հեռարձակված նյութերը:
- ✓ Աշխատանքներ կատարել համալսարանի մասին հասարակական կարծիքի ու դրական վարկանիշի ձևավորման ուղղությամբ՝ ներհամալսարանական ընթացակարգերի, աշխատառճի, ներքին էթիկական նորմերի, վարվելակերպի և այլ խնդիրների վերաբերյալ մեթոդական ուղեցույցների մշակման ու ներդրման և այլ աշխատանքների միջոցով,
- ✓ Մեթոդական աջակցություն ցուցաբերել քաղաքացիների ընդունելության, օրենքով սահմանված կարգով նրանց հարցերի, առաջարկությունների, բողոքների, նամակների, դիմումների քննարկման գործընթացում,
- ✓ Նպաստել համալսարանի՝ տեղեկատվության տարածման տպագիր միջոցների զարգացմանը (պաշտոնաթերթ, տեղեկատվական թերթիկների, բուկլետներ, բացիկներ և այլն),
- ✓ Ջարգացնել ԳՊՀ ինտերնետային կայքը, ապահովել նրա օպերատիվ թարմացումները և առցանց հետադարձ կապը,
- ✓ Պատասխանել ԳՊՀ-ին հասցեագրված էլեկտրոնային նամակներին,
- ✓ Պատրաստել համալսարանի մասին տեսանյութեր ու աուդիոնյութեր և ապահովել դրանց տարածումը,
- ✓ Կապեր հաստատել Հայաստանյան տպագիր եւ էլեկտրոնային լրատվության միջոցների հետ,
- ✓ Կազմակերպել մամուլի ասուլիսներ, ինչպես նաև թեմատիկ քննարկումներ լրատվամիջոցների աշխատակիցների հետ,

- ✓ Քանակական և որակական վերլուծության ենթարկել ԳՊՀ-ին վերաբերող բոլոր հրապարակումները, հեռուստատեսային և ռադիո նյութերը, լրատվական գործակալությունների և ինտերնետային պարբերականների անդրադարձերը,
- ✓ ԳՊՀ-ին վերաբերող տպագիր նյութերն արխիվացել և հրատարակվել «Մամուլի հրապարակումները ԳՊՀ-ի մասին» ալբոմ-ժողովածուին,
- ✓ Մշակել ԳՊՀ ձևաթղթերի նոր տարբերակներ և հրատարակել «ԳՊՀ ձևաթղթերի օգտագործման ուղեցույց»-ը,
- ✓ Պատրաստել ԳՊՀ ֆակուլտետներն ու ուսանողական կառույցները ներկայացնող բուկլետներ (հայերեն և անգլերեն),
- ✓ «Գավառի համալսարան» պաշտոնաթերթը շարունակել տպագրել պարբերաբար՝ անդրադառնալով ուսումնական, գիտակրթական, ուսանողական, մշակութային և մարզական ոլորտներին, ուսանողներին հուզող խնդիրներին, ինչպես նաև ավելացնել խորագրերը,
- ✓ Տեսանկարահանել և լուսանկարել ԳՊՀ-ում անցկացվող բոլոր միջոցառումները,
- ✓ Ամբողջ նյութը թվանշայնացնել և արխիվացվել է DVD սկավառակների վրա,
- ✓ Տեղեկատվական նյութեր եւ լուսանկարներ տրամադրել հանրապետական մամուլին,
- ✓ Անցկացնել ԳՊՀ արտաքին վարկանիշի հետազոտություն,
- ✓ Անցկացնել ԳՊՀ ներքին իմիջի հետազոտություն,
- ✓ ԳՊՀ ուսանողների շրջանում անցկացնել հարցում՝ մատուցվող կրթական ծրագրերի եւ դասավանդման որակի վերաբերյալ,
- ✓ Ապահովել ԳՊՀ ուսանողների մասնակցությունը Գեղարքունիքի մարզում անցկացվելիք մարդահամարին,
- ✓ Պատրաստել և տպագրել Գավառի պետական համալսարանի «Յեռախոսահամարների տեղեկատու»-ն, որտեղ կներկայացվեն ԳՊՀ բոլոր ֆակուլտետների ու տարբեր ստորաբաժանումների, ուսանողական կառույցների, ակումբների և պետական բուհերի հեռախոսահամարները: Տեղեկատուն տեղադրել նաև ԳՊՀ ինտերնետային կայքում՝ [www.gsu.am](http://www.gsu.am):
- ✓ Կատարել համալսարանի աշխատանքի արդյունավետության բարձրացմանը նպաստող այլ գործառույթներ:

## ԳՊՅ ԱՐՅԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

### Արհմիության նախագահ՝ Սիրունյան Լյովա Գուրգենի

Հաշվետու ժամանակահատվածում համալսարանի արհեստակցական կազմակերպությունը ձեռնարկել է իր գործառույթներից և խնդիրներից բխող մի շարք միջոցառումներ:

Գավառի պետական համալսարանում սահմանված կարգով ընդունվել և գործում է կոլեկտիվ պայմանագիրը, որը սահմանում է թե՛ գործատուի, և թե՛ աշխատակիցների իրավունքներն ու պարտականությունները:

Համալսարանի արհեստակցական կազմակերպությունը շարունակում է իր ակտիվ համագործակցությունը ՀՀ պետական բուհերի արհկոմիտեների հետ:

Համալսարանի ղեկավարության աջակցությամբ՝ հասարակական կազմակերպությունների, սոցիալական ուղղվածությամբ կառույցների հետ ձևավորվում են սոցիալական համագործակցության և գործընկերության հարաբերություններ:

Հաշվետու տարում մշտական ուշադրություն է դարձվել աշխատողների առողջության պահպանման, սոցիալական աջակցության, ինչպես նաև էքսկուրսիաների, մարզական և այլ միջոցառումների կազմակերպման խնդիրներին:

Որպես ֆինանսական աջակցություն՝ բուժման կամ այլ նպատակներով համալսարանի 68 աշխատակիցների արհկոմը տրամադրել է մեկ միլիոն ութսուն հազար դրամի օգնություն, իսկ համալսարանի աշխատակիցների կյանքի ապահովագրության համար հատկացվել է երկու հարյուր երեսունչորս հազար դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում համալսարանի արհմիութենական կազմակերպությունը և ուսանողական խորհուրդը իրականացրել են ուսանողական կյանքի ակտիվացմանը, ուսանողների հասարակական, մշակութային, ինտելեկտուալ զարգացմանն ու սոցիալական խնդիրների լուծման մի շարք ծրագրեր:

2010թ. գարնանը կազմակերպվել են ֆակուլտետային սպորտային միջոցառումներ, ինչպես նաև համահամալսարանական ֆուտբոլի և ձեռքի գնդակի առաջնություններ:

Արհմիությունը իր կանոնադրական գործառույթներին համապատասխան՝ այսուհետ ևս հետամուտ կլինի համալսարանի աշխատակիցներին և ուսանողներին աջակցության ցուցաբերմանը, իր առջև դրված խնդիրների պատշաճ լուծմանը:

## ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

### Ուսանողական խորհրդի նախագահ՝ Արմեն Վաչագանի Շուքուրյան

Ուսանողական խորհրդի 2009-2010 ուսումնական տարվա հաշվետվությունը և 2010-2011 ուսումնական տարվա գործունեության ուղղությունները

### Ուսանողական խորհրդի կազմը

Շուքուրյան Արմեն Վաչագանի, Նախագահ  
Խաչատրյան Հայկ Աշոտի, փոխնախագահ  
Տեր-Հովհաննիսյան Վաղինակ Սուրենի, քարտուղար

### Ֆակուլտետների ուսանողական խորհրդի նախագահներ

Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետ՝ Մանուկյան Նարինե Զիվանի  
Բնագիտական ֆակուլտետ՝ Մնացականյան Նորա Ահարոնի  
Տնտեսագիտական ֆակուլտետ՝ Խաչատրյան Սուսան Սպարտակի  
Բանասիրական ֆակուլտետ՝ Թովմասյան Սաթենիկ Ռաֆայելի

Գավառի պետական համալսարանի ուսանողական խորհուրդը համալսարանի ուսանողական ինքնակառավարման, սովորողներին միավորող, նրանց շահերը պաշտպանող, ընտրովի ներկայացուցչական մարմին է:

Հաշվետու ժամանակահատվածում ԳՊՀ ուսանողական խորհուրդն իրականացրել է ուսանողական խորհրդի կանոնադրությամբ նախատեսված իր գործառույթները՝ այն է՝ ներկայացրել է ուսանողների շահերը, ակտիվորեն մասնակցել բուհի կառավարման գործընթացին, օգնել սոցիալապես անապահով ուսանողներին, կազմակերպել ուսանողների ժամանցը, իրականացրել տարաբնույթ միջոցառումներ և այլն:

2010 թվականի հոկտեմբերի 1-ին Գավառի պետական համալսարանում առաջին անգամ բոլոր ուսանողների մասնակցությամբ տեղի ունեցան ուղղակի ընտրություններ, և նախագահ ընտրվեց Արմեն Վաչագանի Շուքուրյանը:

Հաշվետու ժամանակահատվածում ուսանողական խորհուրդն իրականացրել է ուսանողական կյանքի ակտիվացմանը, ուսանողների հասարակական, մշակութային, ինտելեկտուալ զարգացմանն ուղղված բազմաբովանդակ ծրագրեր:

Ակադեմիական տարվա սկզբին կազմակերպվել է «Բարի գալուստ» միջոցառումների շարքը՝ նվիրված առաջի կուրսի ուսանողներին:

Նույն թվականի հոկտեմբերին Գավառի պետական համալսարանի գրադարանին է նվիրաբերվել նոր գրականություն:

Հոկտեմբերին Հունանիտար մասնագիտությունների ֆակուլտետում ստեղծվեց Միքայել Նալբանդյանի անվան բանավեճի ակումբ:

Հոկտեմբերի 22-ին անցկացվեց միջոցառում՝ նվիրված Սահմանադրության ընդունման 15 ամյակին:

Հոկտեմբերին ֆակուլտետային ուսանողական խորհրդի նախագահների աջակցությամբ մի շարք մրցույթներ հայտարարվեցին՝ ուղղված ֆակուլտետների լոգոների մշակմանը, երգչախմբի ստեղծմանը, ԳՊՀ ինտերնետային կայքի փոփոխմանը, ԳՊՀ-ի հիմնի մշակմանը:

Նույն ամսվա ընթացքում հայտարարվեց սպորտային միամսյակ, որը ներառեց ֆուտբոլի, շաշկու, ձեռնամարտի, ձեռքի գնդակի և այլ սպորտաձևեր:

Հայտարարվեց «ԳՊՀ-ն իմ աչքերով» շարադրությունների մրցույթ, լավագույն շարադրությունը արժանացավ խրախուսական մրցանակի:

ԳՊՀ ուսանողական խորհուրդը կազմակերպել է բազմաթիվ սեմինարներ, քննարկումներ, կլոր սեղաններ:

2010թ. Նոյեմբերի 4-ին ՀՄՖ անցկացվեց սեմինար-քննարկում՝ նվիրված հոգեբանության արդի հիմնախնդիրներին:

2010թ. Նոյեմբերի 11-ից 14-ը ԳՊՀ իրավաբանական կլինիկայի մի խումբ ուսանողներ մասնակցեցին Ծաղկաձորում կազմակերպված դասընթացներին՝ «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները» թեմայով:

2010թ. նոյեմբերի 5-7 ուսանողական խորհրդի հինգ անդամներ Երևանում մասնակցեցին VivaCellMTS ընկերության կողմից կազմակերպված սեմինարներին և ստացան վկայագրեր:

2010թ. նոյեմբերի 13-ին ուսանողական խորհրդի անդամները մասնակցեցին Հայաստանի Ամերիկյան համալսարանի իրավաբանական ֆակուլտետում անցկացվող դատախազ մրցույթին:

2010-2011 ուսումնական տարում ուսանողական խորհուրդը հետամուտ է լինելու՝

1. Կապ հաստատել այլ բուհերի ուսանողական խորհուրդների հետ, համագործակցել ԵՊՀ-ի, ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղի, Երևանի ճարտարագիտական համալսարանի և այլ բուհերի ուսանողական կառույցների հետ:
2. Քայլեր ձեռնարկել, որոնք կնպաստեն ուսանողների և դասախոսների միջև արդյունավետ համագործակցությանը, կրթության որակի բարձրացմանը:
3. Նպաստել սովորողների սոցիալական վիճակի և կենցաղի բարելավմանը:

4. ԳՊՀ ուսանողներին ներգրավել Գեղարքունիքի մարզում 2011թ.տեղի ունենալիք մարդահամարի կազմակերպման գործընթացին:
5. Ակտիվորեն համագործակցել հեռակա ուսուցման բաժնի ուսանողների հետ:
6. Համագործակցել Գավառի մանկատան հետ:
7. Ակտիվորեն ներգրավել սովորողների կրթաթոշակների նշանակման, սոցիալական օգնության, արտալսարանային միջոցառումների կազմակերպման գործընթացներում:
8. Առաջարկություններ ներկայացնել՝ հիմնելու անվանական կրթաթոշակներ և մրցանակներ:
9. Աջակցել ուսումնական գործընթացի կատարելագործման, ուսանողների առաջադիմության բարձրացման գործնթացին:
10. Կազմակերպել հանդիպումներ անվանի մարդկանց հետ:
11. Այցելել Գեղարքունիքի մարզի դպրոցներ, անցկացնել սեմինար-քննարկումներ տարբեր թեմաներով, ներկայացնել ԳՊՀ մասնագիտությունները և մեր փորձը փոխանցել աշակերտներին:
12. Միջնորդել՝ պարզևատրելու հասարակական կյանքին ակտիվ մասնակցություն ունեցած համալսարանի ուսանողներին:
13. Մասնակցել սովորողների ակադեմիական առաջադիմության և կարգապահական հարցերի քննարկմանն ու որոշումների ընդունմանը:
14. Ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ կրթության նկատմամբ գիտակցական մոտեցում ապահովելու, ուսանողների ուսման առաջադիմությունը բարձրացնելու նպատակով:

## ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

### Ուսանողական գիտական ընկերության նախագահ՝ Գեղամ Լևիկի Աթեյան

Գավառի պետական համալսարանի ուսանողական գիտական ընկերությունը բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողներին միավորող կառույց է, որի նպատակն է նպաստել ուսանողության գիտական, ստեղծագործական, հոգևոր ու մասնագիտական զարգացմանը:

Բացի ԳՊՀ ուսանողական գիտական ընկերությունից, Համալսարանի առկա ուսուցման 4 ֆակուլտետներում գործում են ֆակուլտետային ուսանողական գիտական ընկերություններ: Նրանց շնորհիվ կազմակերպվել են ֆակուլտետային եւ միջֆակուլտետային գիտաժողովներ: Ֆակուլտետային ուսանողական գիտական ընկերության անդամները պարբերաբար մասնակցել են տարբեր համալսարանների կողմից կազմակերպված միջբուհական գիտաժողովների:

*2009-2010 ուսումնական տարում ուսանողական գիտական ընկերությունը իրականացրել է հետևյալ ծրագրերը՝*

2009թ. նոյեմբեր ամսին բնագիտական ֆակուլտետում տեղի է ունեցել ուսանողական գիտական կոնֆերանս «Իմ աշխարհը» խորագրով:

Նույն ամսին բնագիտական ֆակուլտետում տեղի ունեցավ ուսանողական գիտական կոնֆերանս՝ կենսաբանության, բնապահպանության և բնօգտագործման բաժնի ուսանողների մասնակցությամբ:

2010թ. մարտին Բնագիտական ֆակուլտետում տեղի ունեցավ ուսանողական գիտաժողով՝ նվիրված Հրանտ Բատիկյանի ծննդյան 100-ամյակին:

2010թ. ապրիլ ամսին գիտական զեկուցումներով հանդես եկան Բնագիտական ֆակուլտետում աշխարհագրության բաժնի, ապա ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա բաժնի մագիստրոսները:

Հաշվի առնելով համաշխարհային տնտեսական ճգնաժամի հարուցած խնդիրները՝ տնտեսագիտական ֆակուլտետում տեղի ունեցավ գիտաժողով «Ճգնաժամը և դրա ազդեցությունը ՀՀ Գեղարքունիքի մարզում» թեմայով: Ձեկուցումներ ներկայացրեցին ոչ միայն ուսանողներ, այլև հրավիրված մասնագետներ, բանկերի կառավարիչներ: Գիտաժողովի ընթացքում ընթացքում քննարկվեցին հետևյալ թեմաները.

- ✓ ճգնաժամի առաջացման պատճառները,
- ✓ ՀՀ կառավարության հակաճգնաժամային միջոցառումները,
- ✓ ճգնաժամի ազդեցությունը տեղական տնտեսության վրա,
- ✓ ճգնաժամի ազդեցությունը տնային տնտեսությունների վրա:



Կազմակերպվել են նաև քննարկումներ՝ հետևյալ թեմաներով.

- ✓ Ապահովագրական գործը ՀՀ-ում,
- ✓ Գործազրկությունը ՀՀ-ում,
- ✓ Պետության դրամավարկային քաղաքականությունը,
- ✓ Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման հեռանկարները ՀՀ – ում,
- ✓ Մարքեթինգյան ստրատեգիաներ. տեսակները, նշանակությունը,
- ✓ ՀՀ արժեթղթերի շուկայի հիմնախնդիրները,
- ✓ Գործարար հաղորդակցության դերը բիզնեսի զարգացման գործում,
- ✓ Արտաքին գովազդի նշանակությունը ձեռնարկատիրական գործունեության մեջ:

Բանասիրական ֆակուլտետում տեղի ունեցավ ուսանողական գիտական կոնֆերանս՝ նվիրված Ա. Պ. Չեխովի ծննդյան 150-ամյակին:

2010 թվականի մայիսի 14-ին Բանասիրական ֆակուլտետում անցկացվեց Վահան Տերյանի 125-ամյակին նվիրված ուսանողական գիտական կոնֆերանս:

Ուսանողական գիտական ընկերությունը ձեռնամուխ է եղել 2009-2010թթ լավագույն գիտական զեկուցումները տպագրելու գործին:

2010 թվականի նոյեմբերին ԳՊՀ ուսանողները մասնակցել են ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի կազմակերպած աշնանային միջբուհական գիտաժողովին:

2010 թվականի դեկտեմբեր ամսին ԳՊՀ-ում տեղի ունեցավ գիտաժողով՝ «Կտոր մը հայրենիք» խորագրով:

2010-2011 ուսումնական տարում նախատեսում ենք իրականացնել գիտաժողովներ, մի շարք սեմինար-քննարկումներ, բանավեճեր, «կլոր սեղաններ»:

Անհրաժեշտ ենք համարում ուսանողական գիտական ընկերության աշխատանքներում ընդգրկել նաև Հեռակա ուսուցման ֆակուլտետի ուսանողներին, ակտիվացնել համալսարանի և ֆակուլտետների ուսանողական գիտական ընկերությունների գործունեությունը:

## ԳՊՀ ԻՐԱՎԱՔԱՆԱԿԱՆ ԿԼԻՆԻԿԱ

Իրավաբանական կլինիկայի կոորդինատոր,

իրավաբանական գիտությունների թեկնածու՝ *Ապրոյան Արսեն Չրաչիկի*

Գավառի պետական համալսարանի իրավաբանական կլինիկան 7 տարի շարունակ ծավալում է իր գործունեությունը՝ նպատակ ունենալով բարձրացնել իրավաբան ուսանողների մասնագիտական գործնական գիտելիքները, ինչպես նաև Գեղարքունիքի մարզի բնակչությանը մատուցել անվճար իրավաբանական խորհրդատվություն:

Չաշվետու ժամանակահատվածը նշանավորվեց ԳՊՀ իրավաբանական կլինիկայի վեցամյա գործունեության ամփոփմամբ, որի կապակցությամբ դեկտեմբերի 10-ին կազմակերպվեց իրավաբան ուսանողների գիտաժողով՝ նվիրված «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի ընդունած Միջազգային Կոնվենցիայի 20-ամյակին: Ձեկույցներով հանդես եկան 10 իրավաբան ուսանողներ: Գիտաժողովին մասնակցեց Ամերիկյան իրավաբանների ընկերակցության հայաստանյան գրասենյակի տնօրեն Քրեգ Յուլստեդը, որը բարձր գնահատեց ուսանողների ակտիվ մասնակցությունը, զեկույցները և քննարկումները:

ԳՊՀ-ի իրավաբանական կլինիկայում ուսանողներն ուսումնասիրում են կանանց և երեխաների իրավունքներ, փաստաբանական գործունեության հմտություններ, սովորում են մասնագիտական էթիկայի նորմեր, ընդունում են հաճախորդների, սովորում են իրավաբանական գործերի կազմման և վարման կանոնները, կազմում հայցադիմումներ, նամակներ և այլ պաշտոնական փաստաթղթեր, ինչպես նաև ծանոթանում են իրավաբանական խորհրդատվության փուլերին, ինչը նախատեսված չէ ուսումնական պլաններում:

Արդեն երկրորդ տարին է, իրավաբանական կլինիկայում ներդրվել է նաև «Փախստականների իրավունքներ» դասընթացը, որի դասավադմանն աջակցություն է ցուցաբերում Փախստականների գծով ՄԱԿ-ի հանձնակատարի հայաստանյան գրասենյակը:

2009-2010 ուսումնական տարվա ընթացքում իրավաբանական կլինիկայի ուսանողները Չայաստանի Չանրապետության ընդհանուր իրավասության առաջին ատյանի և քաղաքացիական վերաքննիչ դատարաններում մասնակցել են դատաքննությունների՝ քննված գործերի մասին իրենց կարծիքը ներկայացնելով իրավաբանական կլինիկայի «Փաստաբանական հմտություններ» դասընթացին:

Չաշվետու ժամանակահատվածում իրավաբանական կլինիկայում խորացված ուսուցում են անցել 14 ուսանողներ, որոնք 138 քաղաքացիների տրամադրել են անվճար իրավաբանական խորհրդատվություն:

2009 թվականի հոկտեմբեր – 2010թ. մարտ ամիսներին Իրավաբանական կլինիկայի ուսանողները «Շրջիկ կլինիկա» ծրագրի շրջանակներում հանդիպումներ են կազմակերպել նաև մարզի 10 գյուղական համայնքներում, տեղի բնակիչներին հուզող բազմաթիվ իրավաբանական խնդիրների մասին տվել պարզաբանումներ:

ԳՊՀ իրավաբանական կլինիկայի բոլոր ուսանողները Ծաղկաձորում մասնակցել են Ամերիկյան իրավաբանների ընկերակցության կողմից կազմակերպված «Աշնանային դպրոց 2009»-ին և «Գարնանային դպրոց 2010»-ին՝ ստանալով մասնակցության վկայականներ, հավաստագրեր:

«Իրավունք բոլորի համար» ծրագրի շրջանակներում իրավաբանական կլինիկան 2009-2010 ուս. տարում «Աշխատանքային իրավունք» և «Ընտանեկան իրավունք» թեմաներով կազմակերպել է բազմաթիվ քննարկումներ, սեմինարներ, որոնց մասնակցել են շուրջ 220 քաղաքացիներ:

Գավառի պետական համալսարանի իրավաբանական կլինիկան փորձում է լուծել կարևոր խնդիր՝ օժանդակելով սոցիալապես անապահով քաղաքացիներին, անվճար խորհրդատվություն մատուցելով առաջին հերթին կանանց և երեխաներին, ինչպես նաև անվճարունակ անձանց: Կարևոր է, որ իրավաբանական կլինիկան փորձում է սովորողների տեսական գիտելիքները հարստացնել պրակտիկ հմտություններով՝ ուսանողներին տալով անհրաժեշտ իմացություն՝ գործնական աշխատանքով զբաղվելու համար:

Իրավաբանական կլինիկայում դասավանդում են ժամանակակից դասավանդման մեթոդներին տիրապետող և տարբեր ծրագրերով արտերկրում վերապատրաստում անցած դասախոսներ:

2009թ. նոյեմբեր ամսին իրավաբանական կլինիկայի կոորդինատոր, դասախոս Ա. Յ. Ապրոյանը վերապատրաստում է անցել Ռուսաստանի Դաշնության Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետում՝ «Փախստականների իրավունքների պաշտպանության հիմնախնդիրները» թեմայով, որը կազմակերպել էր ՄԱԿ-ի Փախստականների գործերով հանձնակատարի կենտրոնական գրասենյակը: Ձեռք բերած հմտություններն ու գիտելիքները Ա. Ապրոյանը փոխանցել է կլինիկայի ուսանողներին:

2010-2011 ուսումնական տարում ԳՊՀ իրավագիտության բաժնում ներդրվել է մագիստրոսական հատուկ դասընթաց՝ սոցիալական հատուկ խմբերի իրավունքների պաշտպանության հիմնախնդիրների վերաբերյալ:

Հաշվետու ժամանակաշրջանում Իրավաբանական կլինիկայում տարբեր թեմաներով սեմինարներ են անցկացրել ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատան, ՄԱԿ-ի գրասենյակի և այլ կազմակերպությունների փորձառու իրավաբաններ և փորձագետներ:

Իրավաբանական կլինիկայի դասախոսները մասնակցել են նաև ABA/ROLI Չայաստանյան գրասենյակի, ՄԱԿ-ի Փախստականների գործերով հանձնակատարի հայաստանյան գրասենյակի և այլ կազմակերպությունների կողմից կազմակերպված սեմինար-քննարկումների, որակավորման բարձրացման դասընթացների:

Իրավաբանական կլինիկան շարունակում է համագործակցել Չայաստանի իրավաբանական կլինիկաների, Գավառի մանկատան հետ և այս տարի ակտիվորեն մասնակցում է «Չայաստանի իրավաբանական կլինիկական կրթության» ասոցիացիայի կայացման գործին:

## ՏՆՏԵՍԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

### *Տնտեսական գծով պրոռեկտոր, իրավաբանական գիտությունների թեկնածու՝ Արսեն Հրաչիկի Ապրոյան*

2009թ. սեպտեմբերին հաստատվեց Համալսարանի տնտեսական գործունեության տարեկան պլանը, որը ներառում էր 2009-2010 ուս. տարվա համար նախատեսված գործողությունների ժամանակացույցը: Ըստ այդմ, կազմակերպվել է ավելի քան 22 աշխատանքային հանդիպում տնտեսատեխնիկական աշխատակիցների հետ, քննարկվել են աշխատանքային գործունեության հիմնական ուղղությունները, ծագած խնդիրները, դրանց լուծման միջոցները: Ներբուհական տնտեսությունը կազմակերպելիս՝ օգտագործվել է ինչպես համալսարանի տնտեսական աշխատակիցների, այնպես էլ այլ կազմակերպությունների մասնագիտացված աշխատակիցների ներուժը:

Հստակեցվել են համալսարանի տնտեսատեխնիկական աշխատակազմի հաստիքները, կատարվել է գործառույթների տարանջատում հիսուներեք տնտեսատեխնիկական աշխատակիցների միջև, ճշտագրվել են նրանց պարտականությունները, կարևորվել է Համալսարանի տնտեսական աշխատակիցների կողմից իրականացվող աշխատանքների կատարման որակը: Իրականացվել են պարբերական ստուգումներ, գնահատումներ, բացահայտվել են թերությունները և միջոցներ ձեռնարկվել դրանց վերացման ուղղությամբ:

2010թ. փետրվարից գործում է ԳՊՀ գիտխորհրդի կողմից հաստատված «ԳՊՀ տնտեսատեխնիկական անձնակազմի գործունեության կանոնակարգը»: Ըստ կանոնակարգի՝ համալսարանի տնտեսատեխնիկական անձնակազմը բուհի կառուցվածքային ստորաբաժանումներից է, որը համալսարանի գործունեության արդյունավետությունը բարձրացնելու և որակյալ կրթական գործընթաց ապահովելու նպատակով միավորում է համալսարանի տեխնիկական, անվտանգության ապահովման, տնտեսական, սպասարկման ոլորտների աշխատակիցներին:

Համալսարանի տնտեսատեխնիկական անձնակազմի բաժիններն են՝

✓ տեխնիկական և անվտանգության ապահովման բաժին (համակարգչային տեխնիկայի շահագործման մասնագետներ, ճարտարագետ, էլեկտրիկ, հյուսն, հնոցապաններ, սանտեխնիկ, բուժքույր և այլն),

✓ տնտեսական բաժին (պահեստապետ, գնորդ, պարետներ, տնտեսուհիներ, բանվոր),

✓ սպասարկման բաժին (հսկիչներ, վարորդներ):

Աշխատանքների արդյունավետ կազմակերպման նպատակով յուրաքանչյուր աշխատակցին առաջադրվող խնդիրները պարզաբանվել են, կորոդինացվել է նրանց կոլեկտիվ աշխատանքը:

Բոլոր աշխատակիցների աշխատավարձերը վճարվել են ժամանակին, կիրառվել են աշխատակիցների նյութական խրախուսման միջոցներ:

2010թ. Ամանորի և Սուրբ Ծննդյան տոնի առթիվ դրամական պարգևատրումներ են ստացել տնտեսական աշխատակազմի բոլոր անդամները: Դրամական պարգևատրման ձևով խրախուսվել են նաև նրանք, ովքեր մասնակցել են համալսարանում իրականացված մասնակի վերանորոգման աշխատանքներին:

*Չաշվետու ժամականահատվածում`*

Չհմնանորոգվել են ԳՊՀ թանգարանը:

Ամառային արձակուրդների ընթացքում ծավալված աշխատանքների արդյունքում անցկացվել են ԳՊՀ 2-րդ և 3-րդ մասնաշենքերի նոր կոյուղագծեր:

Մասնակի վերանորոգման աշխատանքներ են իրականացվել ԳՊՀ բոլոր մասնաշենքերում: Վերանորոգվել են ամբիոնները, ինչպես նաև հանրակացարանի մի քանի սենյակ և միջանցքը, տեղադրվել են եվրոպատուհաններ և դռներ:

Չաշվետու տարվա ընթացքում համակարգչային տեխնիկայի շահագործման (ՉՏՇ) բաժնի կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները.

կատարվել է ամբողջ համակարգչային տեխնիկայի պրոֆիլակտիկ ծրագրային սպասարկում (հակավիրուսային, օֆիսային և հարակից այլ ծրագրերի տեղադրում և թարմացում),

VivaCell MTS ընկերության աջակցությամբ և ՉՏՇ բաժնի մասնակցությամբ միավորվել է երեք մասնաշենքերի համակարգչային ցանցը: Կապված որոշ սկզբունքային փոփոխությունների հետ` կատարվել է ընդհանուր ցանցի կառուցվածքի վերանայում, և ներկայումս ընթանում են աշխատանքներ երեք մասնաշենքերի համակարգչային ցանցերը համատեղելի դարձնելու ուղղությամբ,

ՉՏՇ բաժնի կողմից կատարվել են նաև ընթացիկ այլ աշխատանքներ` տպիչների լիցքավորում և անսարքությունների վերացում, համակարգիչների ծրագրային և մեխանիկական խտանների վերացում և կարգավորում:

Չաշվետու ժամանակաշրջանում ձեռք են բերվել տնտեսական, տեխնիկական, գրեմական այն բոլոր ապրանքներն ու նյութերը, որոնք անհրաժեշտ են համալսարանի գործունեության բոլոր ոլորտների սպասարկման և որակյալ կրթական գործընթաց ապահովելու համար:

## 2009-2010 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՀԻՇՎՐԺԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՑ

01.09.2009թ. ԵՐԴՎՈՒՄ ԵՄ...

Գավառի պետական համալսարանում հանդիսավորությամբ նշվեց գիտելիքի և դպրության օրը: ԳՊՀ-ն 17-րդ անգամ իր դռներն էր բացել բազմաթիվ ուսանողների առջև: Օրն առավել խորհրդանշական էր առաջին կուրսեցիների համար, ովքեր, հաղթահարելով ընդունելության քննությունների փորձությունը, մուտք գործեցին համալսարան: Բարձր գնահատական ստացած առաջին կուրսեցիներին հանձնվեց Գավառ քաղաքի նշանավոր մարդկանց նվիրված «Նոր Բայազետցիներ» գիրքը: Այնուհետև տեղի ունեցավ առաջին կուրսեցիների երդման հանդիսավոր արարողությունը: Նրանք երդվեցին լավ սովորել, դառնալ օրինակելի ուսանողներ, հավատարիմ լինել ազգային արժեքներին: Ջանգի դողանջների ներքո ուսանողները մուտք գործեցին համալսարան:

08.09.2009թ. ՎԵՒՌ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԻՏԱԼԱԿԱՆ ՄՈՂԵԼԸ

ԳՊՀ Հրաչյա Աճառյանի անվան լսարանում տեղի ունեցավ սեմինար՝ «Վճիռների կայացման տեսություն» թեմայով, որին մասնակցում էին Տնտեսագիտական և Բնագիտական ֆակուլտետների տարբեր կուրսերի ուսանողներ: Սեմինարը վարում էր Իտալիայի Տուլուզիայի համալսարանի պրոֆեսոր Անտոնինո Սկարելլին, ով մասնակիցներին ներկայացրեց վճռի կայացման բանակցային մեթոդները՝ դրանք հիմնավորելով իրական կյանքից բերված օրինակներով: Տեղի ունեցավ երկուստեք հետաքրքիր քննարկում:

02.09.2009-07.09.2009թ. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

ԳՊՀ վարչատնտեսական գծով պրոռեկտոր Արսեն Ապրոյանը Թբիլիսիում մասնակցեց «ERASMUS MUNDUS. Արտաքին համագործակցության պատուհան» ծրագրին մասնակից բուհերի ներկայացուցիչների հերթական աշխատանքային հանդիպմանը:

Հանդիպմանը մասնակցում էին Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի, Հունաստանի, Պորտուգալիայի, Իտալիայի, Ֆրանսիայի, Լատվիայի, Բուլղարիայի և Նիդեռլանդների բուհերի ներկայացուցիչներ: Ձեռք բերվեց պայմանավորվածություն 2009-2010 ուսումնական տարվա համագործակցության ծրագրի վերաբերյալ:

09.10.2009թ. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ԴԱՐՎԻՆԻՆ

Չարլզ Դարվինի ծննդյան 200 և «Տեսակների ծագումը» գրքի լույսընծայման 150-ամյակների կապակցությամբ ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի Կենսաբանություն, բնապահպանություն և բնօգտագործում բաժինների ուսանողները կազմակերպեցին

գիտաժողով: Ապագա կենսաբաններն ու բնապահպանները հանդես եկան զեկուցումներով, ապա ծավալվեց քննարկում:

**01.10.2009-30.10.2009թ ՈՂՋՈՒՅՆ ԱՌԱՋԻՆ ԿՈՒՐՍԵՑԻՆԵՐԻՆ**

ԳՊՀ բոլոր ֆակուլտետների ավագ կուրսերի ուսանողները հոկտեմբեր ամսվա ընթացքում «Բարի գալուստ, սիրելի՛ առաջին կուրսեցիներ» խորագրով կազմակերպեցին միջոցառումներ՝ նվիրված առաջին կուրսեցիներին: Միջոցառման կազմակերպիչները գրական, երաժշտական ու հումորային կատարումներով նորեկ համալսարանականներին ներկայացրեցին բուհի անցուդարձը, տվեցին ուսանելի խորհուրդներ:

**14.10.2009թ. ՕՐԵՆՔԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ**

ԳՊՀ իրավաբանական կլինիկայում տեղի ունեցավ հանդիպում ՄԱԿ-ի Փախստականների գործերով հանձնակատար, Հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչ Հաննե-Մեիկ Գրոլի հետ: Ուսանողներին ներկայացվեցին «Փախստականների մասին» ՀՀ օրենքի փոփոխությունները: Ուսանողները բավականին հետաքրքրված էին և քննարկմանն ակտիվ մասնակցություն ցուցաբերեցին:

**22.10.2009թ. ՇԵՔՍՊԻՐԸ՝ ՀԱՎԵՐԺԻ ԵԱՄՓՈՐԴ**

ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի ուսխորհուրդը կազմակերպել էր միջոցառում՝ նվիրված անգլիացի խոշորագույն գրող, դրամատուրգ Վիլյամ Շեքսպիրին: Միջոցառումն սկսվեց Շեքսպիրի սոնետների ասումներով: Այնուհետև ուսանողները ներկայացրեցին նրա գլուխգործոց ստեղծագործությունները: Ընթերցողների անմիջական «հյուրերն» էին դարձել Համլետը, Մակբեթը, Լիր արքան, Օթելոն:

**28.10.2009թ. ԲԱՆԱՎԻՃՈՒՄ ԵՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԸ**

ԳՊՀ-ում տեղի ունեցավ բանավեճ՝ նվիրված հասարակության՝ մարդու վրա ունեցած դաստիարակիչ ազդեցության հարցերին: Քննարկմանը մասնակցում էին Իրավագիտության, Հասարակական գիտությունների և Պատմության ամբիոնների դասախոսներն ու ուսանողները: Բանավեճող կողմերը եկան այն եզրակացության, որ սոցիալական միջավայրը՝ ընտանիքը ուսումնական հաստատությունները մեծապես ազդում են մարդու դաստիարակության վրա:

**30.10.2009թ. ՑԱՆՑԵՐԻ ՆԱԽԱԳԾՄԱՆ ՄՈՂԵԼ՝ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ**

ԳՊՀ Բնագիտական ֆակուլտետում տեղի ունեցավ սեմինար պարապմունք «Հաշվողական համակարգերի ցանցերի նախագծում (Computer Network)» թեմայով: Սեմինարը վարում էին «ՎիվաՍել-ՄՏՍ»-ի Համակարգերի նախագծման, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի աշխատակիցներ Էլլա Տիտովան և Արմեն Դավթյանը: Սեմինարին մասնակցում էին Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա բաժնի տարբեր կուրսերի ուսանողներ: Սեմինարավարներն ուսանողներին ներկայացրեցին ցանցերի կազմակերպման հիմնական տեխնոլոգիան, առավել մանրամասնությամբ բացատրվեց ցանցերի նախագծման



OSI (open system interconnection) մոդելը, նրա մակարդակները և դրանցից յուրաքանչյուրի կատարած ֆունկցիան:

07.11.2009թ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԶՄՖ-ՈՒՄ

ԳՊՀ Զումանիտար մասնագիտությունների ֆակուլտետում տեղի ունեցան ֆակուլտետի ուսխորհրդի նախագահի ընտրություններ: Ընտրելու հնարավորություն ունեին վերոհիշյալ ֆակուլտետի տարբեր բաժիններից ու կուրսերից ընտրված ուսանողները, ովքեր համարվում էին ՈՒՄ պատվիրակներ: Ընտրությունն անցկացվեց գաղտնի քվեարկությամբ: Զումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահ ընտրվեց Նարինե Մանուկյանը:

12.11.2009թ. ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԴԱՏԱՐԱՆ

ԳՊՀ Զումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի «Քրեական դատավարություն և քրեական իրավունք» առարկայի դասախոս Սկրտիչ Մուրադյանի նախաձեռնությամբ Իրավագիտություն բաժնի երրորդ կուրսի ուսանողներն այցելեցին Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան: Այցելության նպատակն էր ուսանողներին ծանոթացնել դատական մամնի գործունեության առանձնահատկություններին: Նրանց հնարավորություն ընձեռնվեց նաև ներկա գտնվելու դատավարությանը:

14.11.2009թ. ԶԻՆ ԲԱՅԱԶԵՏԻ ԽՈՍՈՒՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Բնագիտական ֆակուլտետի կենսաբանություն, բնապահպանություն և բնօգտագործում բաժինների մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողները կենսաբանության և էկոլոգիայի ամբիոնի վարիչ, Ռուսաստանի Դաշնության Բնական գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, պրոֆեսոր Արմեն Սիմոնյանի նախաձեռնությամբ այցելեցին Գեղարքունիքի մարզի երկրագիտական թանգարան:

Ուսանողները թանգարանում նոր ու հետաքրքիր տեղեկություններ իմացան Զին Բայազետի պատմության, մարդկանց, կենցաղի վերաբերյալ:

18.11.2009թ. ՍԵՄԻՆԱՐ` ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ԱՐԴԻՎԿԱՆ ԹԵՄԱՅՈՎ

ԳՊՀ-ում «Քաղաքացիական երկխոսություն և գործնական քայլեր» ծրագրի շրջանակներում անցկացվեց Զայ-թուրքական հարաբերությունների պատմական և ժամանակակից ասպեկտների մասին սեմինար, որին մասնակցում էին ԳՊՀ տարբեր բաժինների ուսանողներ: Քննարկմանը հրավիրվել էր թուրքագետ Արտակ Շաքարյանը:

19.11.2009թ. ՍԵԾ ԼՈՒՄԱՎՈՐՉԻ 200-ԱՄՅԱԿԸ ՆՇՎԵՑ ԳՊՀ-ՈՒՄ

ԳՊՀ-ում տեղի ունեցավ միջոցառում` նվիրված Խաչատուր Աբովյանի ծննդյան 200-ամյակին: Միջոցառումը կազմակերպել էին Զումանիտար մասնագիտությունների և բանասիրական ֆակուլտետների ուսանողները:

Զումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դասախոս, ԳՊՀ պրոֆեսոր Վարչամ Ավետյանը ներկայացրեց մանրամասներ Խաչատուր Աբովյանի առեղծվածային անհետացման

վերաբերյալ և փաստեց, որ Աբովյանի կյանքը և կորուստը պարուրված է գաղտնիության քողով: Ուսանողները հանդես եկան զեկուցումներով:

22.11.2009թ. «ԻՄ ԱՇԽԱՐՀ»

ԳՊՀ բնագիտական ֆակուլտետում տեղի ունեցավ «Իմ աշխարհը» խորագրով միջոցառում: Այն կազմակերպվել էր Աշխարհագրության ամբիոնի դասախոս, աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արամայիս Ավագյանի նախաձեռնությամբ:

Միջոցառմանը մասնակցում էին աշխարհագրական բաժնի բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողները:

25.11.2009թ. ԼԱՎ Է ՄԵԿ ԱՆԳԱՄ ՏԵՍԵԼ, ՔԱՆ ՀԱՐՅՈՒՐ ԱՆԳԱՄ ԼՍԵԼ

Getting Involved «Լինենք միասին, համախմբվենք» Կովկասյան հանրապետությունների երիտասարդների ակտիվացման և համագործակցության ձևավորման ծրագրի շրջանակներում «Եվրասիա» համագործակցության հիմնադրամի աջակցությամբ տնտեսագիտական ֆակուլտետի Բիզնեսի կազմակերպում բաժնի 3-րդ և 4-րդ կուրսերի համար կազմակերպվել էր արտադրական պրակտիկա Հայաստանի երկու խոշոր ընկերություններում՝ «Աշտարակ կաթ» ՓԲԸ-ում և «Թամարա» ՍՊԸ-ում:

Ուսանողներին առանձին ներկայացրեցին «Աշտարակ կաթ» և «Թամարա» ընկերությունների տնտեսական ցուցանիշները: Ուսանողները կատարեցին երկու ընկերությունների արտադրական գործընթացների համեմատական վերլուծություն:

19.12.2009թ. ՀՈՔԵԼՅԱՆԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ՍԱՄՎԵԼ ՔՈՉԱՐՅԱՆՑԻՆ

ԳՊՀ-ում տեղի ունեցավ 12-րդ հոբեյանական գիտաժողովը՝ նվիրված մեծանուն ճարտարագետ, միջուկային զենքի գլխավոր կոնստրուկտոր, սոցիալական աշխատանքի կրկնակի հերոս, Լենինյան և պետական մրցանակի դափնեկիր, ԽՍՀՄ գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սամվել Քոչարյանցի ծննդյան 100-ամյակին:

ԳՊՀ բնագիտական ֆակուլտետում բացվեց Սամվել Քոչարյանցի անվան լսարան:

20.12.2009թ. ՄԵՆՔ ԿԱՐՈՂ ԵՆՔ ԱՎԵԼԻ ԼԱՎԸ ԴԱՐՉՆԵԼ ԱՇԽԱՐՀ

ԳՊՀ-ում տեղի ունեցավ սեմինար՝ «ՄԱԿ-ի ազգային կամավորներ» ծրագրի շրջանակներում:

Ծրագրի նպատակն էր ներգրավել կամավորներ տարբեր կազմակերպությունների և գործակալությունների հետ համագործակցելու համար: Տեղեկանալով պայմաններին՝ երիտասարդները հնարավորություն են ունենում ներգրավվել ՄԱԿ-ի մասնագիտական գործակալություններում, ինչպես նաև այլ կազմակերպություններում՝ որպես ազգային կամավորներ:

26.12.2009թ. «ԳԱՎԱՌԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ԹԵՐԹԸ 5 ՏԱՐԵԿԱՆ Է

Տեղի ունեցավ ԳՊՀ գիտական խորհրդի տարեվերջյան ընդլայնված նիստ, որը նվիրված էր «Գավառի համալսարան» թերթի լույսընծայման 5-րդ տարեդարձին: Նիստը հորեյանական էր բոլոր առումներով. ԳՊՀ գիտական խորհրդի անդամների միաձայն քվեարկությամբ որոշվեց Հրանտ Բատիկյանի ծննդյան 100-ամյակի կապակցությամբ Բնագիտական ֆակուլտետի լսարաններից մեկը անվանակոչել անվանի բայագետուհի անունով:

«Գավառի համալսարան» թերթի հիմնադիր խմբագիր Լևոն Ազրոյանին շնորհվեց պատվոգիր՝ համալսարանական թերթի ստեղծման գործում մեծ ավանդ ունենալու համար:

06.02.2010թ. ԳՊՀ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

Տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի կառավարման բարձրագույն մարմնի՝ խորհրդի նիստ: Նիստում ռեկտոր Ռ. Հակոբյանը ներկայացրեց բուհի նախորդ տարվա գործունեության հաշվետվությունը: Նա նշեց, որ համալսարանի բոլոր կառուցվածքային ստորաբաժանումները ծավալել են փոխհամաձայնեցված և արդյունավետ աշխատանք: 2008-2009 ուսումնական տարին համալսարանի համար եղել է հետևողական աշխատանքի, կրթական բարեփոխումների շարունակական իրականացման, գործունեության նոր ձևերի ու մեթոդների որոնման ու ներդրման ժամանակաշրջան: Խորհուրդը հաստատեց հաշվետվությունը և համալսարանի տարեկան աշխատանքը գնահատեց բավարար:

11.02.2010թ. ԳՊՀ-Ն ՋԵՐՄՈՐԵՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՎԵՐԱԴԱՐՁՈՂՆԵՐԻՆ  
ԵՎ ԲԱՐԻ ՃԱՆԱԴԱՐՅ ՄԱՂԹԵՑ ՄԵԿՆՈՂՆԵՐԻՆ

Տեղի ունեցավ հանդիպում «ERASMUS MUNDUS. Արտաքին համագործակցության պատուհան» ծրագրի շրջանակներում Եվրոպայից վերադարձած և Եվրոպա մեկնել պատրաստվող մասնակիցների հետ: Եվրոպայից վերադարձած ուսանողները պատմեցին իրենց ուսումնառության մասին: Իսկ մեկնել պատրաստվողները համակ ուշադրությամբ լսում էին նրանց: ԳՊՀ ռեկտորատի անդամները «Բարի գալուստ» ասացին վերադարձած ուսանողներին և «Բարի ճանապարհ»՝ Եվրոպայում ուսանելու մեկնող արժանավորներին:

19.02.2010թ. ԲԱՑԱՅԱՅՏԵՆՔ ՆԱՏՕ-Ն

ԳՊՀ Աճառյան լսարանում կազմակերպվել էր սեմինար քննարկում «Բացահայտենք ՆԱՏՕ-ն» թեմայով, որին մասնակցում էին ԳՊՀ-ի տարբեր բաժինների ուսանողներ: Սեմինարը կազմակերպել էր «Եվրոպական ինտեգրացիա» հասարակական կազմակերպությունը:

Սեմինարի կազմակերպիչները համալսարանականներին ներկայացրեցին ՆԱՏՕ-ում ՀՀ մշտական ներկայացուցչի պարզաբանումները ՆԱՏՕ-Հայաստան փոխհարաբերությունների վերաբերյալ:

01.03.2010թ. ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ՝ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄ

Գեղարքունիքի մարզպետարանում տեղի ունեցավ կլոր սեղան-քննարկում «Մասնագիտական կողմնորոշում» խորագրով: Քննարկմանը մասնակցում էին Գավառի պետական համալսարանի վարչական կազմի ներկայացուցիչներ, դպրոցների տնօրեններ,

ավագ դպրոցի շրջանավարտ-դիմորդներ, ուսանողներ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Կարևորելով աշակերտներին ճիշտ մասնագիտական կողմնորոշման, կրթության որակի և կրթական գործընթացի արդյունավետության բարձրացման խնդիրները՝ համալսարանականները պարզաբանեցին կրթական համակարգի փոփոխությունները, առաջարկեցին դպրոց-բուհ համագործակցության ուղիներ:

#### 11.03.2010թ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

ԳՊՀ հարկի տակ էին հավաքվել Գավառում գործող հասարակական կազմակերպությունները: Այդ օրը տեղի ունեցավ «Զարգացման կապեր» խորագրով «տոնավաճառ», որին մասնակցում էին Գավառի պետական համալսարանը, Գեղարքունիքի մարզի առևտրա-արդյունաբերական պալատը, «Կարիտաս», «ՇԱՀ» կազմակերպությունները, Զինիշյան հիշատակի հիմնադրամը և Խաղաղության կորպուսը:

Կազմակերպությունները ներկայացրեցին իրենց գործունեությունը և առաջարկեցին համագործակցության հնարավոր ծրագրեր:

#### 13.03.2010թ. ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐ՝ ԼԱՎԱԳՈՒՅՆՆԵՐԻՆ

ԳՊՀ-ում կայացավ «Բարեպաշտ սերունդ» հիմնադրամի հերթական կրթաշնորհի բաց մրցույթը: Կրթաթոշակի հավակնորդները նախատեսված ժամկետում ներկայացրել էին «Հայ ժողովրդի հարատևման գրավականները» թեմայով աշխատանքներ: Ժյուրիի անդամների ու ներկա ուսանողների քվեարկության արդյունքում հաղթող ճանաչվեցին տնտեսագիտական ֆակուլտետի Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի Ռուզաննա Ասատրյանը և բանասիրական ֆակուլտետի Հայոց լեզու եւ գրականություն բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի Մարինե Տոնոյանը: Մնացած երեք մասնակիցներ ստացան ուսման վարձավճարի զեղչ:

#### 14.03.2010թ. ԱՆԱՂԱՐՏ ՊԱՅԵՆՔ ՄԱՅՐԵՆԻՆ

2010 թվականը ՀՀ Սփյուռքի նախարարության կողմից հայտարարված էր մայրենի լեզվի տարի: Տարին համալսարանում նշվեց բազմաթիվ միջոցառումներով, մասնավորապես, Բանասիրական ֆակուլտետում տեղի ունեցավ մայրենի լեզվին նվիրված ցերեկույթ: Միջոցառումը կազմակերպել էին բանասիրական ֆակուլտետի ուսանողական խորհուրդը և հայոց լեզվի ամբիոնը: Հայոց լեզու և գրականություն բաժնի 3-րդ և 4-րդ կուրսերի ուսանողները ներկայացրեցին հայոց լեզվի զարգացման բոլոր շրջանների, հայերենի բարբառներին վերաբերող բովանդակալից ու հետաքրքրական տեղեկություններ, որոնք զուգակցվում էին հայ գրողների՝ հայոց լեզվին նվիրված գեղեցիկ բանաստեղծություններով, հայ նշանավոր լեզվաբաններ Հրաչյա Աճառյանի, Գևորգ Զահուկյանի, Գրիգոր Ղափանցյանի և Մանուկ Աբեղյանի կյանքի և գործունեության մասին զեկուցումներով: Միջոցառումը եզրափակվեց ուսանողների՝ մայրենին անաղարտ պահելու երդման արարողությամբ:

#### 18.03.2010թ. ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶՆՎՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

ԳՊՀ գիտական խորհրդի ընդլայնված նիստում տեղի ունեցավ «Ակադեմիական ազնվության հայեցակարգի» նախագծի քննարկումը: Այս փաստաթղթում ամրագրված են

դասախոսների, ուսանողների և համալսարանի աշխատակազմի մյուս անդամների ակադեմիական ազնվության կանոնները:

ԳՊՀ ռեկտոր Ռուզաննա Չակոբյանը ներկայացրեց համալսարանի գործունեության հիմնական սկզբունքները՝ անընդունելի համարելով անազնվությունն ու կաշառակերությունը, կարևորելով ազնվությունն ու սոցիալական արդարությունը: «Չակակոռուպցիոն ուսուցումը Չայաստանում» ծրագրի փորձագետ Աշոտ Չակոբյանը կարևորեց «Ակադեմիական ազնվության հայեցակարգի» հիմնադրույթները և նշեց, որ ԳՊՀ-ն առաջին բուհն է, որ ընդունել է այսօրինակ փաստաթուղթ:

19.03.2010թ. ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ

ԳՊՀ-ում ավանդույթ է հորելյանական գիտաժողովների անցկացումը: Բնագիտական ֆակուլտետում մարտի 19-ին տեղի ունեցավ գիտաժողով՝ նվիրված վաստակավոր կենսաբան և մանկավարժ, գիտության վաստակավոր գործիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Յրանտ Բատիկյանի ծննդյան 100-ամյակին: Գիտաժողովը կրում էր «Գեները մեր կյանքում» խորագիրը:

Կենսաբանություն ու Բնապահպանություն և բնօգտագործում բաժինների դասախոսները և բարձր կուրսերի ուսանողները հանդես եկան զեկուցումներով, որոնք վերաբերում էին տարբեր հատկանիշները բնորոշող գեների ժառանգմանը, գենային ու քրոմոսոմային հիվանդություններին, կլոնավորմանը և դրա հեռանկարներին: Գիտաժողովը շատ հազեցած էր: Զեկուցումներին զուգահեռ ցուցադրվեցին զանազան տեսանյութեր և լուսանկարներ, տեղի ունեցավ հետաքրքիր քննարկում:

07.04.2010թ. ՈՒՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ԳԱՎԱՌԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ

ԳՊՀ հանրության հետ կապերի և լրատվության բաժինը Սուրբ Մարիամ Աստվածածնի ավետման տոնին՝ ապրիլի 7-ին կազմակերպեց ուխտագնացություն դեպի Գավառի Սուրբ Աստվածածին եկեղեցի: Ուխտագնացությանը մասնակցում էին ԳՊՀ տարբեր ֆակուլտետների ուսանողներ, դասախոսներ, աշխատակիցներ:

Գեղարքունյաց թեմի առաջնորդ Տեր Մարկոս եպիսկոպոս Չովհաննիսյանը ողջունեց ուսանողների նախաձեռնությունը, շնորհավորեց հայոց տիկնանց և աղջիկների տոնը՝ կարևորելով կանանց դերը ազգապահպանության և ապագա սերունդների հոգեկերտվածքի ձևավորման կարևոր գործում: Այնուհետև կատարվեց համալսարանականների օրհնության կարգ: Թեմի և ԳՊՀ միջև ձեռք բերվեց պայմանավորվածություն՝ հետագա համատեղ ծրագրերի վերաբերյալ:

07.04.2010թ. ՑՈՒՑԱՅԱՆ ԴԵՍ-ՎԱՃԱՌՔ

Ռուսաց լեզու և գրականություն բաժնի ուսանողները կազմակերպել էին ցուցահանդես-վաճառք: Ներկայացված էին ուսանողների ձեռքի աշխատանքներ, որոնց վաճառքից ստացված հասույթով նյութական օգնություն տրամադրվեց սոցիալապես անապահով ուսանողներին:

10.04.2010թ. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ «ԱՄԵՆԱ-ԱՄԵՆԱ» ԴԱՍԱԽՈՍՆԵՐԸ

ԳՊՀ-ում տեղի ունեցավ մրցույթ՝ բանասիրական ֆակուլտետի առաջին կուրսի ուսանողների միջև: Ստուգվեցին նրանց թե՛ ընդհանուր, աշխարհայացքային, թե՛

մասնագիտական գիտելիքները: Միջոցառման ավարտին հայտարարվեցին ամենահետաքրքիր, ամենաժպտերես և ամենա-ամենա անվանակարգերում հաղթող ճանաչված դասախոսների անունները: Ամենահետաքրքիր դասախոս էր ճանաչվել ակադեմիական քաղաքականության վարչության պետ Ալինա Ղարիբյանը, ամենաժպտերեսը՝ բանասիրական ֆակուլտետի դեկան Վիկտոր Կատվալյանը, իսկ ամենա-ամենան՝ արտասահմանյան գրականություն առարկայի դասախոս Արա Առաքելյանը:

Հարցունը բանասիրական ֆակուլտետում կատարվել էր նախօրոք:

16.04.2010-18.04.2010թ. ՍԵՄԻՆԱՐ - ՔՆՆԱՐԿՈՒՄ ԾԱՂԿԱԶՈՐՈՒՄ

«Երիտասարդների՝ վաղվա առաջնորդների ուսուցում» ծրագրի շրջանակներում Ծաղկաձորում կազմակերպված դասընթացներին մասնակցեցին Գավառի պետական համալսարանի Իրավաբանական կլինիկայի մի խումբ ուսանողներ:

Երկօրյա սեմինարի ընթացքում Գավառի պետական և այլ համալսարաններում սովորող ապագա իրավաբանները քննարկումներ ծավալեցին «Գենդերային իրավահավասարության հիմնախնդիրները և դրանց կարգավորումը», «Ընտրելու իրավունքը՝ որպես կառավարման գործընթացին ներգրավվելու եղանակ», «Արդար դատաքննության իրավունք» եւ «Խոսքի ու հավաքների ազատությունը» թեմաների շուրջ:

17.04.2010թ. ԾԱՌԱՏՈՒՄ ԳՊՀ ԲԱԿՈՒՄ

Համաշխարհային հայկական կոնգրեսի, ՀՀ Սփյուռքի նախարարության և Ռուսաստանի հայերի միության նախաձեռնությունը՝ Մեծ եղեռնի 100-րդ տարելիցի առթիվ Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում տնկել մեկուկես միլիոն ծառ՝ ոգևորությամբ ընդունվեց Գավառի պետական համալսարանում: Ազգանվեր ծրագրին սիրով իրենց մասնակցությունը ցուցաբերեցին Գավառի պետական համալսարանի վարչակազմն ու պրոֆեսորադասախոսական կազմը՝ հստակ գիտակցելով երիտասարդ սերնդի շրջանում հայրենասիրական դաստիարակության ու էկոլոգիապես մաքուր բնություն ունենալու անհրաժեշտությունը: ԳՊՀ հարակից տարածքներում Գավառի պետական համալսարանի ուսանողներն ու դասախոսները տնկեցին ավելի քան 150 ծառ:

21.04.2010թ. ԲԱՐԵՐԱՐՆԵՐԸ ԳՊՀ-ՈՒՄ

Գավառի պետական համալսարան էին այցելել Իվա և Ջեկ Մեծորյանները՝ համալսարանի թանգարանի հիմնադրման գործին աջակցություն ցուցաբերելու նպատակով: Նրանք ունեցան հանդիպումներ ուսանողների և վարչական անձնակազմի հետ, պատասխանեցին նրանց հետաքրքրող հարցերին:

23.04.2010թ. «ԱՐՆԱԾՈՐ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ»

Մեծ եղեռնի 95-ամյակի նախօրեին, ներկայացնելով Արշիլ Գորկու ողբերգական կյանքի դրվագները և եղեռնի ահասարսուռ մանրամասները՝ Մանկավարժություն և մեթոդիկա բաժնի երկրորդ կուրսի ուսանողները, ԳՊՀ դասախոս Թամարա Կոտոլկյանի գլխավորությամբ, կազմակերպել էին միջոցառում՝ նվիրված եղեռնի զոհերի հիշատակին և Արշիլ Գորկու կյանքին ու գործունեությանը: Ուսանողների շուրթերով ևս մեկ անգամ դատապարտվեց

ցեղասպանությունը և խոսվեց Արշիլ Գորկու ստեղծագործությունների մասին՝ մի արվեստագետի, ում համար կյանքում եղեռնը մնաց որպես «Արնածոր հիշողություն»:

24.04.2010թ. ԱՅՑ ԵՂԵՌՆԻ ԶՈՐԵՐԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

ԳՊՀ պրոֆեսորադասախոսական, վարչական անձնակազմի ներկայացուցիչներն ու ուսանողները երթ կազմակերպեցին դեպի Մեծ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված հուշարձան: Ձևավորված ավանդույթի համաձայն՝ ուսանողները երթը շարունակեցին դեպի Եկեղեցի՝ մասնակցելով մոմավառությանը: Համալսարանի ողջ կոլեկտիվն ու ուսանողները ստորագրեցին եղեռնը դատապարտող և Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման կոչի ներքո: Կոչը հանձնվեց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն Հայկ Դեմոյանին:

27.04.2010թ. ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴՊԻՄ

ԳՊՀ ուսանողները ՀՄՖ դեկան Համլետ Ղաջոյանի գլխավորությամբ ուղևորվեցին Ծիծեռնակաբերդ՝ մասնակցելու Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի Ամնար կրակի շուրջ դրված ծաղիկների վերամշակման աշխատանքներին:

Մասնակիցների կողմից ծաղիկներից խնամքով առանձնացվեցին ցողունները՝ հետագայում Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի այգու համար պարարտանյութ ստանալու նպատակով, իսկ ծաղկի թերթիկները հատուկ պայմաններում կչորացվեն՝ դառնալով վերամշակված թուղթ, որից կպատրաստվեն հատուկ բացիկ-շնորհակալագրեր և կուղարկվեն Հայոց ցեղասպանությունն ընդունած պետությունների ղեկավարներին:

01.05.2010թ. ՀԱՂԹԱՆԱԿԻ 65-ԱՄՅԱԿԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱԲ

ԵՊՀ Ռուսական կենտրոնի նախաձեռնությամբ Երևանի պետական համալսարանի մի խումբ ուսանողներ մայիսի 1-ին այցելեցին Գավառի պետական համալսարան: Այցելության նպատակն էր ԳՊՀ-ի ուսանողների հետ համատեղ ներկայացնել Մեծ հայրենական պատերազմին վերաբերող ստեղծագործություններ: Ցերեկույթի ավարտին կազմակերպվեց պատերազմը դատապարտող և համամարդկային օրենքներ քարոզող կինոդիտում:

05.05.2010թ. ԼԵԶՈՒՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՄԵԹՈՂՆԵՐՈՎ

Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանում մայիսի 5-ին Գավառի պետական և Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանների, Վանաձորի Հ. Թումանյանի անվան և Գյումրու Ս. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտների միջև կնքվեց ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում լեզվաբանական կրթության իրականացման և լեզվաքաղաքականության մշակման համագործակցության Կոնսորցիումի ստեղծման վերաբերյալ համաձայնագիր:

07.05.2010թ. ԱԼԵՔՍԱՆԴՐ ԴՎՈՐԿԻՆԸ ԳՊՀ-ՈՒՄ

ԳՊՀ այցելեց Ռուսաստանի Դաշնության կրոնների և աղանդների ուսումնասիրման կենտրոնների ասոցիացիայի նախագահ, աստվածաբանության թեկնածու, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալեքսանդր Լեոնիդովիչ Դվորկինը: Պրոֆեսորը

դասախոսություն կարդաց աղանդների կործանարար հետևանքների մասին, պատասխանեց ուսանողներին հուզող հարցերին: Տուցադրվեց «Կորած հոգիներ» ֆիլմը, որում ներկայացվում էին Ռուսաստանի տարածքում առավել տարածում գտած աղանդները: Կազմակերպվեց ֆիլմի քննարկում, ներկայացվեցին ժամանակակից տոտալիտար աղանդները, ինչպես նաև դրանց հակազդելու հիմնական ուղիները:

#### ՄԱՅԻՍԸ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՏԵՐՅԱՆԱԿԱՆ ԷՐ

Գավառի պետական համալսարանը մայիս ամսվա ընթացքում լցված էր տերյանական շնչով. տարբեր ֆակուլտետներում ուսանողական գիտական ընկերության և ուսանողական խորհրդի կողմից կազմակերպվել էին 20-րդ դարի հայ գրական մտքի խոշորագույն ներկայացուցիչ, ականավոր բանաստեղծ Վահան Տերյանի ծննդյան 125-ամյակին նվիրված գիտաժողովներ և ցերեկույթներ:

#### 14.05.2010թ.ՆՈՐ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԳՊՀ ռեկտոր Ռուզաննա Հակոբյանն ընդունեց «Արեւելյան Եվրոպայի կենտրոն» ոչ կառավարական կազմակերպության խորհրդի անդամներ Բերտ Վան Հիրվիլդին եւ Սարժուա Վան Կույկին, «Օրանժ գործարարության զարգացում» ընկերության գլխավոր տնօրեն Քեյս ղեն Տոուլինգին եւ Հոլանդիայի «Դուետ» հայկական միջնաշախմատային հիմնադրամի ղեկավար Ռ. Թորոսյանին: ԳՊՀ հյուրերը ներկայացրեցին իրենց կազմակերպության գործունեության հիմնական ուղղությունները: Ողջունելով ԳՊՀ-ն իրենց ծրագրերում ընդգրկելու հյուրերի նախաձեռնությունը՝ ռեկտորը պատրաստակամություն հայտնեց առաջիկայում սկսել ակտիվ համագործակցություն ուսանողների փոխանակման և այլ ուղղություններով:

#### 21.05.2010թ. ԿՈՌՈՒՊՏԻՈՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳՊՀ-ն հյուրընկալել էր Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնի տնօրեն Հեղինե Մանասյանին: Սեմինարավարը ներկայացրեց կոռուպցիայի վերաբերյալ 2009-2010թթ. Հայաստանի ողջ տարածքում իրականացված հետազոտությունների արդյունքները, պատասխանեց ուսանողներին հուզող հարցերին: Սեմինարի մասնակիցները հպարտությամբ փաստեցին ԳՊՀ-ի՝ որպես հակակոռուպցիոն շարժման ջատագով բուհում «Ակադեմիկան ազնվության հայեցակարգի» ընդունման և կիրառման փաստը:

#### 21.05.2010թ. Ա.Պ. ՉԵԽՈՎԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎ

Բանասիրական ֆակուլտետում անցկացվեց գիտաժողով՝ նվիրված ռուս մեծ գրող Անտոն Պավլովիչ Չեխովի ծննդյան 150-ամյակին: Միջոցառումը կազմակերպել էին ռուսաց լեզվի և գրականության ամբիոնը և բանասիրական ֆակուլտետի ուսխորհուրդը: Ձեկուցումներով հանդես եկան դասախոսներն ու ուսանողները, ովքեր ներկայացրեցին Չեխովի և հայ գրականության կապը, Չեխովի «Բալի այգին» պիեսի գաղափարական բովանդակությունը, մեծ գրողի ստեղծագործության առանձնահատկությունները:

#### 29.06.2010թ. ՏԵՍԱԿԱՍՈՒՐՁ



Գավառի պետական համալսարանի Աճառյան լսարանում տեղի ունեցավ տեսախորհրդաժողով, որի ընթացքում ԳՊՀ ուսանողներն Անգլիայի, Լատվիայի եւ Ռումինիայի մասնակիցների հետ օն-լայն կապով քննարկեցին Հյուսիսատլանտյան դաշինքի էությանն ու պատմական զարգացմանը, ՆԱՏՕ-ում որոշումների կայացման կարգին ու կառուցակարգերին, ՆԱՏՕ-ի փոխակերպմանն ու արդի արտաքին հարաբերություններում նրա դերին, դաշինքի խաղաղաշինական և խաղաղապահ գործունեությանը, Հայաստան-ՆԱՏՕ գործակցությանը, ինչպես նաև Հայկական ատլանտյան ասոցիացիայի գործունեությանը վերաբերող հարցեր: Տեսախորհրդաժողովի նպատակն էր բաց և հետաքրքիր քննարկման միջոցով բարձրացնել ԳՊՀ ուսանողների իրազեկության մակարդակը՝ հավաքական անվտանգության ապահովման հյուսիսատլանտյան խոշորագույն կառույցի վերաբերյալ:

05.07.2010թ. ԳՊՀ-Ն ԿՅԱՆՔ ՃԱՆԱՊԱՐՅԵՑ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ 13-ՐԴ ՍԵՐՈՒՆԴԸ

ԳՊՀ մեծ դահլիճում տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի շրջանավարտների դիպլոմների հանձման հանդիսավոր արարողությունը: Հայաստանի Հանրապետության ամենաերիտասարդ պետական բուհը կյանք ճանապարհեց իր 13-րդ շրջանավարտներին: Հանդիսավոր արարողության ընթացքում պարային ու երաժշտական կատարումներով հանդես եկան ԳՊՀ շնորհալի ուսանողները: Նույն օրը համալսարանը բարի ճանապարհ մաղթեց իր առաջին մագիստրոս շրջանավարտներին՝ նրանց շնորհելով նաև Եվրամիության կողմից նախատեսված դիպլոմի հավելվածներ՝ հայերեն և անգլերեն լեզուներով:

Միջոցառման վերջում տեղի ունեցավ ԳՊՀ մագիստրոսների երդման հանդիսավոր արարողությունը:

05.08.2010-25.08.2010թ. ԳՊՀ ՌԻՍԱՆՈՂՆԵՐԸ՝ ՋՈԿԱՏԱՎԱՐՆԵՐ

Եղեգնաձորի Հերմոն գյուղի մոտ գտնվող Սիրանույշ ճամբարում ՀՕՖ-ի CASP ծրագրի կողմից կազմակերպվել էր ամառային ճամբար: Գավառի պետական համալսարանի Ֆինանսներ բաժնի 3-րդ կուրսի ուսանող Նարեկ Կնյազյանը, Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա բաժնի 4-րդ կուրսի ուսանող Վարազդատ Ավետիսյանը և Բիզնեսի կազմակերպում բաժնի 4-րդ կուրսի ուսանող Էդվարդ Ղազարյանը: Նրանք ոչ միայն հետաքրքիր և բովանդակալից անցկացրին ժամանակը, այլև իրենց դրսևորեցին որպես հմուտ կազմակերպիչներ: Մեր ուսանողները չեն մոռանա 2010 թվականի ամառային արձակուրդի օրերը: Եվ ընդհանրապես, չեն մոռանա իրենց համալսարանական անմոռանալի տարիները...

## ՀԱՎԵԼՎԱԾ

### ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐՆԵՐԸ

<i>Ազգանուն, անուն, հայրանուն</i>	<i>ծառայողական 0-264</i>
<b>ԳՊՀ-ի կառավարման խորհրդի նախագահ</b> Հակոբյան Հրանտ Խաչատուրի	<b>2-38-03</b> <b>2-57-75</b>
<b>ԳՊՀ ռեկտոր</b> Հակոբյան Ռուզաննա Խաչիկի	<b>2-57-75</b> <b>2-55-75</b> <b>0-10-28-20-75</b>
<b>Ուսումնագիտական գծով պրոռեկտոր</b> Կուտուզյան Նելլի Ալբերտի	<b>3-05-05</b>
<b>Տնտեսական գծով պրոռեկտոր</b> Ապրոյան Արսեն Հրաչիկի	<b>2-55-01</b>
<b>Բանասիրական ֆակուլտետի դեկան</b> Կատվայան Վիկտոր Լիպարիտի	<b>2-45-24</b>
<b>Բնագիտական ֆակուլտետի դեկան</b> Ավագյան Մարտին Պատվականի	<b>2-62-50</b>
<b>Հումանիտար ֆակուլտետի դեկան</b> Ղաջոյան Համլետ Գիրշայի	<b>2-70-09</b>
<b>Տնտեսագիտական ֆակուլտետի դեկան</b> Ամիրխանյան Սամվել Գրիգորի	<b>2-36-51</b>
<b>Հեռակա ուսուցման ֆակուլտետի դեկանատ</b>	<b>2-84-54</b>
<b>Ակադեմիական քաղաքականության վարչություն</b> Ղարիբյան Ալինա Ամբիկի	<b>2-61-15</b>
<b>Ուսանողական խորհրդի նախագահ</b> Շուքուրյան Արմեն Վաչագանի	<b>2-70-09</b>
<b>Բանասիրական ֆակուլտետի դեկանի տեղակալ</b> Բաղայան Մարինե Միքայելի	<b>2-45-24</b>
<b>Տնտեսագիտական ֆակուլտետի դեկանի տեղակալ</b> Հերզնյան Մարիամ Նորիկի	<b>2-36-51</b>
<b>Հումանիտար մասն. ֆակուլտետի դեկանի տեղակալ</b> Գևորգյան Գոհար Վոլոդյայի	<b>2-70-09</b>
<b>Բնագիտական ֆակուլտետի դեկանի տեղակալ</b> Գարեյան Մելանյա Վոլոդյայի	<b>2-84-36</b>
<b>Գլխավոր հաշվապահ</b> Մուրադյան Գուրգեն Գևորգի	<b>2-42-43</b>
<b>Ռեկտորի օգնական</b> Մայիլյան Անուշ Տոլիկի	<b>2-57-75</b>
<b>Հատուկ բաժնի պետ</b> Սաֆարյան Խաչատուր Ժորայի	<b>2-81-02</b>
<b>Արհմիության նախագահ</b> Սիրունյան Լյովա Գուրգենի	<b>2-81-02</b>
<b>Ավագ պարետ</b> Զաքոյան Տարիել Հրաչիկի	<b>2-84-41</b>

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ծրագրեր, զարգացումներ, արդյունքներ .....	3
Ընդհանուր տեղեկություններ համալսարանի մասին .....	8
Միջազգային համագործակցություն .....	31
Դասախոսների գործողումներ .....	36
Ուսումնագիտական աշխատանքներ .....	37
Բանասիրական ֆակուլտետ .....	51
Բնագիտական ֆակուլտետ.....	66
Չունանիտար մասնագիտությունների ֆակուլտետ.....	86
Տնտեսագիտական ֆակուլտետ.....	100
Չեռակա ուսուցման ֆակուլտետ.....	115
Ակադեմիական քաղաքականության վարչություն .....	122
ԳՊՀ գրադարան.....	127
ԳՊՀ հանրության հետ կապերի և լրատվության բաժին.....	129
ԳՊՀ արհեստակցական կազմակերպություն .....	138
Ուսանողական խորհուրդ .....	139
Ուսանողական գիտական ընկերություն .....	142
ԳՊՀ Իրավաբանական կլինիկա .....	144
Տնտեսատեխնիկական գործունեություն.....	147
ԳՊՀ հիշարժան միջոցառումներից .....	149
Հավելված.....	160

## ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

*2009-2010 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ*

**ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

Տպագրված է «Օրենք և իրականություն»  
ՍՊԸ տպարանում:  
Երևան, Աճեմյան (Անդրֆեդերացիա)18,  
հեռ.57-29-90